



Բ. ՏԱՐԻ 1963

ՅՈՒՆԻՍ

7

باكين
مجلة شهرية ، أدبية وفنية علمية
مدير المسؤول
السيد أوتين كارتيك قزائجيان

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

բւգին
ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐԲԱՍՅՈՒ

ՎԱՐԻՋ ԽԱՐԱԳԻՐ
Կ. ՍԱՍՈՒՆԻ
ԽԱՐԱԳԻՐՆԵՐ
ԵՂ. ՊՅՅԱՅԵԱՆ, Պ. ՍԵԱՊԵԱՆ
ԽԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ
ԱՆԴԱՄԱՆԵՐ
Յ. ԳԵՂԱՐԴ
Տ. ՈՍԿՈՒՆԻ
Բ. ՓԱՓԱՋԵԱՆ
Վ. ՕՇԱԿԱՆ

ԽԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ
ED. BOYADJIAN
B. P. 1153, BEYROUTH - LIBAN
Հեռագրային քիւ 256078

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

ԵՂ. ՊՅՅԱՅԵԱՆ
ՄԵԼԳՈՆ ԷՊԼԻՂԱԹԵԱՆ
Գ. ԳԵՂԱԿ
Հ. ԶԱՐԴԱՐԵԱՆ
Վ. ԳԵՈՐԳԵԱՆ
Բ. ԿՈՍՆԵԱՆ
Ռ. ԳԱԶԱՆՃԵԱՆ
Ա. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ
Ա. ՍԱՐԵՆՅ
Ն. ՎԻՐԱՊԵԱՆ
ԶՕՀՐԱՊ ԳԻՐԷՋԵԱՆ
Լ. ՄԿՐՏՋԵԱՆ
Բ. ՓԱՓԱՋԵԱՆ
Բ. Փ.
ՄԻՇԵԼ ՊՈՆԷ
Յ. Գ.
Մ. Պ.
Մ. Զ.
Բ. ԹԱՇԵԱՆ
Լ. Կ. ԼԻԻԼԷՋԵԱՆ

Բազմ

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

Բ. ՅԱՐԻ, ԹԻՒ 7

ՅՈՒՆԻՍԿՈՒՍ, 1962

ՊԵՏՐՈՒԹ

Կ Ի Ն Ը

Գրեց՝ ԵՂ. ՊՕՅԱՃԵԱՆ

Մարդը կ'ըսէ.

– Արեւը չէ՛ Արարչութեան խնայքը,
Լուսինը չէ՛, աստղերը չեն, կապոյտը չէ՛,
Ծաղիկը չէ՛:
Գոյները չեն, բայրերը չեն,
Կշռութաւոր խօսքերը չեն:
Կի՞նն ու անոր մէջ եղող ամհունն են,
Անհո՛ւն անհո՛ւն տարբեր բա՛նն են:
Ին՞քն ու իր անձին պայծառ արեւն են,
Ին՞քն ու իր սրտին բո՛յր բո՛յր գիշերն են,
Ին՞քն ու իր սրտին ցալուն աստղերն են,
Ին՞քն ու իր սիրտը հրդեհ կրակն են:

Մարդը կ'ըսէ.

– Վիճերը չե՛ն խորանկը,
Ովկիանը չէ՛ խորանկը,
Սփինգսը չէ՛ խորանկը:
Ու մահը չէ՛,
Ունայնը չէ՛,
Յանճրժը չէ՛:

Խորունկ խորունկ, կնոջ ա՛ջն է խորունկը,
 Խորունկ խորունկ, կնոջ սի՛րսն է խորունկը,
 Կնոջ սէրը,
 Կնոջ հոգին,
 Ու հոգիին բառը թռվի՛չ, բառն առաջին:



Մարդը կ'ըսէ.
 – Երկինքը չէ՛ դրախտը,
 Գարունը չէ՛ դրախտը,
 Դրամը չէ՛ դրախտը.
 Պարտը չէ, ռսումը չէ,
 Ազօթֆնեքուն մեծ յա՛յսը չէ:
 Կինն ու ժպիտն են,
 Կինն ու խոստումն են,
 Կինն ու քեզ այրող իր մարմնին ջերմն են.
 Իր քեզի տուած չըսուող պահերն են:
 Իր համբայներն են,
 Առաջաստներն են,
 Գո՛ց պարտեղներն են,
 Լուսէ միջոցներն են:

2.

Մարդը կ'ըսէ, կ'ըսէ, կ'ըսէ.
 – Կրակը չէ՛ դժոխքը,
 Սեւ ցուրտը չէ՛ դժոխքը:
 Ու բանտը չէ,
 Ու սովը չէ,
 Կռիւր չէ,
 Ժանտախտը չէ:
 Մարդը կ'ըսէ, կ'ըսէ, կ'ըսէ.
 – Ոնիւրը չէ՛ դժոխքը,
 Կարօտին մէջ ոսկո՛ր ոսկո՛ր հալիլը չէ՛ դժոխքը,
 Կասկածներէն ուղե՛ղ ուղե՛ղ հասնիլը չէ՛ դժոխքը,
 Փառքերում դէմ ուրիշներում՝
 Թռնի՛ր կրակ, թռնի՛ր կրակ, թռնի՛ր կրակ
 Նախանձը չէ՛ դժոխքը:
 Ու խեղճը չէ,
 Մանկութենէն ի ծերութիւն,
 Ծե՛ր ծերութիւն՝
 Զարիֆի դէմ չըննացող, չըմբափող,
 Անթաքք հսկող
 Ու արտասուող:
 Կինն է՛ դժոխքը, կինն է՛ կրակը,
 Կինն է՛ սեւ ցուրտը, կինն է՛ գէշ բանտը,

Ամբողջ կարօտը,
 Մայրագոյն սովը,
 Մարմինը բեւ բեւ, ու հոգին բեւ բեւ
 Յերացնող ներկան:
 Կի՞նն է որ կ'այրէ՝ թոյն կրակներով,
 Կրակով վերջին,
 Բացարձակ հուրով:
 Կի՞նն է կասկածին ամպը մահացու,
 Կայծակն ամէն ժամ՝
 Մեզ ոչնչացնող շեղբ շեղբ նախանձին,
 Թո՛ւն թո՛ւն նախանձին:

3.

Դի՛ւնը... –
 հոսքան, ու խնջոյք, ու դժոխք:
 Արեւային, աստուածային մէկ հաս ծաղիկ,
 Անհամար փուշ.
 Ժպիտ, ժանիք,
 Լոյս ու չարիք:
 Գարուն հեռու, – ամբողջական, յաւերժական, անմիւթական՝
 Ուր ձգտեցանք, ուր կը ձգտինք, պիտի ձգտին ուր սերունդներ.
 Ձմեռ՝ մօտիկ, – թանձր, իրական, անեզրական՝
 Ուր մինչեւ մահ, – տերեւ տեղոյն –, մենք կը մօտենք, պիտի մտնենք
 միշտ սերունդներ:

✱

Կի՛ւնը... –
 Հի՛ւն ասուքիւն, հի՛ն մոգութիւն,
 Հեփիաթներու հին թռչնութիւն:
 Երկինքներէն, հեռու հեռու աստուածներէն
 Աշխարհն ի վար մեզի բջած
 Թիւ մէկ երազ, թիւ մէկ անուրջ,
 Թիւ մէկ ցնարք:
 Երկրագունդի բարեյդի հողէն, ջուրէն, ստուերներէն,
 Շշուկներէն՝
 Օր մը հեռու – սպիտակ օր – ծնած, եկած,
 Մեզ օրօրող, մեզ կեանքին մէջ շարունակող,
 Տանջող, տանջուող,
 Անհո՛ւն պատրանք,
 Արե՛ւ պատրանք,
 Հոգի՛ պատրանք:
 Եւք սկիզբի ու վախճանի,
 Գեղեցկութեան ու կործանման
 Տարօրինակ նախապատճառ:



Բեւեռ է երկու, իրարու ոսոխ, –
 Զար ու անբարոյ՝ գայլն անվերջ փամոզ,
 Զայն ի գո՛ւր փամոզ:
 Դեռ օր օր, ժամ ժամ՝
 Զայն իր ոտքին տակ ըստըրուկ ընող.
 Աղեղ յօնփերուն
 Ու կիզի՛չ կիզի՛չ թարթիչներուն տակ՝
 Ա՛յ ոչնչացնող:
 Եւ կին է կամ մայր՝ ցմահ վեհացնող, ցմահ սրբացնող,
 Իր սիրածներէն – քէկուզ քէ ոչինչ –՝
 Աստուածնե՛ր կերտող:
 Անգուք է ան տերթ, նման ճիւղի,
 Եւ մերթ ամբողջ խիզէ՛ քարիճով յղի:



Այր մարդերու աչքէն անդին,
 Ժպիտներէն ու քառերէն անդի՛ն, անդի՛ն,
 Կը մոնչեն հարի՛ւր հրէշ, հարի՛ւր զագան.
 Կաթսա՛յ կաթսա՛յ կ'եռան կիրճեր,
 Կ'եռայ ռազեղ, կ'եռայ արիւն:
 Կը ճարակին հրեղէն բոյս, հրեղէն խոտ, ծառ ու ծաղիկ՝
 Կատաղութեան բորբ նախիրներ:
 Ոչ ոք կրնայ մեր մարմինի, մեր արիւնի, մեր հոգիի
 հա՛ր խորունկին մէջ աղուորցող
 Նկարը տալ, քո՛ւն նկարը սիրուած կնոջ:
 Ոչ ոք կրնայ պատկերացնել՝
 Թէ կին ի՛նչպէս մեզ մեր տաշտին մէջ կը շաղէ,
 Հերոսութեան ու վատութեան գոյգ խմորով:



Կիմը զմեզ կը մղէ միշտ մեղքմ քանէ սաստկագոյնի,
 Դէպի արուեստ, հերոսութիւն կամ խենթութիւն,
 Սպանութի՛ւն:
 Կը մղէ մեզ շէպի նոր լոյս, կը քարճրացնէ վսեմութեան նոր ալիքի,
 Կամ մթաթեան կը գլորէ խոր վայրէջքի:
 Կը հանէ մեզ մահ տաղտուկէն,
 Քուրջի կտոր առօրեայէն,
 Ազգաւ պանէն:
 Կը ստեղծէ մերթ ոսկի բոպէ, կրակ բոպէ,
 Արիւն բոպէ:



Մարտ կը մղենք մենք ներս եւ դուրս, կնոջ համար,
 Մագիլներով անթիւ կիրքի,
 Ճարտարութեան:
 Կը խօսինք բառ՝ բորբ, բացարձակ,
 Կը գրենք գիրք, կը ցատկենք բնով,
 Կ'այրենք աչքեր, խոզուքիւն,
 Սիրտե՛ր կ'այրենք՝ իբրեւ համեմ:
 Կ'երգենք, կ'երգենք,
 Գաշքն ձայնի ու նուագի կը սուգենք խոր մենք ծովուն մէջ
 Մեզ ունկնդրող բազմութիւններ՝
 Վասն կնոջ, վասն սիրոյ:
 Կնոջական անուններու կեցած դիմաց՝
 Կ'ըլլանք տաք փուռ ու բարի հաց:
 Եւ կամ կ'ըլլանք՝
 Մենք գրամոյն, մենք գծամոյն, մենք հնչամոյն, ամբողջամոյն,
 Արիւնամոյն:
 Կը բռնենք սուր, կը բռնենք խաչ,
 Մարմարի դէմ՝ մո՛ւրթ բարձրախոհ:
 Սիրտ մը մարդու անվերական ու տեղական՝
 Մերք ալ նայիս՝ կ'անցնի անդին իր օտարանէն,
 Կը ծառայի՛, կ'ուտի՛, կ'աճի՛,
 Սիրտ մը կ'ըլլայ դիւցազնական,
 Կամ վատութեան խորհրդանիշ ընդհանրական:



Կի՛նը... -
 Կը ծնի մեզ.
 Ամէն անգամ երբ գինի տեսնենք,
 Կը ծնի ան մեզ վերստին, մեր մօրմէն ետք:
 Կը ծնի մեզ արուեստագէտ,
 Մտեր կամ հերոս,
 Արքայ, ծառայ,
 Զսի, գոհագործ:



Թիւերը չեն խորհուրդը,
 Բառերը չեն խորհուրդը,
 Իմաստը չէ,
 Ու լուսնեան աշխարհափայլ գմբուխը չէ:
 Կինն է խորհուրդը,
 Այր մարդու կեանքին դիմաց շողացող
 Մեծ արարչութեան այդ մեծ գմբուխը,
 Քաղցրագոյն քիւր, ու շփեղաշող իմաստուն բառը:

ՄԵԼԳՈՆ ԷՊԼԻՂԱԹԵԱՆ

«ԿՐՆԱՐ ԻՄ ԶԱԽԱԿՍ ԸԼԼԱՆ...»

Քոթիկները կ'ստան հեռաձայնը:
Կը լսե՛ս: Վայրկեան մը կը յամենաս
անկողնիդ մէջ, շտեյլու կը զարնես... թե-
րեւս երազ է:

Բայց ո՛չ, երազ չէ:
Վա՛յ անհամբեր, վա՛յ անպատկառ,
հասկցա՛նք, վայրկեան մը չկենա՞ս:
Ո՞վ է մտիկ ընողը: Անխղճօրէն,
ճի՛շդ ուղեղիդ մէջ կը զանգահարէ:
Գի՛շեր է, յոգնա՛ծ ես, անկողի՞նն
ես, տրամադրութիւն չունի՞ս... Փոյթ
չէ, կի՛ր: Ելի՛ր պատասխանէ՛: Ելի՛ր
վազէ՛: Ելի՛ր, հիւանդը կը սպասէ...

Այս անգամ հեռաձայնողը հիւանդ
չէ:

– Այլօ՛, Արմէնն է, շնանչա՞ր: Կ'ե-
րեւի արթնցուցի: Եղբա՛յր, մարդ այս
ժամուն կը քնանա՞յ: Պատմէ՛ նայինք՝
ինչպէ՛ս են գործերդ, առողջութիւնդ,
նալդ, ֆէֆդ:

– Շունչանորդի, որպիսութիւնս հար-
ցընելո՛ւ համար կէս գիշերին կ'արթըն-
ցընես:

– Մարդ ըլլալի՛ք շունիս, ա՛րջ էի՛ր
եւ ա՛րջ պիտի մնաս. յոյս չկա՛յ: Անց-
նի՛նք: Խնդրանք մը ունիմ...

– Նորէ՛ն դրամ կ'ուզես...

– Մի՛ վախնար, ընդհակառակը՝ քե-
զի դրամ պիտի շահեցնեմ: Երէկ ինքնա-
շարժի արկած մը անցուցի, ոտքս վիրա-
ւորուեցաւ եւ հիւանդանոց փոխադրուե-
ցայ:

– Ո՞ր հիւանդանոցը:

– Մեր հիւանդանոցը: Վարի յարկն
եմ, Մայրանոցը:

– Անմի՛ջապէս կու գամ:

– Մի՛ մտահոգուիր, վէրքս խորունկ
չէ՛ր եւ ծերուկ խելափառը արդէն կարեց:
Ինծի համար չեմ հեռաձայնիւր, այլ տի-
կին Ռուսէին համար:

– Ո՞վ է տիկին Ռուսէն:

– Զե՛ս ճանչնար: Ծրանասցի բարե-
կամի մը կրնն է: Այսօր–վաղը ծննդաբե-
րութիւն պիտի ունենար: Գի՛շ ասա՛յ հի-
ւանդանոց հասաւ: Կազալով անկողինէս
ելայ, քնեցի: Կասկած չկայ, պէտք է
սեզարիէն գործողութիւն մը ընել, պըզ-
տիկին կեանքը ազատելու համար: Դրժ-
բախտաբար այս սալտաթ ոտքով չեմ
կրնար երկար ժամանակ կայնել: Կ'ու-
զէի որ անմիջապէս Մայրանոց իջնես եւ
դիս փոխարինես:

– Հինգ վայրկեանէն հոն կ'ըլլամ:

– Երեսդ լուա, մազերդ սանտրէ,
այնպէս եկուր: Կարծեմ ամբողջովին չես
արթնցած: Տիկին Ռուսէն գեղեցիկ եւ
հարուստ կին է: Արդէն բախտը միշտ
քեզի պէս սրիկաներուն կը ժպտի: Ես
իննը ամիս աշխատիմ եւ դուն վերջին պա-
հուն գաս պտուղը քաղես...

Ձենք նեղուի՛ր տոբթէօր Արմէնին
շատախօսութենէն քանի որ վերջնակա-
նապէս հաստատուած է թէ.

«Արմէնը լա՛ւ տղայ է»:

Յետին ծառայողէն մինչեւ հիւան-
դանոցին տնօրէնը այդպէս համոզուած
են եւ մօրութիւն ձեռքը տուած: Անար-
գել կը ծաղրէ, կը բամբասէ, կը կճէ: Կը
խնդայ եւ կը խնդացնէ:

Այս օտար քաղաքին եւ օտար հիւան-

դանոցին միակ հայ բժիշկներն ենք։ Ինք Մանկաբարձական եւ եւ Վիրաբուժական բաժիններուն մէջ։ Ինք՝ կենսաբախ, հաղորդական, իսկ ես՝ ինքնամփոփ, լուրջ։ Քիչ մը շա՛տ լուրջ։ Կամ՝ այնպէս ճանչցուած։

Բայց Վտիկին Ռուսէն չըսա՞ւ։ Ձեր անասական տարածուած մականունն է։ Վարսենիկն ալ...

Վճապարանքիս մէջ կը մոռնամ վերելակը եւ աստիճաններէն չորս աս չորս ցատկելով, հեւասպառ՝ Մայրանոց կը հասնիմ։

Գործողութեան սեղանին վրայ, սաւաննեղով ծածկուած մարմին մը։ Գըն՝ դացած փորը դէմքը տեսողութենէս կը ծածկէ։ Արագ քայլերով կ'անցնիմ դըլխուն կողմը։ Ինքն է, սակայն որքա՞ն փոխուած։ Զիս անմիջապէս կը ճանչնայ։

— Կարապետ։

— Վարսենիկ... Վարսենիկ, մի՛ վախ՛նար։ Կէ՛ս ժամէն կը լրանայ։ Կարելին եւ անկարելին կ'ընենք...

— Ինծի համար հոգ չեմ ընել։ Սակայն ամբողջ հոգիովս կը փափաքէի դաւակ մը ունենալ։ Խնդրե՛մ, Կարապետ, խնդրե՛մ, դաւակ, կ'ուզեմ որ դաւակս ապրի, խնդրե՛մ...

Պէտք եղած բառերը չեմ գտներ, կը կմկմամ, կ'անճրկիմ։ Ի՞նչ ըսեմ։ Աչքերս դաժուած են աղբիւսող աչքերուն։ Զեռքը ամուր կը սեղմեմ եւ, յետոյ, կարծես կամքէս անկախ՝ կը ծռիմ եւ կը համբուրեմ քրտնած ճակատը։

Ձէի ուղեր յուզումս մատնել։ Ինչե՛ր անցան արդեօք ներկաներուն մտքէն։

Արմէն երկարօրէն կը բացատրէ տիկին Ռուսէի պարագան եւ կը թուէ դործողութիւնը անհրաժեշտ դարձնող պատճառները։

Անյղիչ օրէնք է որ վիրաբոյժը՝ ո՛րեւէ հիւանդ դործողութեան ենթարկելէ առաջ, ա՛նձնապէս քննէ եւ հոտուզէ այդ պատճառներուն իրաւութիւնը։

Միջոցաւ՝ Վարսենիկը կնոջական քննութեան մը ենթարկելու դադափարն

իսկ անտանելի է ինծի համար։

Ստիպուած եմ։

Մեծ ճիգ մը կ'ընեմ, դո՛նէ քանի մը վայրկեան մոռնալու համար Վարսենիկը որպէս կին, ընկերուհի։ Միտքս կը կեդրոնացնեմ յղի՛ կնոջ վրայ, նկատի առնելով միմիայն ծննդաբերական բարգաւթիւնը, արգանդը, կոնքը...

Վստահ եմ որ ինծի չափ Վարսենիկն ալ կը նեղուի, բայց յայտնի չ'ընելու ժամանակ է որ ձեռքերս լուսամ եւ խոզանակեմ։ Այդ քանի մը վայրկեաններու բնթացքին մտքով կ'երթամ ետ։

Տասնըհինգ տարի առաջ, երկրորդական վարժարանին վերջին դասարանը, ա՛յդ օրը...

❖

Պատեցիւր կը խօսէր երկա՛ր, դանդա՛ղ, միօրինա՛կ։

Անոր ձայնը տնտանօթ լեզուի մը հնչիւնները կը բերէր։ Դասէն բա՛ռ մը չհասկցայ։ Աչքերս դաժուած էին առջեւի գրասեղանը նստող նորեկին։

Շաղանակազոյն, խնամքով սանտրուած մազեր, յետոյ՝ ճերմակ, ճերմակ վիզ մը, յետոյ դպրոցական համեստ սեւ զոգնոցը՝ կոնակէն կոճկուած — սաստափէ փայլուն կոճակներ։

Անունը Վարսենիկ է, ըսաւ քովս նստող տղան, Օննիկը։

Կ'ուզէի ծռիլ եւ տեսնել Վարսենիկի դէմքն ու աչքերը։ Հին երգերու տողեր կը հնչէին ականջներուս մէջ եւ չէի կրնար ձերբազատուիլ անոնց անվերջանալի յանկերգէն։

«Աչքերդ ըլլան վիհեր՝ ուր մարդ երբ աւելի՛

«Յաւերթին մէջ ամմահացած ըզգայ զիմէ»։

— Պարո՛ն Կարապետ, դասարանին առաջինը ըլլալու հանգամանքը չեղում է՝ արդարացին։ Պիտի խնդրէի որ դա-

սին ընթացքին զի՛ս ունեկեղերու պատիւը ընծայէիք, եթէ առաջարկս անպատշաճ չէք գտներ...

Պրանտաքի ուսուցիչին հեղնոտ ձայնը երկարական հոսանքի մը պէս ցնցեց «պարոն Կարապետը»։ Ոտքի՛ ելայ։ Բոլորը ինծի կը նայէին։ Անշուշտ Վարսենիկն ալ հիմա պիտի դառնար։ Սպասեցի քիչ մը։ Վարսենիկ չչարժեցաւ։

— Նստեցէ՛ք։

Ի՞նչ պատահեցաւ ինծի։ Զբլլայ ո՞ր...

Ո՛չ, ապուշ ենթադրութիւն է։ Զէ՞ որ դասընկերներու բոլոր սիրային ապրումն եւ աւելի յաճախ երազուած պատմութիւնները գիտեմ։ Օնեիկը զի՛ս կը կոչէ։ «Լիսէի Առաջին դասարանին պաշտօնական խոստովանահայրը»։

Անոնց սէրը ինքնաթիւադրութիւն է։ պատանեկան խաղ։ Բուն սէրը զիրքերու մէջ կը դառնուի։ Զէ՛ի կընար երեւակայել անոր անցքը ի՞մ կեանքէս։

Ինչպէ՞ս կրնայի Քսիբելլ։ Այսինքն կնկայ մը փէշերուն շուրջ դառնալ, տըրմար նստակներ զրել, հասաչել, ասորանոր պատմել սիրուած աղջկան ներկուած ախտերուն, ներկուած շրթներուն, ներկուած յոնքերուն, ներկուած մազերուն զրաւութիւնը։

Արդէն հազիւ քանի մը օր եղաւ Վարսենիկը տեսնելու։ Հետը չեմ խօսած։ Շատ հաւանաբար միւս դասընկերուհիներուս պէս սովորական աղջիկ մըն է։ Թեթեւ, տկարամիտ, աննշան։

Պահճը լրացաւ։ Ամէնքը ոտքի ելան։ Յանկարծ փուշ մը խրուեցաւ սրտիս։ Արամ հետը կը խօսէր։

— Օրին՝ որդ, դասարանին աւանդութիւններուն համաձայն, պէտք է նորեկներու դալուստը տօնել։ Այս կէսօրէ հտք ժամը հինգին մեղի հրամմեցէք. բոլոր դասարանը ներկայ պիտի ըլլայ...

Հեռացայ, չուզելով աւելին լսել։ Ուրուցի չերթալ Արամինց տունը։ Արդէն երթայի հոն ի՞նչ պիտի ընէի։ Ո՛չ կը պարհեմ, ո՛չ ալ Փիլիքը ընելու սիրտ ունիմ։ Վարսենիկը թող երթայ, թող Ա-

րամին հետ պարէ, ինծի՞ ինչ...

Յաջորդ օրերը անհաւատալի փոփոխութիւններ տեղի ունեցան։

Ամէն օր կը սանտրէի մագերս. — Կիրակիներու վերապահուած նուիրակա՛ն տւանդութիւն։

Կաշիկներս ներկեցի — մե՛ծ թուական մը տնոնց յոգնալան կեանքին մէջ։

Արդուկուած տափառ մը հապայ... սկսայ ամէն օր անիլուիլ...

Ո՞վ կընար երեւակայել, դեռ քանի մը օր առաջ, այդ զարմանահաշ իրապարանափոխութիւնը։

Աղջիկները իրար անցան։ Քիչ մը հետաքրքրութիւն, քիչ մը նախանձ։ Որո՞ւ համար այս բոլորը։ Եթէ «ընտրեալը» դասարանին աղջիկներէն ըլլար, անշուշտ պիտի գիտնային։

— Թերեւս Ալօրիքաւ վարժարանին աղջիկներէն մէկը զրաւած է անոր սիրտը, կ'ըսէր Ժանէթ, աչքերուս մէջ նայելով։

— Ո՛չ, տափկա ուղղակի դաւանանութիւն կ'ըլլայ նրա մեր դպրոցը այնքան շնորհալի օրինորդներ կան, պատասխանեց Արամ, ինքնորոշ տկարիկ մը նետելով զոմրիմաններէն փախած աղջիկներու խումբին։

Յունուարէն սկսեալ, ամէն Հինգշաբթի կէսօրէ հտք, առաջին դասարանը քեմիարանական փորձեր կը կատարէր։ Աշակերտները զոյգեր կը կազմէին միասին աշխատելու համար։ Ուսուցիչը կարգաց զոյգերուն անունները, թելադրեց հասարակաց տետրակ մը ունենալ, եւ միասին լաւ մը սերտելէ յետոյ միայն փորձերուն սկսիլ։

Նախազգացումով գիտէի որ Վարսենիկին հետ պիտի ըլլամ։ Այնպէս որ շաղդուեցայ երբ ուսուցիչը մեր անունները միասին կարգաց։

Զրօսանքի պահուն մօտեցայ Վարսենիկին։

— Օրերով, երկու շաբաթ է զի մեր դասարանն էք, թէեւ զիրար ճանչնալու առիթ չեղաւ։ Այնպէս որ եթէ պարոն Արմանին կարգադրութիւնը մեղի հաճե-

լի չէ - թերեւս կ'ուզէիք ուրիշի մը հետ աշխատել - պատրաստ եմ...

Ձերցայ շարունակել: Բառերը բո- պունդի խոշոր կտորներու պէս կ'ելլէին եւ կը թխմուէին կոկորդոս:

- Եթէ չէք ուզեր հետս աշխատել, կրնաք պարոն Արմանին դիմել:

Առաջին անգամ ըլլալով մօտէն տե- սայ Վարսենիկին աչքերը: Սեւ, խո- բունկ, փայլուն:

- Այդ ըսել չէի ուզեր... ընդհակա- ոակը... ներողութիւն: Տետրակը ե'ս կը բերեմ:

Դրէթ փախայ: Ինչո՞ւ համար այդ- քան տակնուվրայ կ'ըլլամ:

Ձըլլայ որ... ո՛չ, այդպէս բան չը- կայ:

Փառաւոր տետրակ մը գնեցի: Կա- չիէ կողքով լաւորակ թուղթով, հսկա՛յ տետրակ մը: Անհամբեր կը սպասէի Հինգշաբթի օրուն:

Անշուշտ դիւ հետաքրքրողը մի՛ միայն փորձերն են: Ձէ՞ որ դալ տարի համալսարան պիտի երթամ:

Հինգշաբթի օր քանի մը վայրկեան ուշացայ: Վարսենիկ կը սպասէր արդէն երբ նշանաւոր տետրակը թւիս տակ՝ աշխատանոց մտայ: Ներողութիւն չխընդ- րեցի ուշանալու համար: Ի՞նչ կ'ըլլայ, օրիորդը թող սպասէ. սիրային ժամա- դրութիւն տօւած եմ:

Քով-քովի նստեցանք: Վարսենիկ կը կարդար ուղեցոյցը եւ ես, մեքենական շարժումներով դեղերը կը պատրաս- տէի: Ականջներս լսիկի գոյն, կոկորդոս հնոցի մը պէս չոր, հապիւ մէկ-երկու արտասանեցի:

Միւսները լրացուցին աշխատանքը եւ սրահը սկսաւ պարպուիլ: Պարոն Արման մեծ ու ծանր քայլերով կը շրջէր եւ ա- նոր ոտնաձայնը լուսթիւնը կ'ընդմի- ջէր միօրինակ կշռոյթով: Լծուած էի տաժանելի փնտառութիւն մը. բառեր կը շարէի, կ'աւելի, նորէն կը շարէի, նո- րէն կը փոխէի: Վերջապէս բանաձեւ մը որդեգրեցի եւ շատ արագ - լողալ չգիտ- ցող եւ հակառակ ատոր ծով նետուողի

մը հոգեկան վիճակին մէջ - դա՛քս աը- ւի գայն:

- Օրիորդ, կը փափաքէի՞ք որ մին- չեւ տուն մեղի ընկերանամ:

Քաղաքավարական շատ պարզ շար- ժումեւ մը, անշուշտ:

Վարսենիկ, զարմացած, ժպտեցաւ:

- Եթէ անպատեհութիւն կը տես- նէք...

- Ընդհակառակը, շնորհակալ եմ:

Այսպէս սորվեցայ Վարսենիկինց տան ճամբան: Նախ շաբաթը անգամ մը, յետոյ գրեթէ ամէ՛ն օր պատճառ մը կը գտնէի հոն երթալու համար: Տետրակ մը փոխ առնել, դասերու մասին տեղեկու- թիւն ուղեւ, գիրք մը տանել: Որքա՞ն կը սիրէի այդ թուի քարերով տունը: Եւ սակայն, փողոցէն անցած ժամանակ կը ջանայի աչքերս Վարսենիկի սենեակին պատուհաններուն շուղղել: Մարդիկ չար են: Ինչո՞ւ բամբասանքի առիթ տալ:

Մանաւանդ որ մեր մէջ «բան մը» չկայ:

Վարսենիկը պարզ դասընկերուհի մըն է: Միւսներուն պէս:

Միւսներուն պէս: Ո՛չ: Անկեղծ չեմ ես ինծի հետ: Պէտք է քաջաբար խոստո- վանիլ որ Վարսենիկ միւսներուն պէս չէ: Նախ՝ բարեկամուհի եւ միւսները ոչի՛նչ են:

Ետոյ ինչո՞ւ չխոստովանիլ որ Վար- սենիկ շատ ուշիմ աղջիկ է: Կրնամ որեւէ նիւթի շուրջ անոր հետ հանոյթով խո- սիլ: Յաճախ միտքս կու գան Բօլ Փէրալ- տիէն հրկու տողեր:

«Նքէ էրիկմարդ մը եղած ըլլայիք Բարեկամներ կ'ըլլայի՞մէ»:

Այո՛, Վարսենիկ կրնար լաւագոյն բարեկամս ըլլալ:

Վերջ է վերջոյ, ինչո՞ւ չխոստովա- նիլ նաեւ որ Վարսենիկ շատ գեղեցիկ աղջիկ է: Բանաստեղծ չեմ այդ գեղեց- կութիւնը երգելու համար, բայց կը գգամ որ «խորունկ աչքեր», «սլացիկ հասակ», «նուրբ գիծեր» եւ ասոնց նման հասա- րակ-տեղիք բացատրութիւնները չա՛տ տօգոյն են:

Ուրեմն, ա՛յլ ես ինձմէ պիտի չծածկեմ այդ տնիւնս ճշմարտութիւնները: Փանի Վարսենիկին հանդէպ համակրանք ունիմ, բնականօրէն առաջինը պիտի ըլլամ անոր խելացութիւնը, չնորհն ու գեղեցկութիւնը զնահատողներէն:

Մեր մէջ սէր չկայ: Պա՛րզ համակրանք:

Յետոյ՝ ի՞նչպէս պիտի համարձակէի սիրել Վարսենիկի պէս աղջիկ մը, ե՛ս, Կարապետ Անդրէասեան: Կարճահասակ, տգեղ, աղքատ, ակնոցաւոր, թափթփած հագուստներով՝ տասնըինը տարեկան կռլտ ու կսպիտ աղայ մը:

Ո՛չ խօսիլ գիտեմ, ո՛չ պարել, ո՛չ դարպասել — կատարեալ վայրենի:

Ինծի համար սէրը տա՛լ է: Ի՞նչ կըրնամ տալ Վարսենիկին: Ունի՞նչ...

Նորէ՛ն անկեղծ չեմ, որովհետեւ կը զգամ որ եթէ պէտք ըլլար, առանց տատանելու, դիւրութեամբ, կեանքս կուտայի անոր համար: Եթէ ուզէր՝ կը լըքէի նոյնիսկ ապագայ ասպարէզս, բըժըշկութիւնը — զոհողութիւն մը, որուն մեծութիւնը ե՛ս միայն կրնամ չափել: Սալայն նոր օրերու նուէրները նիւթափան են: Գոհարեղէն, մուշտակ վերարկու, ինքնաշարժ, դրո՛մ: Իսկ կեանքը, ապագան, անկեղծ սէրը՝ հինցած անհրապոյր ապրանքներ:

Պէտք չէ սիրել Վարսենիկը, պէտք չէ...

Անկարելի հաւանականութիւններ կը փայլակէին երբեմն ուղեղիս մէջ եւ երկվայրկեան մը կը լուսաւորէին խաւարս: Եթէ Վարսենիկն ալ զիս սիրէր...

Դժբախտաբար նման հրաշք մը չի կրնար պատահիլ:

Ինչո՞ւ: Ինչո՞ւ, թերե՛ւ...

Ո՛րք եմ, ինչո՞ք...

Թաղեցի ոչմօք բարձիս մէջ եւ երկար հեծկլտացի:

Այս վայրկեանէն սկսեալ մտքէս պիտի վանեմ Վարսենիկի հետ կապուած ամէն մտածում: Բարեբախտաբար դըպրոցական տարին գրեթէ լրացած է: Հինգշաբթիները ա՛յլ զիս պիտի չչարչարեն:

Թող ո՛չ ոք իմանայ իմ դադանիքս: Թող ամէ՛նքը զիս սիրելու անկարող նրկատեն: Ես գիտե՛մ սիրել: Կը սիրեմ, առանց յոյսի:

Վարսենիկն ալ պիտի չգիտնայ թէ զինք որքա՞ն կը սիրեմ:

❖

Տոթիւօր Կարապետ, կրնա՛ք սկսիլ: Զգայազրկիչ բժիշկին ազդանշանէն ետք, տնտեսաբան պատրուակ չմնաց: Ժամանակ է որ ինքզինքս դապեմ եւ գործի անցնիմ:

Նշդրակի մէկ հարուածով կը կրտրեմ մորթը. յետոյ իրարմէ կը բաժնեմ որովայնին մկանները: Ուրախ եմ որ ձեռքս չի դողար եւ վերադառած եմ արհեստաւորի ինքնավստահ թէքնիքս:

Կը ճեղքեմ մնացեալ խաւերը: Աղիքի դալար մը դուրս կը սահի: Ահա՛ արդանդը, լեցուն տիկի պէս ուռած:

Նշդրակի թիթեւ հարուած մըն ալ եւ տիկը կը ծակի: Դեղին ջուր մը կը ցայտէ ճեղքէն, կ'երեւին պղտիկին մազերն ու ճակատը: Մատներովս, մեծ ուշադրութեամբ կը լայնցնեմ արգանդին վէրքը եւ դո՛ւրս կը քաշեմ նորածինը:

Լեցուն, առո՛ղջ մանուկ մըն է: Զեռքերուս մէջ կը թփրտայ:

Մինչ դրադած ենք պորտային լարը կտրելով՝ պղտիկին առաջի՛ն ճիւղ կը պատռէ գործողութեան սրահին ճնշիչ լուսթիւնը:

Ուրախութեան եւ հպարտութեան յորդառատ հեղեղ մը կը լեցնէ էութիւնս: Աչքերս կը լեցունին:

Վարսենիկին աղա՛ն:

Կրնար իմ գաւազն ըլլալ... Մե՛ր գաւազն:

❖

Քիմա կը զգամ թէ որքա՛ն տնհամարձակ, որքա՛ն անփորձ, որքա՛ն խեղճ

եմ եղած: Վարսենիկի պէս կին մը կոր-
սընցնել...

Գոնէ զգացումներս յայտնած ըլլա-
յի. թող մերժէ՛ր, տյաքան չէի ցաւեր:

Տարբերուն հետ շատ մը կիներ ան-
ցան կ'ենեքէս: Ամէ՛ն մէկը քիչ մը մո-
խիւր ցանեց երիտասարդական հաւատքիս
կրակին վրայ:

Կեանքի պայքարը սիրտս ամէ՛ն օր
քիչ մը աւելի կ'արծրացուց:

Վարսենիկ յիշատակ դարձաւ: Հին
դիրքի մը էջերուն մէջ չորցած գունա-
թափ ծաղիկ:

Օր մըն ալ ներքին դարչելի ձայն մը
համարձակեցաւ փափաւ:

- Եթէ ամուսնացած ըլլայիր Վար-

սենիկին հետ, պատրանքներդ կը չքա-
նային: Գո՛ւն դրիր անոր գլխուն լուսա-

պըսակը: Վստա՞հ ես, արժանի՞ էր...

Անմիջապէս լռեցուցի: - Սրբապի՛ղծ...

մ

- Տըթէ՛օ՛ր, որքա՞ն շնորհակալ եմ,
որքա՞ն երախտապարտ: Տասը տարիէ ի
վեր ամուսնացած ենք, հակառակ մեր
բուն փափաքին զաւակ չունեցանք:
Վե՛րջապէս մեր երազը իրականացաւ:
Կեանքիս ամէնէն երջանիկ օրը կ'ապրիմ:
Կինս ալ շատ պիտի ուրախանայ - ժա՛նչ
մը կ'ուզէր: Գիտէ՞ք, Հայուհի մըն է...

Մ. Է.



Գ. ԳԵՂԱԿ

ՔՈՒ ՆԱՅՈՒԱԾՔԴ

Քու երկնառաք այդ նայուածքիդ
Զրվէժմ ռսկի հոսէ վրաս,
Թո՛ղ որ տնոր ակամակիտ
Շողքը շոյէ գիս համապագ:

Մուք ու տրտում իմ սրտիս մէջ
Թո՛ղ որ շողան շողերդ անվերջ,
Կեանքն այս ցաւոտ ու միշտ ազօտ,
Ունենայ գէթ մի առաւօտ...:

Թո՛ղ անյատակ իմ կրծքիս տակ,
Նայուածքդ ըլլայ արեւ մը տաք,
Որ ո՛չ դաւի եւ ո՛չ ցաւի
Մըտրմ այնտեղ շատրուամուր...:

Որ երկունքիս ածունքում
Մէջը ցանած վարդն ու զարում,
Բոցավառութիւն հայեացքովդ հուր,
Ու վաստակն իմ չ'անցնի՛ ի գուր...:

ՀՐԱԶ ԶԱՐԴԱՐԵԱՆ

ԺԱՄԱՆԱԿ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴՔ ԻՒՐ

$$E = MC^2$$

Քննչ փոյթ թէ ուրկէ՛ եկած, ինչ-պէ՛ս եկած, ինչո՛ւ եկած: Առանց մեր ուղեւորն, անպամ մըն ալ կը տեսնենք որ լեցուեր ենք՝ հակակրանքի, արհամարհանքի, անբարեացակամութեան, յաւակնութեան քամիներով:

Անմիջապէ՛ս խելքի եկուր, բարեկամ: Անձկալից, հապշտապ, վճռական, ի՛մ բարեկամ, բա՛ց սրտիդ դռնակները: Խոյլ տուր որ չքանան զարշահոտ այդ քամիները: Ձքանան՝ ինչպէս աստուածանշային այն ախտափարակ խողերը որ Տիրոջ հրամանով վայրկենական անհետացան յանդուհոս: Բա՛ց մերթ ընդ մերթ սրտիդ դռնակները որ կօրնչին այդ թունալից կազերը: Հապա՛ եթէ, պայթուցիկ, երթան բախել ճու մերձաւորդ, ճու մէկ նմանդ: Բա՛ց, մերթ ընդ մերթ՝ բա՛ց: Գարնանայի՛ն, բուրումնայի՛ր, կենսապարզեւ ի՛նչ գեփիւտներ, ի՛նչ սիւֆեր, ածուներուն շուրջ, պարտէզներուն մէջ:

Քոսքը՝ գործ է: Գործը խօսք է: Բանը՝ երկուքի՛ն ալ աղբիւրն է: Կեանքի մէջ թէ Արուեստի՛ երկուքն ալ էական: Մասնաւոր պարագաներու այս կամ այն

դասաւորումն է՛ որ կուտայ լրիւ գերակայութիւն մը՝ մե՛րթ Խօսքին, մե՛րթ Գործին: Կը դարձնէ մերթ մին, մերթ միւսը ահագոյն հեղեղանք, սին՝ եթէ ոչ աւերիչ:

Մին եւ միւսը ունին իրենց օրէնքները, մտնելու համար կեանքին մէջ, մըտնելու համար Արուեստին մէջ: Օրէնքներէն ոմանք հասարակաց են երկուքին, ոմանք մասնայատուկ՝ մէկուն կամ միւսին: Լռութիւնը, մէկին կամ միւսին, գերազոյն դէմքն է:

– Աստուած ինծի հետ է՛...

– Շա՛տ բարի, ինչո՞ւ չէ, Աստուած, աստուածները քեզի հետ են: Բայց, մէ՛կ պայմանով,

Որ զո՛ւն չըլլաս անոնց դէմ:

Մարդուն բարոյական հասողութիւնն ալ տեղի կ'ունենայ պտուղին հասունութեանը նման: Արեւին դարձած կողմը առաջինը կը ստանայ իր բոյրին, իր գոյնէրուն, իր համին, իր կենսանիւթերուն առաքինութեանց վերջին կատարելութիւնը: Մինչ միւս երեսը, կարծր, անհոյզ, լեզուահամ, կը մնայ դեռ կանաչ:

Կան, անուաններէն զատ, պատուա-
կան մարդիկ, մեծամասնութիւնը ընկե-
րութեանց, որ կը մեռնին «կոտորած» մա-
սերով: Կան նաեւ ուրիշներ, հաղուածիւ
— արթիւքը, իմաստունը — որ, կանխա-
հասօրէն եւ մէկ անգամէն, կը տիրանան
իրենց ամբողջական «բոլորին, թոյրին,
համին, կենսութեան թերութեանց
ու անոնց ամբողջ հարստութեանը»:

Ան որ մարդկայնական է՝ հարկա-
զրարար հետեւ է Բացարձակէն: Հարկ է
որ օր մը ան կատարէ հաշտութիւնը Բա-
ցարձակին եւ մարդկայնին միջեւ: Եթէ
մարդը չուզէ մոլորանշօրէն,՝ տեսապէս
կառչիլ անհասելի, անաղորոյն Բացար-
ձակին եւ յարաճունօրէն զարգացնէ իր
մէջ մարդկայնականիմ զգացումը, կեան-
քի դժողակ թէ՛ եղբրական փոփոխու-
թիւնները, հարուածները՝ աւերիչ ցըն-
ցումներ չեն ըլլար իրեն համար, ո՛չ ալ իր
սիրտը չորցնող, անօր լեզի համ տուող
փորձարկութիւններ: Բացարձակը անայ-
լիլ եւ միակուոր կուրծք մըն է, մինչ
մարդկայնին էակը՝ յարաշարժ, խոցելի,
բիրիբանդ, ենթակայ է անկումի եւ վե-
րելի: Այդ է օրէնքը իր ուժովին: Ծատ
աւելի դիւրին է մնալ տեսապէս թուրմ,
այդ կուրծքին ծնրադիր, քան մէկ մի օր
դառնալ քիչիկ մը աւելի մարդկայնի:
Ընդհանրապէս, կատարելով հաշտու-
թիւնը, մարդը կը տիրանայ կեանքի ա-
մէնէն անդին պաշտօնիքին՝ ապրելու մըչ-
տաժպիտ, ներողամիտ արուեստի զաղտ-
նիքին: Ու անոր շնորհիւ, բոլոր տարի-
ներուն, տարուան բոլոր եղանակներուն,
սիրտը չի գաղբիլ երբեք արտածութիւն
այն ջերմութիւնը որ գին չունի: Եւ կը
մնայ «կեանքի աղբիւր», իրեն համար,
իր նմաններուն համար:

Պնայպս պերզօր շողարձակումը ու-
տիմին, վերին յատկանիշը արթիւքին՝
չողարձակումն է Սիրտը:

Մի՛ գարնէր ռաբիւլ, աղա՛ս, օրե-
րուդ եղբրքէն զուրս մի՛ նետեր բեկոր-

ները կոտորած սրուակներուն որ կեանքը
շնորհեց քեզի: Ինչքա՛ն ալ ուզես տիրա-
նալ անոնց ու պահել զանոնք անբիծ,
թանկագին, բիւրեղէ սրուակները, ար-
բաժնոր պոհեմները, գեղակերտ Սէվրերն
ու Քարլ Օփիլարիները, ուղես պահել
ամբողջական, անվթա՛ր, օր մը պիտի
զայ, աւա՛ղ, ուր կեանքը պիտի փշոէ
մին թէ՛ միւսը: Ե՛ւ մին ե՛ւ միւսը: Կուլ
տուր արցունքներդ, աղա՛ս, ու մի՛ գար-
նէր ռաբիւլ... Դողզողին, կարկա-
մած, հաւտե՛լ՝ կեանքին կոտորած բեկոր-
ները թանկագին: Ու փակցուր, ու վե-
րակերտէ զանոնք: Թող տուր որ զարար-
ուի կոկորդը, աղա՛ս, բայց հարկ է որ
պտենա արուեստը՝ շնամարելու ճեղքերը
անոնց: Հարկ է որ պտենա մոգութիւնը՝
տեսնելու զանոնք ամբողջական, անվե-
թա՛ր, կեանքին փշրած սրուակները, ո-
րոնց հողիդ պահ տուաւ իր մարմին իմը
ու արիւն իմը:

Ու հիմա, արդէ աչքերդ, աղա՛ս, եւ
մօտեցիւր: Վերակերտած սրուակիդ խոր-
քը տե՛ս, բուրմենե՛ր կան, յաւէտ ան-
կորնչելի, որ չկոտորած ան չունէր: Կու-
լա՛յ, կու դա՛յ օր մը, ուր սպիները
սրուակներուդ կը հրաշափոխուին, քու
աչքերուդ, թանկագին սրուակներ կոտ-
րուկներուն ալ աչքին առջեւ, արապէս-
նէրու կախարդական: Եւ օր մըն ալ, թե-
րեւս վերջի տեսիլքի մը մէջ, աղա՛ս,
աղա՛ս, ան դառնայ, իբր վերին շնորհ,
ափերպիւնէքա:

Մէրը, արթիւքին համար, մեկնման
կէտ մըն է, անշուափելի, գերհօր տե-
սակ մը քաբալիզօր որով կը տիրանայ
ան հոգեմիտակի մը՝ խոնարհութեան,
հնազանդումի: Հնազանդութիւն որ չի՛
կարօտի որ մասնայատուկ պատճառնե-
րու, ո՛չ ալ տիրոջ մը: Ներդաշնակու-
թեան բերրի գաշտ որ կը տարածուի իր
մէջ, ուր կ'օրորուի իր սիրտը, օրուն վը-
րայ կը սաւառնի իր հոգին: Գարնանա-
յին անանց արեւոյթի մը գիրկը, ստեղ-
ծադործական թափը կը ստանայ խո-
յանքներ: Այն ժամանակ, արթիւքի տե-

սանոց է, ե՛ւ իմաստուն ե՛ւ մարդարէ՛ւ:

Ըլլայ նոյնի՞սկ ազնուագոյնը, դա-
պարտութիւն կամ սկզբունքը չէ՛ որ պիտի
տիրապետէ անհատին: Անհատն է որ
պիտի տիրապետէ անոր: Անհատը ըլլա-
լով հանդերձ մարմնացումը այդ դադա-
փարին, այդ սկզբունքին, է՛ միեւնոյն
ստան զեռ չառ մը այլ բաներ: Ան կեդ-
րոնատեղին է բարդ ու վերին երեւոյթ-
ներու, ինչպէս եւ... վարին ալ երեւոյթ-
ներու որոնք ո՛չ միշտ ամուլ են, ո՛չ միշտ
անօգտակար:

Այն մարդիկ որոնց հետ ինչպէ՛ս ալ
վարուիս, ի՛նչ ալ ընես, ամէնէն զգու-
շաւոր կեցուածքն ալ որդեգրես, պատ-
ուանդութեան հազար տեսակ փաստեր
սուած, մանր մունր ծառայութիւններ
մատուցած ըլլաս, նոյնի՞սկ պատահի որ
անձնութիւնդ մըն ալ ապացոյցը տար-
ուած ըլլաս տալու, դարձեալ եւ միշտ
թերթմացութիւններ կը ստեղծուին իր
եւ քու ուղղամտութեանդ միջեւ: Դար-
ձեալ եւ միշտ՝ ինք խաբուելու վտան-
գին տակ է: Ինք՝ առնելիքուոր է:

Տեւապէս հազար տեսակ կասկածնե-
րու գերկը տարուբեր, մխրճուած է քու
թաղուն դիտաւորութիւններուդ քննու-
թեան մէջ: Մանրակրկիտ, շմեցուցիչ
բուրդներու, փապուղիներու մոլի՛ կը
թափառի: Արդեօք ի՞նչ տեսակ խաղի
պիտի բերես զինք: Կը սպասէ, կը փրկու-
նէ, կը զգուշանայ՝ շունչը կտրած: Գի-
շերն իսկ՝ մէկ աչքը բաց... Այս թու-
նաւորածներուն, այս ցկեանն առնե-
լիքուորներուն այդ աչքը՝ մէկ պարա-
դայի մէջ կը զոցուի, — երբ իրեն նման
մինչեւ ծովը մէկ այլ ուղղամիտի մը
հանդիպի: Այդ է իր միակ ընթերցելի
գիրքը:

Արդեօ՛ք հարկ պիտի ըլլայ համա-
ձայնիլ ձշմարտի կորուստին: Արդեօ՛ք
հարկ պիտի ըլլայ ձեռք քաշել նաեւ ծըշ-
մարիւն: Սոկրատի մոլեռանդ, կատա-
ղի փնտառութիւն՝ քմեքմեղով մըն է որ

կը պատասխանէ կեանքը, կռնակը յե-
նած իր այլ մէկ մեծ օրէնքին, որուն
համեմատ՝ ամէն ինչ վիճակուած է ա-
ռասպելի վերածուելու: Վերածուելու՝
ձշմարտի ճի՛շդ հակառակին: Վերած-
ուելու՝ սուտի: Կեանքի մէջ մի պատա-
ռը ինկած ժամանակի անկասելի հոսու-
մին վրայ, կը հեռանա՛յ, կը հեռանա՛յ:
Իր բախտուն, լուսաշող պատկերին
պահպանումը՝ պա՛րզ ժամի, պայմանա-
թափ խնդրի: Մին եւ միւրը — ձշմար-
տին անմահ բնազդը մարդուն մէջ եւ
ձշմարտին ճակատադրական խորտակու-
մը առասպելացումին մէջ — արդեօ՛ք մին
եւ միւրը, ինչպէս միշտ, համահաւա-
սար, համազօր, համահակագիր, յաւեր-
թական զօրութիւններ չե՞ն: Կեանքին
շնչառութիւնն իսկ ասիկա չէ՞:

Մեր իրաւունքին զգացումը յան-
կա՛րձ կը զայրագնի, կը դառնայ անդի-
նող, երբ կը բաղխի դիմացինի անիրաւ
հրաւերութիւնն որ ելեր է մերինը ոտնա-
հարելու: Ձգաւապանէլ ան ժամանակ
մեր իրաւունքը՝ պարզապէ՛ս պատուփռն
է:

Ի՛նչ խօսք որ երբ տրուի մեզի պաշտ-
պանել իրաւունքը սկարին, հարկ է որ
ըլլանք մոլեռանդ: Հարկ է որ լարենք,
տրամադրենք, աններող մղումով, մեր
բոլոր ուժերը: Եւ երբ կեանքը պահան-
ջէ, հարկ է որ երթանք մինչեւ զոհաբե-
րում: Անվարան՝ երթանք մինչեւ անձ-
նագոհութիւն: Ձկայ մարդը բարձրացը-
նու պաւելի ներգործօն տրարք քան օրի-
նակը այս կարգի պահաբերումներուն:

Իսկ միտցնալ ատենը, ոչի՛նչ աւելի
ուղիղ գծով կ'առաջնորդէ անհատը եսի
վատթարագոյն անկումներուն քան մեր
անձի իրաւունքներուն կրայոյց պաշտ-
պանութիւնը: Ո՛ր կը սկսի եւ մանա-
ւանդ ո՛ր կը հաստատուի սահմանը այդ
իրաւունքներուն:

Արեւմուտքի բարոյական հիւանդու-
թեան ամէնէն կարեւոր ախտանիշը թե-
րեւս ասիկա է: Ողնի մարդիկ են ասոնք
որ կը քաշեն, կը շփուին իրարու, մին-

չեւ սովորաբար դիտարկելով իրականություններու մեծ ու փոքր զանազաններով զոր կը յետանան տեւեւ գիշեր: Յետանել՝ իրենց հիմնական դրացումն է: Մեծ կիւրքը իրենց դուր բաւարարելու համար պատրաստ են մէն մի բոլորէ արիւն թափելու: Թափել հետեւում՝ սիրտ ու հոգի: Երբ երկու «ոգնի» իրարու դէմ դիմաց զան, ցից առաւելներ կը մերկանան յեղակարծ: Ճակատող յովազ ու գայլ, անսարան ջանքերով յանկարծ նախնիքի սարսուռ կը տարածուի: Վատութիւնը բնազդական խոհմասկան մը շարժանքով կը հետեւնէ մին միւսին: Առեկտրոններ ցանկապատերուն առ կողմն ու աչք կողմը, հաւատքովանութիւններ մոլորանքով՝ դաւ ու գարան կը սարքեն անկողնի:

Միտք ընդունելին՝ մարդուն մոլորման է դիմացինին իրականութիւնը պաշտպանել: Այնքա մարդու հոգեկան զսպանակներուն մէջ, բնականօրէն, ի՛րը պաշտպանողը գոյութիւն չունի: Ան կ'ընէ այն եւ այնպէս, ինչ որ մանուկը կ'ընէ, ինչպէս մանուկը կ'ընէ: Անթաքաթ մը, անոնք երկուքն ալ ուժգնօրէն կը պահանջեն, յատկապէս անթաքաթին, հիմնովին կը մոռնան իրենց պահանջածը: Այնքան մեծ է անհատը, ինչքան մեծ է իր արհամարհանքը ի՛ր իրականութեան:

Մեծ ուստաններու դարպասներուն առջեւ, դարպասներէն ներս, ննջումի պահանջաւոր վարպետներուն ետեւ, ճամբաներու խաչմերձներին թէ հրապարակներու վրայ ու բոլոր անկիւնադարձներուն, սուրբու շկահներն ու դանակներու բախիւնը երկինք կը բռնէ: Հարուածները կը տրուին կռակին, որեւէ մէկ կ'էտին: Նախնադարձը՝ կռակին:

Յեղափոխ, պատմական Հայուն հիմնական յատկանիւնը՝ հոգի տիրացած իրաւունքի մը՝ զայն իր մերձակոյնի առաջնադրելու մոլորման է: Հոգեկան այդ շարժումն է՝ աղբիւրը ուրախութեանց հայ ժողովուրդի մէկ զանգին: Ատիկա՛ է, իրեն համար, իր գոյութեան իրաւունքը: Իր դարաւոր ու ազնուար կեանքի

երկայնքին, դարձացուցիչ չափով, ա՛յդ ըրած է: Այսօր, աւելի՛ քան երբեք, նոյնը կ'ընէ: Ան երբեւէ աւելի զժախտ չէ քան երբ կը զրկուի այդ հոգեկան գործառնութենէն որ իր խորհրդաւոր, անընդարձակ առաքելութիւնն է: Մեր ժողովուրդի պատմութեան մակերեսային ծանօթացումն իսկ բաւական է, յանդիւր համար այդ հաւաստիքին: Իր ամբողջ բանաստեղծութիւնը, երաժշտութիւնը, գիւցազներգութիւնը, արուեստին բոլոր ճիւղերը՝ ուրիշ բան չեն յայտնէր եթէ ոչ՝ հոյակէ՛լ, եթէ ոչ՝ փառաբանել՝ այդ նշմարառութիւնը: Երբ անհամար պարագաներու մէջ, ան ցեղայնօրէն համաձայնած է զիջելու, համաձայնած է զլուխ ծռելու, ծառացած է սակայն իր ամբողջ հասակովը, անպարտի՛ զերբնական ուժերով, իր կեանքին այդ մեծագոյն նուիրակներուն, սրբութիւնը պաշտպանելու համար: Անկունք՝ իր հոգեբանաստեղծական գոյութեանց: Գաղտնիքը՝ իր յաւերժութեան:

Եթէ բազմադարեան մեր համակ պատմութեան ողկոյղը հնձանէ անցընենք, հանենք իր հոսակ հոյզը, իր քննաքննութեամբ, իր հոգին՝ ասիկա՛ է որ կը գտնենք: Ատիկա է՝ դարձեալ ոգին մեարդական արարքին իսկ, վարդանանքի իսկ իմաստին: Այս աներկբորդ մեծութիւնը գերիշխէր կը կացուցանէ հայ ժողովուրդը բազմադարեան եկած ու անցած աղբիւրու, թաղաւորութիւններու, կոյսութիւններու: Գերիշխէ՛ր՝ վասնզի անյղանալի կը թուի աւելի՛ վսեմ իտեալ մը, որուն ունէ՛ ժողովուրդը փարած ըլլայ, ինչպէս հայ ժողովուրդը, աւելի մեծ ուժղնութեամբ, անհաշուելի գոհույթեանց, զոհարեմներու, նահատակումի դնով:

Չարի՛ն հպումը կը փոխակերպէ կամքս աւերատենէ պողպատի: Կը բաւէ սովայն որ տեսնեմ բթահար դէմքը լաւագործին, ցաւով կարկամած, որպէսզի գոյութիւն չունենայ գոհողութիւն մը որուն հոգիս չյօժարի:

(Վերջ)

Հ. Զ.

Վ. ԳԵՈՐԳԵԱՆ**ՊԻՏԻ ԳԱՅ ՕՐ**

Դուք որ ինկաք խառնույդին մէջ, ազատութեան վառ սիրով,
 Ուրացուած ռ՝վ հերոսներ,
 Այժմ հեռու հայրենիքէն ուր մերժուեցաւ ձեզ ասի մ'հազ,
 Կը բնամաք կարեւորէր:

Ձեր քաղաքեանք բայց կերտեցիք ազատութիւնը մեր մօր,
 Ու թշնամիին նենգ, պարտուած՝
 Խոնարհեցաւ ուժին առջեւ ձեր, գրոհին՝ զօրաւոր,
 Դրօշին առջեւ ձեր պարգած:

Հերոսականն եղաւ յաւիտ ձեր նպատակն անուշայայլ,
 Ուստի մահուան կարծէ տուած,
 Խեղախեցիք զէպի ռաշին ու կռուեցաք քաջաբար,
 Փառքի պսակը գրկած:

Ձեր գարծն եղաւ արիական, նշատակը՝ յաղթանակ,
 Պայքարով դուք վնեցիք
 Դնել հիմերն անկախութեան, գերուած ցեղին մահատակ,
 Կերտելու ազատ հայրենիք:

Ու դուք տալիք ձեր արիւնքով մեզ հայրենիք ազատուած,
 Տալիք դրօշակ ու պսակ,
 Հայ անունը դարձուցիք լոյս, դարձուցիք երգ ու քերթուած,
 Հպարտութեան հանգամանկ:

Կը բնամաք այժմ օտար աստղերու տակ, ուրացուած,
 Անշուք քարի մը ներքեւ,
 Բայց պիտի գայ օրն աներկբայ փառքի ձեր օրն անկասկած,
 Ու Վահագնեան զերթ արեւ՝

Ձեր անունը պիտի դառնայ պաշտամունքի առարկայ,
 Ձեր անիւններն հերոսի,
 Հաղին մէջ մայր հայրենիքին կամ ժայռի մը մօտ հսկայ,
 Գրկեն իրաւունքը փառքի...

Պուէնտ Այրէս, 19-1-63

ԽՈՆԱՐՀԵՑԷՔ ԶԵՐ ԳԼՈՒԽԸ

Խոնարհեցե՛ք ձեր գլուխը շիրմներու առջև անյայտ
Հերոսներուն, որոնք ինկած հայրենիքի համար ազատ:

Անոնց, որ դեռ երիտասարդ մոտեցան հանդիմանության, վայելք ու սէր,
Ազատության համար՝ իրենց արիւնն ու կեանքն ըրին մուկ:

Անոնց, որ օր մը ուրացած անձերն իրենց եւ ապագան,
Վերցուցին զէնքն ու անվեհեր՝ քշեցին ինչպէս խոյացան:

Խոնարհեցե՛ք ձեր գլուխը անոնց առջև, որ կամեցան
Արիւնն իրենց ընծայեցին ազատության լոյս բազմիմ:

Ու կերտեցին մահովն իրենց արդար փառքի պատուանդան ձեզ,
Գիտակցութեամբ դարձան նախագ, ձեր մեծության՝ նոր ժողովուրդ:

Մեռան, որ դուք ապրիք ազատ, ըլլայ մեկնախ երկիրն Հայուն,
Արցունքի տեղ ակաթնաքանակ մէջ լսուի երգ ու ցնծութիւն:

Փարատի սովն ու մահն զի տիրէ քարիք, առատութիւն,
Դաշտ ու այգի առատայեղց լեռնան հունձնով ձեր ակաթնաքանակ:

Մեռան, որ հայ հանձնարան ապրի, վերածնի փառքն իր նախնիներն,
Աշխարհի դառնայ վկայ անոր ստեղծագործ անմեռ ուժին:

Մեռան, որ ցեղը համարեն վերագտնէ կամքն անյեղի,
Իր յաղթանակովն ու գրգռով արեւին տակ փառքով ապրի:

Պատմության մէջ մենք ունենանք նոր Աւարայր լուսապսակ,
Դարաքիւիսէ, Բաշ Արարան ու պանծալի Սարտարապատ:

Սքգուի մուրն Հայունն ճակատեն, իբրեւ երկշատ ու անարի,
Ու ծագէ ծագ արիւնքիւնն իր շնորհքովն ու տարածովն:

Անն իր ըլլայ աստղերու չափ, ժպտի իրեն լոյս ապագան,
Ըլլայ հատու սուրբ անոր, բազուկն ամուր ու յաղթական:

Սերունդներ գոռ յաւերժավրէժ հասունան իր փառքին համար,
Ու լիանայ, ու վարարի՝ գերեք արեգակ Հայկեան հանձնարն:

Այսպէս ահա, այս ուխտով լոյս մահուան համար սուկ հասունցան
Անոնք որ մեզ տուին կրկին մեր հայրենիքն յաւերժական:

Խոնարհեցե՛ք ձեր գլուխը շիրմին առջև անոնց անյայտ,
Որոնք ինկան, որ Հայն ապրի նախադր միշտ բարձր, հպարտ...-

Վ. Գ.

Բ. ԿՈԱՆՆԵԱՆ

Հանրապետական ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Նոյն պահուն, հազարաւոր մղոններ հեռուն, քարիւղի լսպտերի մը բոսոր լոյսին տակ նստած էր ծերունի մայրը: Մազերը բոլորովին ճերմկեր էին: Գլխուն շուրջ լուսէ պսակ մըն էին կապմիր: Դէմքը խաղաղած էր, խորշոմները կարծես իրար չէզոքացուցեր եւ արտայայտութիւնը խորունկ հանդարտութիւն մը զգեցեր էր: Իրերէն վեր կը նայէր: Աչքերը փոսին մէջ աւելի խորացեր եւ կոպերը մօտեցեր էին, նայուածքը կծկուեր ու հեռաւոր սոյզ մըն էր ուսացեր: Ներկային մէջ չէր յառեր ալլելու:

— Սա նամակը մէյ մըն ալ կարդա, աղջիկս, ես քեզի դուրպան ըլլամ: Թագուհին կրկին կարդաց ու տող առ տող թարգմանեց: Բաւերը նախ արտայայտեցին այն՝ ինչ որ սահմանուած էին արտայայտելու, հետեւեալ սովորական, բաւերը պատուեցին պատեանները, թեւ առին, կրակ հաղան եւ հրաշագործ զօրութիւններով առաքրուած, բախեցին փակ գոնեւրը եւ սրտերու բերեղացած արտփումի վերածուեցան:

Պատուը, աչքերը փակած, դուրսը յեցած աթոռին, շրթներուն պերագոյն երանութեան մը ժպիտը: Փակ աչքերուն ետին՝ կանգնած էր տղան, կաղնիի պէս ուռնացած, լոյսեր հալած: Իր հանգած օճախէն կը բարձրանար ծուխը, կապոյտ, կապոյտ:

— Եղիցին կամք քո:

Թագուհին, դեռ նամակը ձեռքին, աչքերը յառած տախտակամածին, սառած էր: Իր մասին՝ ոչ մէկ խօսք: Պարզ բարեւ մը: Գիտէր, չէր կըրնար գրել, երկչոտ էր, բայց օէրը գիտէ, կը գտնէ կերպը, տողերուն մէջ, լուսանցքին վրայ...

Ոչ մէկ բառ:

Աչքէ հեռու, սրտէ հեռու:

Ոչ մէկ բառ:

Է՛հ, ինչ աշխարհ է:

– Աղջիկս, ըսաւ մայրը, ի՞նչ կը կարծես, դուստր կարդացած ես, պիտի դա՞յ տղաս նորէն:

– Անշուշտ, ի հարկէ պիտի դա՞յ, – պատասխանեց աղջիկը արտօյ, մեքենաբար:

– Ըսել կ'ուզեմ, կեանք է, հազար տեսանիւթ եւ աներեւոյթ փորձանշաներ կան... Ինք դեռ այնքան անփորձ է...

– Լաւ կ'ըլլայ, մայրիկ, յոյսդ Աստուծոյ վրայ դիր:

Դէմքը պաղ, կարծես անպուծ իսկ՝ արտայայտութիւն մը առած էր:

– Մեծ է զօրութիւնը, արդէն միակ ապական է... Ներող եղիք, քեզ կը ձանձրացնեմ ցաւերովս... Աստուած սրտիդ համեմատ տայ...

Ձգտեցաւ ինչու, վերջին խօսքերը աղջկան սրտին դպան, ցայտեց արցունքը, լեցունցաւ աչքերուն մէջ, լոյսը սղտորեցաւ, նայուածքը ճաճանշով վառեցաւ, բայց չթողուց որ հոսի:

Վինչ յիմար եմ, – ըսաւ մտովի, – ի՞նչ կապ անոր եւ իմ միջեւ...

Տարբեր տարբերութիւնը կը մոռնամ... Անկարելի երազ...

Բայց կեանքը անդուռալ է, պայմանադրական օրէնքներու չի հպատակիր: Երբեմն, մինչեւ իսկ, կը սիրէ անկարելի դրութիւնները, հոսեւով դժուարին ու զարտուղի հսկներու մէջ:

Ձեռ գիտեր ինչու, սէրը կապած էր տղա տղուն, որ վստահ էր, չէր իսկ հասկցեր իր սիրտը: Կրցեր էր, այսքան տարի, պահել իր կուսական առաքինութիւնը, չափաւորել հասուն աղջկայ իր հրայրքը. կարճ խօսքով՝ ապահով անցնիլ փորձութիւններու կամուրջը: Փանի քանի երիտասարդներ վազեր էին ետեւէն, ջանացեր՝ իրենց կախարդող խօսքերով հմայել զինք: Ի դուր: Առաքինութեան դրանը պաշտպաներ էր զինք: Խնդրեր էին իր ձեռքը, – մերժեր էր:

Դիրքին չէր եղեր պայքարը, անշուշտ: Բնական փորձութիւնները եւ առաքինութեան ձայնը: Դժուար էր զսպել արեւան ընդվզումները, կեանքի կանչը: Պատուաւոր եւ հպարտ կիները գիտեն այդ անկարելի պատմութիւնը:

Բաղնիքէն վերջ, երբ կը դառնար իր սենեակը, կը կողկէր դուռը ապահով մը, կը նետէր վրայէն ափածանին եւ պահ մը, մերկ կը մնար հայտնիին դիմաց:

Մոգական բիւրեղին մէջ կը ծաղկէր շուշանն իր մերկ մարմինին: Լեցուն կոնքերը, բարակ ու գալարուող մէջքին կը հալէին՝ դոյացնելով շնորհալի ծալք մը: Կուրծքին՝ պինդ ու սրածայր երկու ծիծեր, զոդորէկ՝ իր ալացիկ հասակին համար: Այր մարդու ձեռք դպած չէր անոնց տակաւին: Մնացեր էին կոյս եւ ինքնամփոփ:

Կը նայէ՛ր, կը նայէ՛ր, կը զմայլէր իր մարմինին: Դիրքեր կը փոխէր, ծալքեր կը գոյացնէր, անկիւններ կը փորձէր, – կը շիկնէր իր այս դաղտուկ խնթութիւններէն, սենեակի առանձնութեան մէջ:

Ոչ ոք, բացի իրմէ, ոչ մէկ էակ տեսած էր այդ մերկութիւնը:

Ձգացումը շոյող հպարտութիւն մը կը պարփակէր: Միաժամանակ, ափսոսանք մը, նաեւ Գուցէ, – եթէ այդպէս երթար, – ոչ ոք պիտի տեսնէր երեսաստորէ կեանքի այդ հրաշքը:

Աչքերը յուսահատ դողով մը յառեցան հայելիին: Օր մը այս չքեղութիւնը պիտի թառամէր, առանց սիրոյ կախարդանքը վայելելու: Գուրբի զգացում մը բարձրացաւ իր անձին հանդէպ: Խորը վէրք մը բացուեցաւ: Մածկեց մերկութիւնը, արագօրէն հագուեցաւ: Դէմքին թռած էր ներքին

հրճուանքին ճառագայթումը: Մազիկը թերթերը ծալեց վրան ու թաղեց իր դանձր:

Պարապ աշխարհ էր, բոլորովին պարապ:

Ջայրացաւ ինքզինքին, որ սիրոյ նման դժացումներ սնուցած էր Լեւոնին հանդէպ: Հազիւ երիտասարդ մը, իրմէ տարիներ փոքր: Ի՞նչ ցնորք: Անկարելի երազ: Մարդիկ պիտի ծիծաղէին վրան: Մոռնալու է ամէն բան, քանի որ չէր: Ի՞նչ խենթութիւն: Երբեք այսպէս տկար եւ անզղոյշ եղած չէր: Մոռնալու է, մոռնալու է:

Յետոյ, մինչ կը չորցնէր մազերը, ուղեց բացատրել թէ ինչու էր կապուել արդ տղուն, երբ այնքան ուրիշներ մերժեցին էր:

Տղան գիշերուայ նման աչքեր ունէր: Տարօրինակ բոց մը կը վառէր անոնց մէջ. խորունկ, հազիւ նշտորելի, բայց կը զլայլէր, որ յանկարծ կընար բոցավառել եւ աննել քեզ օղակներուն մէջ: Ատկէ ետք – ալ կորսուած էիր: Այո՛, ճիշդ այդ, կորսուած էիր: Վտանդ, որմէ կը դարձուրին կիները, բայց եւ, պայքարելով հանդերձ, կը սիրէն ինչալ կախարհանքին:

Հակառակ իր տարիքին, իր երկշտուութեան, – հրապոյր մը իրեն նման աղջկայ մը համար, – Լեւոն երբ նայէր իր աչքերուն, կը սարսուար ինք տեսակ մը, կը զղար՝ որ կ'իմ էր, ոտքէն մինչեւ գլուխը: Ո՛չ ոք այս հակադրեցութիւնը ըրած չէր իր վրայ:

Կը զգար որ կ'ին էր: Եւ կը տկարանար, կը հալէր անոր ներկայութեան, թէեւ արտաբնական կը պահէր իր անտարբերութիւնը: Հիմա, որ հազարաւոր մղոններով բաժնուած էին, երբ կը մտածէր Լեւոնի մասին, ծունդէր անոյն անոյն կը քակուէին, սիրտը կը հալէր:

Բաժանումին օրը, տուն դարձին, քաշուէր էր սենեակը եւ ժամեր, աղջնակի մը պէս, լացեր էր:

Յոյս մըն էր, որքան ալ ցնորական, բայց կը լուսաւորէր իր գոյութիւնը, պարապը ջահերով կը լեցնէր: Ի վերջոյ, մենք բոլորս, գիշերուայ խաւարին քալող ու վախէն դողացող մանուկն ենք, որ լոյսի մը կը կառչի:

Հիմա, ոտկայն, կտակածը արթնցեր էր: Կասկածին զաւակը, նախանձն ալ, կանանչ տղերը յառած էր իրեն:

Անպայման, բռնուած էր ուրիշի մը: Տարեկից, թեթեւ, դուարթ աղջկայ մը: Ու մոռցած էր զինք: Գուցէ, աւելի սարսափելին, կեանքի ճամբաներուն մոլորելով, հասած էր արգիլեալ նկուղներու, ինկած էր կնոջ ճանկը, ճանչցած էր կենաց պտուղը:

Սարսափելի էր:

Քանի անգամ ուղեց գրել: Ձկրցաւ:

Այդ գիշեր սակայն, դեռ իր անձին հանդէպ զգացած գուրջ հանդարտած չէր եւ ժամանակին անցքը շատ ուժեղ կերպով կը զգար:

Գրեց: Կարեւոր չէ մանրամասնութիւնը: Գրեց այնպիսի խօսքեր, որ՝ իրենց միակ սէրը ընդմիշտ կորսնցնելու վախը զգացող կիներ ծաղկէին: Կարեւորութեան, խնդրեց որ նամակը կարդալէն ետք, այրէ անպայման:

Այդպէս ալ եղաւ: Ինչ որ դրեց թագուհին յուսահատութեան ժամին, մնաց իր եւ Լեւոնին միջեւ:

»

«Պարազանդէս դնա՞ց, թէ չգնաց», կը մտածէր Լեւոն, սենեակին մէջ ֆալելաւ։

Հարցումը յիսուն տնգամ հարցուցեր էր, առանց եղրակացութեան։ Նախանձի նման տղեղ բան մը կը սողար կոկորդիսի վեր։ Հիմա, ուրիշի մը թեւերուն մէջ... Ի՞նչ սոսկալի մտածում...

Քայլերը արագացան, վանդակի մէջ քանտուած վայրի կենդանիի մը նման։ Ճակատը կ'այրէր, քրտինքը թաց թաց կը սահէր քունքերէն։ Կ'անիծէր, երբ հանդիպեցաւ աղջկան։

Ուղղադուծիներ խռոված էր։ Ինք դեռ շատ րնելիք ունէր, երկար ճամբայ ունէր կտրելու, իրաւունք չունէր աղջիկներու հետ զուարճանալու։ Մանաւանդ այս մէկուն հետ. յեղիկդուկ, քմայքոտ, անվստահելի։

Կը սիրէր աղատութիւնը։ Ազատ էր եղած միշտ։ Միայն մէկ կապ ունէր աշխարհի վրայ. — մայրը։ Կապ՝ որ կեանքը կը լեցնէր ու նպատակ մըն էր։

Այս մէկը, այս ճերմակ սատանա՞ն։ Արդէն սկսած էր իր ոստայնը հիւսել շուրջը։ Միայն հիմտ, տնցած օրուայ վէճէն հտք, նոր էր զգացեր, որ ինկած էր ցանցին մէջ։

Ախրը պահեր էին շոյանքներու հպումն ու ջերմութիւնը։ Շրթներուն՝ կը մեղմանար համոյրներուն համը։ Եւ դեռ զգեստին մէջ սեղմած տնտես կորուսիւններու եւ ծախքերու անզիմադրելի թելադրանքները, որոնք երեւակայութեան մէջ կը լրանան ու կրակ կը հալնին։

Ճերմակ սատանան մտած էր մորթին տակ եւ կը պարէր միսերուն մէջ։

Կատաղած էր ինքզինքին դէմ, իր տկարութեան, միամտութեան, որ ինկեր էր ցանցին մէջ։

«Գնա՞ց պարազանդէս, թէ ոչ։

Ուրիշի մը թեւերուն մէջ... որքա՞ն սեղմուած են...

Արիւնը ցատկեց գլուխը, շնառուծիներ դժուարացաւ, սիրտը մոլեղնած էր։ Անհնար էր չորս պատերու մէջ սեղմուել։ Ինքզինք գուրս նետեց։

Գիշերը զով մատները դրաւ ճակտին, խուժեց թոքերէն ներս եւ հանդարտեցուց խռովքը։

Քայլեց, անցաւ կամուրջը, բռնեց լերան ճամբան։ Ոտքերը երգեցին խճաքարերու վրայ։ Բլուրին վերեւ կանդ առաւ։

Վարը, հովիտին մէջ, քաղաքը լոյսերու լիճ մըն էր։ Պայծառ մշուշ մը կը ծփար քաղաքին վրայ։ Տեղ մը, չքեղ ջահերու տակ, տեղ մը, Լոռան կը պարէր ուրիշի մը հետ։ Աչքերը վառեցան, որոնցքին բնականաբար, ճգնեցան գտնել սրահը, ճշգրիտ վայրը։

Վերը, անթափանց գիշեր էր։ Ուղղաղ ու կայուն։

Բարձրացաւ արահետէն։ Մայրիներու բոլոր գինովցուց գինք։ Աստղեր քթիկերէն մի ան մի։ Կիրքը հետզհետէ յատակ իջաւ, պայծառացաւ սղոթորութիւնը։

Վերը մաքուր էր, անդորրութիւն յաւիտենական։ Զեւքը երկարեց, րոնեց աստղ մը։ Պաղ ծովը երգեց աղանջին։ Ներսը, խորունկը, ակ մը ցայտեց։

«Քեզ բերեմ, բաւ հովր, լեռներու վայրի ծաղիկներու հիւթեր թուաւոր, կապոյտ անձաւներու մէջ լոյս շտեպող պարիկներու հնարքներ, որ

կախարդես ազնիվն այդ ըմբոստ։ Ան կր դառնայ հլու գերին կամբիդ, աւրեւածադիկ մ'ինչպէս կր շրջի ծիրիդ մէջ...»

Ու բերաւ Հովր յետներու անյայտ ծաղիկներու մոգական հոգիներ եւ կախարդանքը պարիկներու հմայող...:

Օրերն յաջորդեցին օրերու, սպասումի երկար պահերուն վրայ՝ դաւրունը թափեց իր ծաղիկները, եւ ժամանակը — Մեծ Իմաստունը — չուգին նստած դարաւոր հերթաթիւներով օրօրեց պահը:

Գտած էր արտին մէջ պոհուած դանձը եւ ազաւորէն կը վերցնէր որքան կրնար: Իսկ դանձը անսպառ էր: Լայնցեր էին զոյութեան սահմանները: Հիմնական զոյներէն կը նստուէր զէպի երանգներու խրթին աշխարհը: Արդիւնքներէն կը թափանցէր պատճառներուն: Անյայտ գոյներ կը բաւար: Մոռցուած յիշողութիւններ մէկէն կը ցատկէին, հնթադիտակցութեան խորը պատկող տպաւորութիւններ կ'արթննային: Դարեր, դարեր հին: Եւ նոր ու մտերիմ, կարծես երէկ էր:

Իմաստներ ու խորհուրդներ կը տեսնէր հոն, ուր նայած էր անտարբեր, այսքան ատեն:

Հիանալի էր: Այսքան ատեն քնացեր էր:

Ու կը կարդար, կը կարդար: Բանալիները հոն էին: Տանգէ, Կէօթէ, Ծէյքափիր, Հիւկո: Վարուժան, Մեծարենց, Գուրեան: Բանալիները հոն էին: Ինչպէ՛ս կոյր էր եղեր մինչեւ հիմա:

Բնութիւնը, գիրքերը — միջոցներ էին իր անձը գտնելու: Ըմբռնելու իր յարաբերութիւնները տիեզերքին հետ: Իր անձը միակ եւ ուղղակի թաղուածքն էր տիեզերքին վրայ: Ինքն էր սկիզբը եւ վախճանը: Այնպէս յրատակ էր: Աշխարհը, կեանքը, տիեզերքը իրեն հետ կը սկսէին եւ իրեն հետ պիտի վերջանային: Միակ իրականը՝ իր անձն էր: Եւ սակայն, իրմէ առաջ եւ իրմէ վերջ՝ կեանքը պիտի շարունակուէր: Անխելի թելերով կապուած էր անցեալ կեանքին: Տիեզերքի բնաշրջումն ու պատմութիւնը խառնուած էին իր մէջ: Կեանքի հրաշքը, իր բովանդակ բարդութեամբ եւ լրիւ հսկողութեամբ խառնուած էր իր անձին ու մարմնին մէջ: Կեանքը բռնած էր արին մէջ՝ տաք ու տրոփուն:

Եւ սակայն, կեանքը հոսուն էր անխելի եւ իրմէ վերջ, պիտի շարունակուէր անարդէյ: Այստեղ շփոթ մը կար, հսկասութիւն մը դուցէ:

Դեռ այնքան գտնելիք կար: Եւ մարդն էր մեկնակէտը, մարդն էր Մեծ Անծանօթը: Բնութիւնը կիսով, մասնակի յայտնութիւններ կ'ընէր: Խորհրդանշաններով կը խօսէր: Մարդը կ'իջնէր աւելի խորը, կը լրացնէր տնկատար յայտնութիւնները, կը քահէր խորհրդանշաններու լեզուն:

Եւ ահա, օր մը, հանդիպեցաւ Ռէյմարանտին: Յնցողիներ հազած, հեղնական դառն ժպիտը բերին: Առեղծուածային, խորունկ, — միաժամանակ, ամէնօրեայ, մարդկային: Գտած էր իր մարդը, իր հարազատը: Այս աէրվիչը խմած էր Արեւելքի լոյսը եւ գիտովցած: Գախարդ մըն էր: Առաւօտները Աստուածաշունչ կը կարդար: Ձիթենիներու լեռը կը բարձրանար, մաքսուորներու եւ պոստիկներու հետ սեղան կը նստէր, Յուդաներէն կը մտնուէր: Գողգոթա եւ խաչելութիւն:

Ու կը նկարէր մարդը — իր անձը: Տարբեր տարազներու մէջ, տարբեր լոյսերու եւ պահերու: Անձը իր բազմապիսի երեսներով, ողբերգական, հեղնոյ, Համէլէթ մշտախռով:

Օր մըն ալ լսեց Պախը: Պատահօրէն, հին ձայնասփիւռի մը խոսքոտ կողորդէն:

Յայտնութիւն մըն էր: Ցնցուեցաւ: Սրբուեցաւ տախտակը եւ սեւ տարածութեան վրայ նոր խորհրդանշաններ ճառագայթեցին: Անգուշող չէր ճանչցեր դեռ: Անթափանց խաւարին մէջ տորքեր կեանք մը կը յուզուէր: Լայն ալիքներով, խորունկ թրթռացումներով: Նիւթական լոյսը չի թափանցեր հոն: Երբ աչքերը մութին վարժուն, անյայտ արեւներէ ցոլօք կ'իյնան հոն (Ռէյմարանտի մարած ոսկիի եւ այրած կարմիրի երանգներ) եւ կը հասնիս լոյսին, որ աւելի հզօր է եւ տեւական, քան արտաքին լոյսը: Այլեւս կը տեսնես հողիով:

Երբ՝ որ շարունակ կը փոխուի, կը ցայտէ ամէն ուղղութեամբ, գոյն, կշռոյթ կը փոխէ, բայց կը մնայ նոյնը, կը թաւալի նոյն կեդրոնին շուրջ: Հիմնական ու տիեզերական:

Պախ եւ Ռէյմարանտ:

Եւ անձը:

Ձգողական նոյն կեդրոնին շուրջ, միշտ այլափոխուող եւ նոր, լոյս ու մութի հոլովոյթ:

«Անձը, անձը, — կը զոչէր, — հիւսնալին, սկիզբը, վախճանը: Կենրոնը»:

Ժամանակը, Մեծ Իմաստունը, առած էր զայն իր թեւերուն մէջ եւ կեանքը՝ ականջն ի վար՝ իր կախարդանքը կը կաթէր...

Շարաթներ անցեր էին, Լոռայէն լուր չկար:

Առաջին օրերը, խենթի պէս փնտռեր էր: Գիշերները մանաւանդ, մագնիսական բոլորը, լրթներուն փերմութիւնը եւ նման ցանկութիւններ դարձուցեր էին դինք անկողինի մէջ: Թեւերուն մէջ զգացեր էր անոր մարմինը եւ ծարաւը աւելի՝ հրահրեր էին տարփանքին աղի ջուրերը: Ուղիւ էր հեռաձայնէլ, երթալ տնոր, պարզապէս, բան չպատահածի նման — չէր կրցեր:

Սպասող աշխատանքը՝ գիշեր ցերեկ, ընթերցումները, երկար պըտոյտները մասամբ հանգարտեցուցեր էին հրայրքը: Զէ՛ որ ելած էր բընութիւնը եւ անձը փնտռելու: Աղջկայ մը համար քիչ տեղ կար: Մանծաղամիտ էակը, որ պարահանդէսէ պարահանդէս կը թռչկոտէր, երբ գութոր, ներսը, սրբազան տուամը կը հոլովուէր:

Այս փերմացնող օրերուն հետ սակայն, ըզձանքը կրկին արթնցեր էր: Սիրոյ զգացումը առնչութիւն մը ունէր բնութեան եւ անձին հետ: Սխալեր էր կարծելով, որ աղջիկը դեր չունէր այդ հոլովոյթին հետ: Հիմա կը զգար, որ սէրը ուժեղ դերակատար մըն էր սրբազան թատերադրութեան մէջ:

Այս սէրը, չըմբռնուած զգացումը, միւս կը խառնէր ջուրերը եւ լոյսն սէ ճանկեր կը նետէր զէպի յատակը: Կարգ մը խորհրդանշաններու լեզուն, սէրը գիտէր միայն: Եւ բնութեան վրայ եւ երազին՝ սիրոյ աչքերն էին, որ կը լացունէին: Եւ անձը — հիմա կը զգար — թրծուած էր լոյսով, ստուերով, արիւնով ու արցունքով, ինչպէս կ'երգէր Վարուժան, բայց չաղախը սիրոյ նիւթէն է, որ կը պնդուէր:

Միտն'կ էր, միտն'կ: Բնութեան մէջ, սենեակին եւ հողիին: Միտն'կ ու դժբախտ: Ու կ'աղաղակէր:

— Եկո՛ւր, եկո՛ւր:

Խոտին վրայ պառկած, կը դիտէր լիճը: Զուրի մէջէն իրեն կը նայէր հնդիկի թուր զէմք մը, որուն նայուածքին մէջ կարծես արցունքի մը լոյս:

որ կը դողար: Շուրջը ծառերը շունչ բռնած, ուղղաձիգ, մթին ստուերնե-
րով, մեհենակա՛ն:

Կը նայէր լճին ու կը մտարերէր հեքիաթը:

«Տղան կը դիտէր լիճը ու յանկարծ, իր դէմքին մօտ, լուսնկայի նը-
ման ծաղկեցաւ հուրիի գէժքը...»

Դեռ կը հաւատար հեքիաթին: Տարիները, յօշոտումներն իսկ չէին
կրցեր սպաննել երազը: Կը նայէր, կը նայէր ու կը յուսար, որ փթթէր
տեսիւր սիրոյ: Փակեց աչքերը, ջանաց երեւակայութեան պատաստին վը-
րայ բերել անոր լուսէ գէժքը: Աչքերը ակնակէտ, ճգնեցաւ — ի զուր: Պատ-
կերը շնաղկեցաւ:

Գլուխը բարձրացուց, աչքերը քայաւ: Դիմացը, միւս ափը, կանա՛ծ
էր տեսիւր: Ոտերը բոպիկ, մազերը մուժ խորքին՝ ոսկիի ցուքեր բռնած:
Հագեր էր կարմիր, որ կանաչներուն մէջ կերբով կը տրոփէր:

— Հա՛յ, կանաչեց, կը յիշե՛ս զիս:

Տղան մռայլեցաւ, չպատասխանեց:

— Դեռ բարկացա՞ծ ես:

Տղան լուռ էր:

Մօտեցաւ, ցատկոտելէն, չըջողէտոնին կարմիրը կանաչին վրայ պը-
տրտցնելէն, մտաւ ջուրը, մինչեւ ծունդերը մերկացաւ, սրունքներուն սա-
տափեայ ցուքերը փչրեց ջուրին մէջ: Հասակը թրթռաց: Կրկնուեցաւ տե-
տիւր: Դէմքը հետզհետէ կը ճառագայթէր, մինչ միւսը, լճին մէջ, կ'ախ-
լայլէր, կը փչրուէր, ամէն պահ կը վերաշինուէր ու կը տարբարւո՛ւնէր:

«Ճիշդ հակառակը պէտք էր ըլլար, մտածեց, իրականութիւնը կը ծե-
րանայ, կրկնորեւոյթը կը տեւէ»:

— Դեռ բարկացա՞ծ ես:

— Թութա՛կ, իսկական թութակ:

— Սորվեցուր, ըսաւ աղջիկը, սորվեցուր ճշգրիտ բառերը, որ կըրկ-
նեմ: Դուն տխրանի որեւորիսս ես: Գիտեա ինքզինքդ արտայայտել: Երբեմն,
կը նախանձի՞մ քեզի: Ի՞նչ երանութիւն է զիտնալ լիզուին մէջ ճշգրիտ բա-
ռերը... Դուն բանաստեղծ ես...

— Շողոքորթ, իսկական շողոքորթ մը:

— Կին եմ:

— Ի՞նչ կ'ուզես հիմա:

— Ուզե՛լ: Ոչինչ: Ըսել կ'ուզեմ, չեմ գիտեր: Պէ՞տք է բան մը ուզեմ:
Եթէ այդ շնորհքին արժանացայ, ուրեմն պիտի ուզեմ... քողցը նախաձե-
քը, քաղցը խօսք մը...

— Աղուէ՛ս:

— Շնորհակալ եմ: Արեւելքը, կ'ըսեն, երեւակայութեամբ հարուստ է:

— Ինձի նայէ՛, — ըսաւ աղան խիստ, — լաւ մտիկ ըրէ՛... Նստէ՛,
հո՛ս... Շատոնց է կ'ուզէի ըսել քեզի...

Աղջկան սիրտը ցտակեց, լեզուին ծայրը եկաւ: Աչքերը մէկէն վա-
ռեցան, մեծ անկախութիւնը տապաստները պարզեց, ուռեցաւ երանու-
թեամբ: Վերջապէ՛ս, վերջապէ՛ս հպարտ արեւելքին պիտի ըսէր...

— Ըսել կ'ուզեմ... Օ՛ր, սատանան տանի... Ըսել կ'ուզեմ... Եթէ...

— Այո՞ո:

— Եթէ միտքդ ամուսնութիւն է... յոյսդ կտրէ... ես ամուսնացողը
չեմ...

Աղջիկը նուազում մը ունեցաւ: Նախ կարմրեցաւ, կարծես պիտի ճաթէր, ապա մէկէն արիւնը պարպուեցաւ դէմքէն, ճերմկեցաւ թուղթի պէս, դիտու պտոյտ ունեցաւ:

— Կ'ուզէի շատոնց ըսել... ես դրամ չունիմ... ես մայր մը ունիմ...

— Փերեզա՛կ, — դռնէն աղջիկը աշխարհի ձայնով մը, որմէ վախցաւ: Երբեք այսքան նուաստացած եւ ընդզամ չէր կեանքին մէջ: Մարմնով կը դողար: Աչքերը պզտոր կը տեսնէին:

— Փերեզա՛կ, դուն կարծեցիր որ ես ծախու ապրանք եմ... Դուն կարծեցիր, որ այս ամբողջ ժամանակը ես... Օ՛, ամուսնանա՛լ... քեզի՞ չեա... Լուսնոտ... քեզի՞ չեա... Աստուած չընէ...

— Կարճ կապէ, — պոռաց տղան:

— Վայրենի, լուսնոտ... Կ'ատեմ քեզ... եւ ըսել որ եկայ, որով՝ չեա... չկրցայ մոռնալ քեզ... Օրեր, գիշերներ... Օ՛, օգուտն ի՞նչ է... Թող հպարտութիւնդ դժնայ... կը սիրէի քեզ... խենթի պէս... կարծեցի որ... օ՛, օգուտն ի՞նչ է...

Տղան զգաց, որ էշութիւն մը եւս պործած էր: Բայց հպարտ էր: Տեղի չտուաւ:

— Ամէն ինչ ըսուած է... կրնաս մեկնել...

Աղջիկը թօթուեց ոսկի բաշերը, նայուածքին մէջէն ամպրոպներ կ'անցնէին: Մտուկեց ոտքի: Մօտեցաւ տղուն, այնքան՝ որ աչքերուն կրակը զգաց տղան դէմքին:

— Բնաւ մէկը ըսած է քեզի, որ դուն է՛լ մըն ես:

— Ի՞նչ:

— Է՛լ, չորքոտանի է՛լ:

Այնքան արագ պատահեցաւ: Ոչ ոք իմացաւ ինչպէս: Երկվայրկեան մըն էր: Յաջորդ բանը, որ կը յիշէր — աղջիկը կոնսակին վրայ պառկած էր խոտին մէջ: Բերին եզրէն արեան բարակ երկղ մը:

Տղան դեռ դրդուած, մէկ կողմէ կատղած էր ինքզինքին դէմ, միւս կողմէ՝ լեցուած արդահատանքով ու խղճահարութեամբ:

Թաշկինակը թաթիկեց ջուրին, արսկեց Լուսայի ճերմակ դէմքին, աղջիկը ցնցուեցաւ, դողաց, բացաւ կարմրած, թաց աչքերը, որոնց մէջ խորունկ տառապանքը եւ վախը միախառնուած էին:

Լեւոն դրկեց աղջկան վրախը, անհուն խանդաղատանքով դրաւ ծունդին, մազերը շոյեց, օրբեք վարդազոյն գիծը բերնին քովէն: Նուաստօրէն, քնքշութեամբ, որ օտարոտի էին իրեն համար, հծծեց:

— Կը ցաւիմ:

Առաջին անգամն էր:

Աղջիկը նայեցաւ իրեն, նուրբ ու բարի ժպիտ մը հազիւ գծապրուեցաւ շրթունքին մէկ կողմը, չիօտեցաւ, աչքերը նորէն փակեց: Դէմքին վրայ՝ յսկած, անոյշ երանութիւն մը:

Նոյն գիշերը, առն դարձին, սեղանին վրայ նստակ մը գտաւ Եգիպտոսէն: Թագուհիէն էր:

Նետուեցաւ բազկաթոռին մէջ եւ բացաւ նստակը: Կարգաց, վերջացուց:

«Գիտէի, պիտէի, միայն վստահ չէի», մըմնջեց:

Կրկին կարգաց, երազանքի մէջ կոխուեցաւ:

Այդ գիշերը, կրկին անգամ հարկադրանքը զգաց բաղդատելու Լուսան:

եւ Թադուհին: Աչքերը փակեց եւ պատկերացուց երկու աղջիկները: Երկուքն ալ կը սիրէին զինք: Բաղդասեց: Հիմնովին տարբեր էակներ էին:

Լոռան ճառագայթ մըն էր: Փայլուն, գեղեցիկ ու հշտագին: Զգայարանները կը պահէին անոր ջերմութիւնն ու բոյրը: Ուրիշ էր: Անհամատրէն ուրիշ:

Եւ սակայն: Աչքերը ուժղին սեղմեց եւ ջանաց որքան կարելի է պայծառացնել տեսիլքը: Եւ սակայն, Թադուհին իր սպանական մորթին եւ աչքերուն՝ թովշանք մը ունէր: Անդունդին թովշանքը: Լոռային ծաւի նայուածքը արեւոտ թափանցկութիւն մըն էր, որուն յատակը խորունկ չէր: Համելի երազայնութիւն մը միայն:

Կը զգար կերպով մը, որ Թադուհին, — այդ զուսպ, վերապահ, մինչեւ իսկ պաղ աղջիկը լեցուն էր խոացած յոյզերով, որոնք կրնային որեւէ պահու բոցավառի, փոթորկել յատակը եւ նետել մակերես:

Ճիշդ իրեն պէս:

Այս գեղեցիկ էակը համով էր, թարմ, հշտագին: Արեւոտ օրուայ մը կազդոյրն ու շոյանքը:

Միւսը, (մէկէն դիւա մը ըրաւ կարծես) մեծ կիրքերու ատակ էր: Իր պաղութիւնը ինքնապաշտպանութեան պատեան մըն էր պարզապէս:

Ճիշդ իրեն պէս:

Յիշեց անոր եկեղեցասիրութիւնը: Աղօթքները, զորս քիչ մը շատ կը կրկնէր: Յիշեց խօսքեր, նայուածքներ, որոնց կարեւորութիւն իսկ չէր ընծայած: Հիմա, յստակ կը դառնային: Այդ աղջիկը տեւարար կը ջանար, զուսպ սուսայտանքով մը, մեղքէն խուսափել:

«Եւ մի տանիք զմեզ ի փորձութիւն»:

Քիչ մը շատ կը կրկնէր:

Ինք ալ նոյն ցաւէն կը տառապէր: Մեղքի մէջ չիյնալու համար, տեւարար կը պայքարէր ինքզինքին դէմ: Անոյ ըստերու մարմնեղէն մզմաւանջը կը տուայտէր զինք: Բանաստեղծօրէն. — Նիւթն ու ոգին կ'ընդհարէին իր մէջ տեւարար:

Թադուհին նամակը — յարգելով անոր բաղձանքը — յանձնեց կրակին: Բոցը կոցեց թուղթը եւ ազակօրէն լսփեց: Մղում մը ունեցաւ բոցը մարելու եւ փրկելու նամակը. ձեռքը օտաջ չտարաւ, սակայն: Սեւ գիծը կամաց կամաց մոխրացուց թուղթը:

Ոչ ոք իմացաւ այն՝ ինչ որ գրուած էր այդ նամակին մէջ: Մնաց Լեւոնին եւ Թադուհին միջեւ:

Դպրոցի շրջանը լրացաւ:

Յուանիսի սկիզբն էր: Երեք ամիս փակ էր դպրոցը: Պիտի կարենար աշխատիլ եւ վճարել պարտքերը: Յաջորդ տարի պիտի մտնէր համալսարան: Արդէն գրուած էր Պոսթընի համալսարանը:

Ճաշարանապետը, որուն ճաշարանը պնակ կը լուար երեկոնները, իրեն գործ առաջարկած էր ամառուայ շրջանին: Պիտի հայրթայթէր նաեւ քնակարան եւ սնունդ: Ամսական ալ որոշ զուսպ պիտի ստանար: Պայմանները ձեռնադրու համարած եւ ընդունած էր արդէն:

Անհաճոյ զգացում մը համակեց զինք մէկէն: Փնտուկ պատճառը ու գտաւ: Լոռան պիտի վերադառնար տուն. կու գար մօտակայ գիւղաքաղաքէ մը: Քանի մը օր ունէին:

Գնաց, գտաւ Լոռան, ժամադրուեցաւ երեկոյեան համար: Այդ երե-

կոյ իր արձակուրդի երեկոն էր, չէր աշխատեր ճաշարան:

Կ'անձրեւէր առաւօտէն: Գարունը, ոտքերը բոսորէ, ինկած էր ջրե-
րու մէջ, ծափ կու տար ու կը պարէր: Երկինքը կը դուար, լեռները դա-
րացի էին, տեսողութիւնը պղտորած: Բլուրներէն դետեր կը վազէին, փո-
ղոցները ողողուած էին:

Ա'ն քեզի բախտ: Քանի մը օր ունէր եւ ա'ն քեզի բախտ: Փակած էր
ապակիին, որ իր շունչէն ժուշ հալաւ: Տանիքին վրայ անտես ոտքեր կը
պարէին: Բայց այսօր, երզը զինք օրօրելու տեղ, կը ջղայնացնէր:

– Ի՞նչ աղուոր է, Լիօ, – ըսաւ տանտիրուհին, որուն մտնելը չէր
լսած, – շատ ուրախ չես, ի՞նչ է, յուսամ ամէն ինչ լաւ է:

Այս կիները, – ըսաւ տղան իւրովի, – ամէն ինչ կը հասկնան: Գրաւ
կը դնեմ, որ դիտէ ամէն բան:

– Ի՞նչ է, վախճամ ժամադրութիւն ունիս... մի վախնար, կու գայ...
Երանի ձեզի... Հիմա ձեր վայելելու ժամանակն է... Աւելի ուշ, պարտա-
կանութիւններ, հողեր, հեանքը...

Մէկէն շնչառիկ նայեցաւ Լեւոնի աչքերուն.

– Այդ խարտեա՞ն է... աղուոր աղջիկ է... կը շնորհաւորեմ ճա-
շակդ... Աղուոր զոյգ մըն էք... Անցած օր դիտեցի ձեզ կամուրջին վրայ...
դուն թուի, ան խարտեալ... Երանի ձեզի...

Տղուն միտքը ուրիշ տեղ էր, մէկ ականջով կը լսէր: «Ինչ է շարու-
նակ կը կրկնէ – երանի ձեզ», մտածեց: Ու մէկէն շարութիւնը բռնեց, ար-
դէն կոտակիք մէկը կը փնտռէր:

– Ինչո՞ւ շարունակ «Երանի ձեզ» կ'ըսէք, ձեզի ի՞նչ է եղեր... Գեռ
երիտասարդ էք ու...

Կիներ աչքերը լայն բացաւ ու զլուխը հարցական՝ ծռեց մէկ կողմ:
Ջարմանքը, դահուկակութիւնը եւ կասկածը – որ տղան զինք կը ծաղրէր –
միախառնուած էին:

– Լիօ՛, ինչե՛ր կ'ըսես... վստահ եմ բոլորովին անկեղծ չէիր... Ը-
սել կ'ուզեմ, այդ չէիր ուզեր ըսել...

– Ինչո՞ւ չէ, – ըսաւ տղան խորհրդաւոր ժպիտով մը:

«Արդեօք հե՞տս կ'իյնայ, թէ կը սիրաբանէ» մտածեց կիներ:

Կասկածանքով տղուն նայեցաւ, ժպտաց անհասկնալի ժպիտով մը եւ՝

– Դուն դեռ շատ ջանիլ ես...

Տղան չկրցաւ հասկնալ միտքը, չիկնեցաւ, զղջաց իր յանդուրժան
վրայ: «Յենթ եմ, ինչ եմ», ըսաւ ինքնիրեն: Վերջերս, կ'ըսէր բաներ, ո-
րոնց համար կը զարմանար հետագային եւ կ'ամչնար:

– Ուրեմն պիտի լքե՞ս մեզ շուտով:

Ազիտցան ինչո՞ւ, երկուքն ալ տխրեցան ու լռեցին: Մարդ պահպա-
նողական կենդանի է: Իր կլիման կը ստեղծէ եւ փոփոխութիւն չի սիրեր:
Այդ կլիման կ'ընդգրկէ մտերմութիւն, դուրգութեանք, թաղուն սէրեր:
Գաղջութիւն, որմէ կ'սխտրի սիրտը: Եւ ապահովութիւն:

– Օր մը չէ օր մը, պիտի մեկնենք, չէ՞, այդ է կենքը: Ձեզ պիտի
յիշեմ: Ծնորհակալ եմ...

– Come on, շատ լրջացար մէկէն, հարկ չկայ այդքան ողբերգական
ըլլալու: Ծառ հեռու պիտի չլքեմ, կու գաս կը տեսնես մեզ երբեմն, չէ՞.
Թէ մեղմէ կշառցար արդէն:

– Ինչե՛ր կ'ըսէք, Տիկին Նորա (առաջին անգամն էր որ կնոջ առա-

ջին անունը կ'արտասանէր), դուք քրոջ մը պէս (չտիրեց բառը) հագագիթ դիս: Ի հարկէ պիտի դամ...

– Come, come ընդմիջեց կինը, հիմա սկսանք պայմանադրական դառնալ... Come on, անձրեւը դադարեցաւ, մի սպասցներ խորտեալը... հաւատա, կը նախանձիմ ձեզի...

Ձարաճճի նայուածք մը նետեց ու անհետացաւ:

– Վախցայ, որ չեաւ զար:

– Խէնքէ հս: Ինչպէ՞ս նման մտածում կըցար ունենալ: Ո՞վ կրնար կեցնել դիս:

Ինքնաշարժը կը սուրբար:

– Ի՞նչ է, մտազբաղ հս:

Տղան չպատասխանեց: Թախծոտ նայուածքը յառեց լեռներուն:

– Ի՞նչ ունիս... չե՞ս ուզեր ըսել ինձի:

– Ե՞րբ պիտի մեկնիս:

– Երկու օրէն: Արդէն պէտք է մեկնած ըլլայի:

Լոցին: Աղջիկը անզգալարար կռիւեց լծակին, ինքնաշարժը թափ առաւ, սուրաց զեր: Մտերը խուճապահար կը փախչէին, սեւ ու մարմը կը չոքէին կատարներու վրայ, ջուրերը կը վազէին հակառակ ուղղութեամբ:

Հոռային ոռնդերը լայնցեր էին եւ աչքերուն, առաջին անգամ ըլլալով, վայրագ բոց մը կը դողդողար: Հոգը կը գալարէր մազերը:

– Մէյ մըն ալ ե՞րբ պիտի տեսնուինք: Ըսել կ'ուզեմ, աշնան, դուն Պոսթըն կ'երթաս, ես նիւ Եոթք:

– Անմ գիտեր, – ըսաւ տղան:

– Այնքան ալ դէշ պիտի չըլլայ, ի վերջոյ, – ըսաւ աղջիկը, – իրարմէ շատ հեռու պիտի չըլլանք, թերեւս, երբեմն...

– Անմ գիտեր, – կրկնեց տղան:

– Come on, թոթուէ այդ տիտուր դէմքը... Գիթը այնքան երկարեր է, որ բերնիդ մէջ պիտի իյնայ... Come on, chake it up...

Կանգ առին կատարը:

– Ահա աշխարհի ծայրը:

Մայր, քաղաք, կեանք՝ սուղեր էին յատակ: Կանգներ էին երկնքին մէջ: Տիեզերքը մօտեցեր, գրկեր էր զիրենք:

Հիանալի էր:

Գիշերը իջաւ: Գիշերը ձայն չունի: Միայն կը մրմնջէ: Հոգին կը սոսկայ ցերեկուայ հղօր լոյսէն. դիշերը, կը բացուի, կը մերկանայ, աւելի աղատ կը շնչէ:

– Այսպիսի դիշերներ, տանիքը կը պատկէնք: Մեր աչքերը յառած աստղերուն, ճիշդ այսպէս: Մեծ մայրս հիանալի պատմող էր, հազիւ կը յիշեմ, բարբարոս հեքիաթներ կը պատմէր...

– Պատմէ, ըսաւ աղջիկը:

– Տղան դրա՛ւ հագած կ'երթար կրուի: Հոգիտին մէջ կ'ապրէր վիշապը: Ոչ ոք կը համարձակէր անցնել հովիտէն... մարդ, անասուն կամ թռչուն... հովիտը լեցուն էր կմախքի մասերով: Վիշապը կալանաւորած էր գեղեցիկ հուրին: Աղջկան աղաղակները հովիտը կը պատռէին եւ երկնքի դռները կը ծեծէին: Քաջը հագեր է զրա՛ւր, սուրը պատեանէն քաշեր, կ'երթայ կալանաւոր գեղեցկուհին աղատելու...:

– Ի՞նչ հիանալի: Գուռ տեղ չես երթար կռուի, սէրը թեւերուդ մէջն է, վիշապն ալ դուն ես, որ կախարդեր ես զիս... պատմէ, վե՞րջը...

– Որո՞ւ հետ գացիր պարահանդէս:

Աղջիկը չո՛րհեց հարցումը, մոռալեցաւ:

– Պապին հետ:

– Պապը ո՞վ է:

– Ընկեր մը: Երբեմն մեզի կու գայ, սինեմա կ'երթանք:

– Ուրեմն այդպէ՛ս...

– Ի՞նչ կայ որ, չի՞ն կրնար տղայ մը եւ աղջիկ մը մաքուր կերպով բարեկամ ըլլալ:

– Քեզի եւ ինծի՞ պէս...

– Ոչ մեզի պէս: Ասիկա տարբեր է:

– Արդեօ՞ք: Ի՞նչպէս ճշդէլ սահմանները: Ուրեմն այդպէս... ամբողջ ժամանակը... ուրիշ որո՞ւ հետ կ'ըլլիս դեռ... այնքան տղաք կունայ քաղաքը... ամէնուն համը կը նայիս...

– Աղտո՛տ, աղտոտ միտք մը ունիս դուն:

– Աղտո՞տ... ըսիր՝ աղտո՞տ... ե՞ս... իսկ դուն որ հանդիպած տըղուդ հետ կ'ըլլես... ատիկա ի՞նչ կը կոչես...

– Աղտո՛տ, աղտո՛տ... այլեւս պիտի շտեմենա զէմքս, այնքան ասեմ որ կ'ապրիմ...

Կոճակը դարձուց, ոտքը կտակց լծակին, մեքենան մէկէն դուաց ու ցատկեց տալով:

Վերադարձը լուռ էր:

Վերջին գիշերն էր:

Ուշ տուն, ճաշարանէն դարձին, երբ մօտեցաւ իր բնակած տան, մոռթին մէջ կերպարանք մը մօտեցաւ իրեն: Ծանշցաւ Լոռայի ստուերը:

– Լեւո՛ն:

Առաջին անգամ է հայերէն կ'արտասանէր անունը:

– Վազը կանուխ կը մեկնիմ: Կ'ուզեմ բարեկամ բաժնուիլ: Ով պիտէ, մէյ մըն ալ երբ պիտի տեսնեմ քեզ: Եկուր նստինք ինքնաշարժիս մէջ: Տղան դժկամակութեամբ առաջացաւ:

– Այնքան ըսելիք ունէի, հիմա որ հետդ եմ, խօսելու փափաք չունիմ: Ինչ յիմար ենք... մեր ժամանակը վէճով անցուցինք, եւ ժամանակը այնքան կարճ է...

Թռչունի մը երգը ցայտեց ու լռեց:

– Վազը կը մեկնիմ... ով պիտէ մէյ մըն ալ երբ պիտի հանդիպինք...

Շատ կը ինքզինք, կ'ուզեմ որ ըսես... զիս կը սիրե՞ս... նախ քան պատասխանելը... ինծի համար շա՛տ, շա՛տ կարեւոր է... Անկեղծ եղիբ... կը սիրե՞ս զիս...

– Ձեմ դիտեր:

Իրապէս չէր պիտեք: Սիրոյ հուրիւնը դեռ անծանօթ էր իրեն: Յաճախ կարծած էր, որ կը սիրէր աղջիկը, ապա իրեն այնպէս թուած, որ սիրահարուած չէր: Այնքան դժուար է ճշդէլ սահմանները մարմնական զգայնութիւններու, երիտասարդական յափշտակութեան, սեռային ձգողականութեան եւ սիրոյ: Գուցէ սէրը այս բոլորին համադրութիւնն էր եւ անկին: Ձէր գիտեր:

– Բայց... փորձէ՛ք ճշդել... չա՛տ կարեւոր է ինծի համար, չա՛տ կարեւոր... մանաւանդ այս դիւէր...:

– Ձեմ դիտեր, – կրկնեց Լեւոն:

Աղջիկը մեքենան աշխատեցուց, կոխեց լծակին:

Քսան վայրկեան վերջ, կանգ առաւ անտառին մէջ: Լարուած, խիտ լռութիւն մը կայ անտառին մէջ: Ծղրիթներու միայն երգն ալ չի հասնիր հոս: Ամէն ինչ, շունչը բռնած, կը սպասէ խորհուրդի մը յայտնութեան: Մայրիները կը բուրեն: Սրբազան տրամը ներկայ է միշտ, լինելութեան մէջ:

– Դուն առաջին տղան ես, զոր սիրեցի:

Աստղերը պատուհանէն ներս թափեցան:

– Ձեմ ամառ... Միւսները խաղ էին: Հիմա կը հասկնամ: Առաջ մարմնական հաճոյք էր պարզապէս: Ասիկա տարբեր է, համարյո՞ւնքն, դիրկընդխանումներէն աւելի է: Աւելի խորունկ կապ մը: Մի խնդար վըրաս, ես սիրոյ ինչ բլլայլ չէի գիտեր: Այս ալ ըսեմ, այս ամէնը պիտի չըսէի, եթէ մեկնելու շրջայի: Բաժանումները, որքան ալ կարճ, իրենց մէջ կորուստին սերմը կը պարփակեն: Ասիկա տեղ մը կարգացած եմ:

– Ո՞րք մի բլլար, – ըսաւ տղան:

– Այս անգամ լուրջ եմ: Աւելի քան կը կարծես: Թոյլ տուր, որ գոնէ մէկ անգամ լուրջ ըլլամ: Ձէ՞ որ միշտ կը դանդաղուիս, թէ թեթեւ եմ, կեանքը լուրջի չեմ առնէր: Աղջկայ մը սիրտը... չեմ գիտեր՝ թէ դուն դեռ լիովին կը հասկնա՞ս աղջկայ մը սիրտը... Քեզ լիովին չեմ ըմբռներ, գուցէ այդ է հրապարակ: Տարերային բան մը ունիս, անսպասելի, հակասական: Երբեմն վայրենի բոց մը կը վառի աչքերուդ մէջ, որմէ կը վախնամ: Այդ պահերուն լուսնոտի մը կը նմանիս, որ շղթայի տակ առնելու է: Գիտես անհաճոյ եւ կոպիտ ըլլալու արեւելեան արուեստը: Գիտես կին մը վիրաւորելու հնարքները... ատոյ՜ աւելի ամուր կը սեղմես հմայքիդ կապերը եւ, ի վերջոյ, ահա, դարձած եմ գերիդ... Ուրախ չե՞ս...

– Ո՛չ:

– Սխալ բա՞ն մը ըսի:

– Դուն չես տեսներ, բայց հիմա որ այդպէս քաղցր խօսքեր կը հիւսես, բերերդ Փօսֆօնէ կանաչ բոցերով կը մտնին եւ... մազիւներդ պատրաստ են զոհին վրայ նետուելու...

Աղջիկը նախ դժկամակեցաւ, որ Լեւոն խուսափեցաւ իր հարցումէն եւ նիւթը փոխեց, բայց կնոջական ինքնասիրութիւնը սիրեց պատկերը եւ լեզուն, որով կը խօսէր տղան:

Սեղմուեցաւ Լեւոնին:

– Եւ այս լուստուոր, անմեղ ձեռքերը, որոնք խաւարին մէջ իսկ կը ճաճանչեն, միթէ՞ զիրենք սիրողը չե՞ն ճանկեր երբեմն, ըսէ՛, քեզոյ՜ նախ, ըսէ՛...

– Անշուշտ: Բնութիւնը բոլոր կենդանիներուն պաշտպանութեան միջոցներ է տուած... վայրի դապաններէն, երեւելի եւ աներեւոյթ վտանգներէն պաշտպանուելու համար... Դուն այդ լաւ գիտես...

Թռչունի մը երգը նորէն ջայտեց. տաք, սիրատուող, արեւնոտ երգ մը:

– Պատմէ՛ կեանքդ:

– Կեանք մը չի պատմուիր:

– Ո՞րտապար:

– Ուրիշ առթիւ:

– Պատմէ մօրդ մասին:

– Մայրս մի խառնէր, – ըսաւ անսպասելի կոպտութեամբ մը:

Աղջիկը չլմեցաւ, ապա սրտի ճմլում մը ունեցաւ: Ենթադիտակցապէս անը աւելի արագ կը շարժի, քան բանականութիւնը: Վատ նախազգացում մը պատեց զինք:

– Հարկ կա՞յ զիս վերաւորելու, մանաւանդ այսօր...:

– Ի՞նչ վերաւորանք:

Մայրս աշխտեղ ինծի համար կը սպառի, ես հոս աղջիկ կը խաղցնեմ, կը մտածէր լեւոն:

Մոռալիցաւ: Մոռալութիւնը փոխանցուեցաւ անտառին, աղջկան, կեանքին: Լոռան, առանց տեսնելու, գզաց որ տնոր մօրթը պռոնդէ գոյն եւ կարծրութիւն ստացաւ: Երթները սեղմուեցան, կարծես ընդմիջու լռեցին, արեւելեան աստծոյ մը պէս: Աղջիկը գզաց, որ իրարմէ հեռացան: Անանցանելի տարածութիւններ բաժնեցին զիրենք:

Քիչ առաջ, դեռ պահ մը առաջ, այնքան մօտ էին: Վերջապէս պատուարները յաղթահարուած կը թուէին: Հիմա, անդարձօրէն բաժնուեցան: Ասիկա գզաց խոր եւ յստակ: Դժուար էր այս տղան կապելը: Գուցէ ոչ ոք պիտի կարենար: Միայն էր փորձելն իսկ: Ազատ ծնած էր, ազատ պիտի սարէր: Անօղուտ էր:

Գուցէ (մէկէն մտածեց), ճիշդ հակառակն էր. որովհետեւ անապատ տարած էր միշտ եւ այդ իսկ պատճառով, կը նետուէր զէպի անկախութիւն՝ այսպիսի մոլեղնութեամբ: Գուցէ: Կարեւոր չէր: Էականը իր սիրտն էր հիմա:

Անսոսանքի խոլոր, տաք ու քաղցր արցունք մը: Ամէն ինչ հոն էր, այդ դողացող արցունքին մէջ, որ մութին յանձնուեցաւ: Անհետ: Ապարդիւն:

Այսօր մանաւանդ. եկած էր անդէն, անմեղ ու խոնարհ: Եկած էր ընդմիջու: Բաղնիքէն նոր ելած մարմնի մը պէս մաքրադործուած ու բուրավետ: Եկած էր երկիւղած, հին ազօթքին բառերը չթրուեցին: Հոգիով բիրեղացած: Բերած էր իր տաք ու սարսուցող մարմինը, ափսէի մը վերայ: Բերած էր իր կուսութիւնը. ասիկա մարմինէն, մարմնեղէնէն աւելին էր: Ընծայում, զոհադործում մը: Օրօրոցէն փայփայուած, անաղարտ պահուած էութիւնը: Ամբողջ կեանքի մը համար: Մէկ անգամ միայն՝ եւ յաւերժութիւնը:

Ափսէի մը վրայ:

Պայուսակները կապեց: Կրկին ճամբայ ինկաւ: Միշտ անկայուն: Զուռն էր իր տունը: Անկապան, մնայուն տունը: Հիւր էր, վարձակալ էր, օտար էր:

Տխրութեամբ մեկնեցաւ Ճոհանդններու տունէն: Այժմ, ճաշարանատէրը զինք կը տանէր իր տունը, ուր պիտի մնար մինչեւ դպրոցական վերամուտ:

Ինքնաշարժը կը սուրբար սպիտակ ճամբէն: Քանի բարձրանային, հոգիտները կը խորանային կապոյտ: Ծամբան կը դառնար, կը դալարուէր:

– Մօտեցանք, ըսաւ Պրն. Մայք, շուտով կը հասնինք: Տեսա՞ր, քաղաքէն, հաղիւ քան բոպէ է:

Թաց ժպիտը կախուած մնաց շրթներուն:

– Ահա՛ :

Երեքյարկանի – եթէ հաշուենք վերնատունն ալ – դաշտային, խար-
խուլ եւ արդարեւ չէնք մը : Զառամած, ամուլ, յուսահատական : Կարծես,
հիմա՛, պիտի կէտք տարիներու բնական տակ : Շուրջի ծառերն իսկ զառա-
մեր էին : Գորշ, ալիքած կանաչ սաղարթներ, որոնցմէ փռիկ եւ սարդի ոս-
տայններ կախուած էին : Գետինը չոր տերեւներ, հող, հաւերու եւ երեխա-
ներու աղմուկ : Պակասը լրացներու համար, շան աւովերջ հաջող :

Յուսահատական էր :

Ային, լիճ մը : Կապոյտ թրթռացում, մաքուր, պայծառ : Կտոր մը
երկինք :

Փառք քեզ Տէր :

Երեխաները, չունը, կոտուն եւ հաւերը վաղեցին դիմաւորելու զե-
րենք : Պուշտուք, աղմուկ, փռիկ :

Պրն. Մայքը իր ներքինիի դիւ ձայնով կանչեց .

– Թերեզա՛ :

Քիչ ետք կինը երեւցաւ դրան մէջէն :

– Անունդ ի՞նչ էր, հա՛, Լիօ... Ասիկա Լիօն է, որ մեր ճաշարանը
կ'աշխատի եւ հոս պիտի ապրի մեզի հետ... :

– Ինչո՞ւ առաջուրէն չըսիր, ամէն գործող անկանոն է, ե՞րբ մարդ
պիտի ըլլաս... Եկուր աղաս, բարի ես եկեր... :

«Տղաս», ըսաւ, թէեւ ինք շատ տարբեր ըլլալու չէր : Կախուած արա-
բած մըն էր : Ամէն ինչը դէպի հողը կը կախուէր այդ կնոջ վրայ : Կողերը,
մազերը, քիթն ու շրթները : Ուսերը, ստիւքները, թեւերը : Զգեստը ալի-
քան երկար էր, որ դետին կը քուէր : Թեւերը կարծես մարմնին քովերէն
կախուած ծանրութիւններ ըլլային, որոնք զինք վար կը քաշէին : Ձեռնա-
կան օրէնքին ամենապարզ ապացոյցն էր Տիկ. Թերեզան :

– Եկուր, քեզ սենեակդ ցուցնեմ, – ըսաւ Պրն. Մայք եւ սկսաւ բարձ-
րունալ փայտէ սանդուխտ : Լեւոն պայուսակները զրկած ուղեց հետեւի :
Անկարելի էր երկու պայուսակով սեղմիլ անցքին : Մէկը վար դրաւ եւ գը-
լուխը ոտաստողին չղարնելու համար, ահագին դժուարութեամբ՝ հետե-
ւեցաւ : Առաջին յարկը ելան, ապա երկրորդը եւ վեր՝ դէպի վերնատուն :
Սանդուխտները ճանչեցին, սարդի ոստայններ պլլուեցան վզին, քրտինքը հո-
սեցաւ :

– Ահա, կը հաւնի՞ս :

Դուռը յօդացաւէ տառապող ծերունիի մը պէս հեծելով բացուեցաւ
եւ գորշ մթութիւն մը եւ բորբոսի հոտը հիւրընկալեցին զինք : Սարդի ոս-
տայններ կանչեցան մազերուն : Թեւերը փրցնելով՝ յառաջացաւ : Միակ լուս-
սամուտէն, որուն ապակիները տեղ տեղ կ'ոտրած էին, հագիւ տոյն լոյս
մը կը թափանցէր :

Անտառ տախտակամած, խշտեակ մը, եւ ծիծաղելիութիւնը կատար-
եալ ընկու համար՝ ոսկի շրջանակով, մեծ մօր օրէն մնացած, տօգոյն հա-
յելի մը, մէջտեղէն ճաթած :

– Կը յուսամ սիրեցիր, շատոնց բնակուած չէ... քիչ մը մաքրուելով,
կոկիկ սենեակի մը պիտի վերածուի... այդ քու գործդ է ալ... Ժամանա-
կին, հոս, մեծ մօրս սպասուհին ապրած է... Անունը Հելէն է եղած...
Հա՛, բաղնիքը հոն վարն է, մեծ ծառին տակ... Գործաւորներուն յատուկ
է... :

Տղան, արազիրի մը նման, Լրկու պայուսակները թեւերէն կախ, կեցած էր սենեակին մէջտեղ:

— Այսօր տեղաւորուէ, վաղը առաւօտ կը սկսին գործի: Ընթրիքը ժամը ճիշդ հինգին է, Թերեզան ճշգրտակութիւնը կը սիրէ... կը ճաշեմ վաղը, մեր խոհանոցը... Հիմա ես երթամ ճաշարան... Վաղը առաւօտ ժամը վեցին կը մեկնինք... Երեկոյան կը տեսնուինք թերեւս... Այլապէս, ժամը վեցին պատրաստ եղիր... Make yourself at home, see you...

Պրն. Մայք՝ իր թաց ժպիտը հտին քաշկոտելէն՝ մեկնեցաւ: Լևոն դեռ կը գիտէր շուրջը: Պայուսակները գրաւ տեղն ու տեղը եւ դուռն նետուեցաւ: Մաքուր օդի պէտք ունէր: Ձէր գիտէր՝ թէ ինչ կը սպասէր իրեն, բայց տարտամ նախազգացում մը ունէր, որ հասնէի պիտի չըլլար դալիքը: «Հայրու ճակատագիր», մտածեց:

Այս գեղեցիկ բնութեան մէջ, ուր ամէն ինչ թարմ է, մաքուր, մըլտանորոգ — այս զմայլելի միջոցէն գողնալ ու մեկուսացնել խորանարդ մը, ուր լոյսը հաղիւ կը թափանցէ, ուր լոյսը կը տփուռնի, կ'այլափոխի ու կը նեխի: Սարդերու եւ մուկերու որջ կը դառնայ: Բանտել այնտեղ ազատ մարմինն ու միտքը: Ահա քեզի մարդկային բնակավայր:

Երեւոյ օրերը, երբ դեռ մանուկ, կը պառկէին տանիքը: Աստղեր ու քնքոյշ հոգի: Ոգիները, դարաւոր հեքիաթը Արեւելին: Գիշերուան կախարհանքը: Յամբիկներու բոլորը:

Ու հիմա:

Դժկամակութեամբ, դուրսը կէս մը չըլլեց ու նայեցաւ ձիւ տան: Նման էր էակի մը, որմէ կեանքը մեկնած էր: Կը տատանէր եւ որեւէ վայրէկան կընար իյնալ: Արդէն իսկ անո՞ն ու սպեղ տան վրայ, կարծես հետազային սաստիկ մըրթիկ մը բերտն ու դետեղած էր վերնատունը: Գոյնն իսկ տարբեր էր: Ծուռ գծերէն աւելի, զինք կը ջղայնացնէր այդ գոյնը: Գորշ, մաշած, անարիւն, ամուլ: Կատարեալ ներքինի մը:

Պրն. Մայքի մաղաղաթեայ երեսը եւ անբաժան թաց ժպիտը կրկին երեւցան: Զգաց, որ եթէ թօթուէ ձեռքը, մատներուն կ'ալուն ու անհաճոյ խոնաւութիւն մը պիտի պլշէր:

— Չմեկնած, ահա սրբիշնելու, քիչ մնաց մոռնայի... Թերեզան... Թերեզան իմ պահապան հրեշտակն է, առանց անոր կորած եմ... Ժամը հինգին տասը մնացած, մի մոռնար, Թերեզան խոտապահանջ է... See you...

«Խխու՛նջ» — դռնեց աղան հայերէն — խխունջ... ան ալ ներքինի է...»

Հինգին տասը մնացած իջաւ վարի յարկը: Երեխաները արդէն սեղան նստեր էին:

— O, there you are, young man, — ըսաւ Տիկ. Թերեզա, — նստէ այստեղ, կրնաս մեզի հետ ուտել... that's alright...

Երեխաներէն մին կախուած էր մօրը կուրծքէն, միւս երկուքը բարձր աթոռներու վրայ նստել կը լափէին: Լորձուցը բերաններէն ու քիթերէն կը վազէր:

Թերեզան Լեւոնին պնակին մէջ գրաւ կտոր մը խոզի խաշած միս, — այնքան բարակ, որ միւս կողմը կը տեսնուէր, — գետնախնձոր մը եւ խաշած լուբիս: Երկու շերտ ճերմակ հաց, դաւաթ մը կաթ:

Ձանաց ուտել: Կիտրոսակ շուշեր: Աղ, պղպեղ խի ցանուած չէր: Աւելի անհամ չէր կրնար ըլլալ: Հարկ եղաւ մեծ ճիգ եւ առատ ջուր, քանի մը պատառ վար զրկելու համար: Կաթ արդէն չէր սիրեր: Պտուղով խմորիկները զէչ չէր: Սուրճը անտանելի էր, երբեք չկրցաւ վարժուիլ: Սըմբուկի ջուր, որուն տեսքն իսկ վանողական էր:

Ճաշի ընթացքին ոչ ոք խօսեցաւ: Երեսները իրենց կարելին ըրին ճշարու, ճգարու, հեծելու՝ իրենց կոկորդները պատուելու աստիճան: Կաթը թափուեցաւ ամէն կողմ, կերակուրը թաւ օգին մէջ, շուները լափեցին՝ դեռին իսկ չհասած: Երկրային զրախտը այս ըլլալու էր: Երանութիւնը գիւղական կեանքին: Բանաստեղծները իրաւ որ հզօր երեւակայութիւն ունին:

— Հիմա, կրնաս ինձի օւնել պնակները լուալու, — բռաւ Տիգ. Թերեզա եւ ահագին ազոտոտ պնակ ու աման զբաւ աղուն առաջ: Կէսօրուաններն ալ մնացեր էին դեռ:

Տղան ըմբռնեց գլխուն գալիքը: Այլեւս ուշ էր, կարելի չէր ետ դառնալ:

Պնակները, կաթսաները լուաց ու դուրս հետուեցաւ:

Կ'ուզէր փախչիլ, մինակ ըլլալ:

Գիշերը գրկեց գինջ եւ գալ ձեռքը դրաւ տենդոտ ճակտին: Ամէն անգամ որ ցաւ ունենար, տխուր ու ընկճուած զգար, նահանջի մէջ ապաստան ունէր: Բնութիւնը: Մայր բնութիւնը միշտ ներկայ, հիւրընկալ, վտառահիւ:

Լինճը սեւ էր: Յամաքին վրայ ցանցաւ լոյսեր կը պլպլային: Լինճը ամբողջովին, անաղարտ խաւար մը:

Անցաւ մրգաստանէն, ուր ծառեր թեւեր երկարեցին ու ֆանացին կտուղի մագերան: Իջաւ բլուրը եւ հասաւ լճին եզերքը: Պաղ շունչ մը դպաւ զէմքին: Տեղէ մը ջուր կը վաղէր: Խաղաղ էր ու մաքուր:

Բաւական վերջ սկսաւ սաքոտալ ցուրտէն. վերադարձաւ, բարձրացաւ աննկատ: Լոյսն իսկ չուզեց վառել: Ձէր կրնար այդ աւերակը տեսնել հիմա: Կ'ատէր քառսը: Կ'ազդէր իր ներքին հաւասարակշռութեան վրայ:

Հազիւ սեմէն մտած, բորբոսի հոտը դիմաւորեց գինջ: Առանց տեսնելու, զգաց փոշին ամէն ինչի վրայ: Գերեզմանի հոտ մը սողաց թոքերուն մէջ: Պայուսակներն իսկ չբացաւ, նետուեցաւ խշտեակին վրայ: Գոնէ սաւան եւ ծածկոց փուր էր Թերեզան:

Մինչեւ առաւօտ վալարուեցաւ: Վրայէն միջատներ կը քալէին: Քերուեցաւ անդադար: Գիշերը սօսինձի պէս երկարեցաւ, երկարեցաւ: Ոտքերը խրեցան առածպական նիւթին մէջ ու հոն փակած մնացին: Ձկրցաւ ձերբապատուիլ:

Մղձաւանջի մէջ անցուց գիշերը: Առաւօտեան գէմ հազիւ քուն մը տած էր, ընդոստ արթնցաւ:

Կաթի պէս կապտորակ լոյս մը կը մաղուէր պատուհանէն: Սենեակը գեռ մութ էր: Ողիներ կը խլրտէին անկիւնները: Ելաւ, իջաւ, լուաց երեսը: Վեցէն առաջ ներկայացաւ Մայրին:

Բ. Գ.



ԶԱՐԿ, ՏՂԱՍ...

Սրտիդ մէջ՝ երազ,
Աչքերուդ՝ կրակ,
Զա՛րկ եթէ կրնաս,
Զարկ արագ արագ,
Բայց հարկ է զարնես
Ի սէր արուեսին,
Պիտի փանդակիս
Արձանը կեանքին:
Սակայն իմանաս,
Յետոյ չզղջաս.
Մուրհին դէմ՝ աչք կայ
Տխուր կը նայի...
Մուրհին դէմ՝ սիրս կայ
Կեանք կը պաղասի...
Բայց հարկ է տկար
Աշխարհի ցաւին.
Կարգն է զեղեցկին
Քաջերը կ'ապրին:
Արցունքն աչքերուդ,

ճաւն ակունքերուդ
Սեղմած մոլեցիկն՝
Զա՛րկ, զա՛րկ եւ տկա՛,
Զա՛րկ որ լրանայ
Արձանը կեանքին:
Երբ սիրսդ հեւայ,
Երբոր տառապիս՝
Ձեռքդ չզողայ,
Չյուսահասիս.
Ուղիղ արտի՛ն զարկ,
Կասաղի, արագ.
Ի՞նչ հոգ՝ թէ աչք կայ
Տխուր կը նայի...
Զա՛րկ, արիւնն հոսի
Բազուկիդ, կուրծքիդ,
Եւ կուրծքէդ՝ հողին,
Ծիլին, ծաղիկին...
Զա՛րկ՝ որ լրանայ,
Գեղեցիկ ըլլայ
Արձանը կեանքին:-

Ա. ԶԱՐԻՈՒՏԵԱՆ

Ա Կ Ն Է Ս

«Մարդիկ կամ որո՞՞ք կը սպանեն
սպաննուելու համար»,

ՓԱՐԱՐ ՌԻԱՐԴՑ

Պառաւ զողացող ձեռքերով հրեց
դուռը եւ ներս մտաւ։ Նրբանցքին մէջը
ուշ ոք կը գանուէր։ – Մարդ չկա՞յ, – ա-
նոր ծերացած ձայնը սարսուց միջոցին
կիսամութ դատարկութեան մէջ։

Ակնէս ելաւ խոհանոցէն, խոշորցած
բիրերով մօտեցաւ ծեր կնոջ, որ ուսին
շալը կը գետեղէր աթոռի մը վրայ։

– Դուռը բաց էր, ըսաւ եւ նայեցաւ
պահ մը պառաւին աղտոտած աչքերուն
եւ ցօղոտ արտեւանունքերուն։

– Բազկերակս շատ կը զարնէ, զի-
տե՛մ։ Կը հասկնա՞ս, մատամ Ակնէս։
Գիշերը խորհեցայ որ ա՛լ պիտի մեռնիմ,
տարիքս գերեզմանի տարիք է, տխուր՝
անգուարթ, թշուառ տարիք մը, երբ ա-
մէն մարդ չ'ուզեր ճանշնալ քեզ, նոյնիսկ
զաւակդ։

Ակնէս, կիսաթաց ձեռքերով բռնեց
պառաւին բազկերակը, նոյն ատեն նըս-
տեցնելով զայն նրբանցքին մէջ գտնուող
աթոռներէն մէկուն վրայ։ Նեխած եւ
դորշ հոտ մը դպաւ առնգերուն։ Տասն
անգամէ աւելի էր որ սա ծերը կուգար

իրեն, դեղ կը խնդրէր, եւ կամ ալ բազ-
կերակին նայիլ... Ձուակները չէի՞ն
կրնար վճարել բժիշկի մը սահլը։ Ի՞նչ էր
ինք. անցեալի հիւանդապահուհի մը,
ինչո՞ւ հանգիստ չէին ձգեր դիմք, մինակ
մնալ կ'ուզէր. չէի՞ն հասկնար արդեօք։

– Սիրտդ լաւ է, – ըսաւ ծերին եւ
ստքի ելաւ։

– Մերսի՛, Մատամ Ակնէս, – մրմռաց
պառաւը եւ սովորական սեւ շալը դնելով
ուսին, (որ գետին սրբելիք վիճակին հա-
սած էր) յամրաքայլ ելաւ կիսաբաց
դռնէն։

Ակնէս շունչ մը քաշեց։ Խութիւնը կը
տուտանէր հին եղանակի մը վանկերուն
պէս... Արեան գնացքը կարծես կը դան-
դաղէր տակաւ... Շնչահատ՝ բռնեց ինքն
իր բազկերակը. ի՞նչ ունէր, Աստուած
իմ. ծերը... այո՛, այս ծերը. ինչո՞ւ կը
կրկնէր իր այցելութիւնները. չէ՞ որ
վերջին անգամ յայտնած էր որ ինք բը-
ժիշկ չէ՛ր, թէ նոյնիսկ այլեւս հիւան-
դապահուհի պաշտօնը ձգած էր... ա՛հ
...դիտէին... Երկու ձեռքերովը բռնեց

մաղերէն փունջ մը եւ քաշեց ետին, սեղմելով զայն տենդոտ ասփերուն մէջ: Գիտէին... ամէնն ալ դիտէին... Գոյու-թեան լքումը կը ծանրանար մութ պտուղի մէջ: Բացաւ բիրտը խոշոր, եւ ստատած մնաց այդպէս, պահ մը, հմայուած իշխանուհի մը նման:

Բոպէ մը վերջ աթափեցաւ: Ազնւամուղը օդին մէջէն նայեցաւ ձեռքերուն, որոնց վրայ մեռնող արեւէն մասնիկ մը կը թափառէր. այդ մասնիկը մորեքէն կոշտացած էին. այս եղունգները, որքո՞նք վայրէ եւ զարարող կերպարանք մը ունէին: Յանկարծ ուղեւը սասանեցաւ. ինք իրա՞ն հիւանդապահուհի էր ինքն, ինքն. քանզում ժարմինը տակաւ փարեցաւ անոնին, թեւեւ լուրջ պլլուեցաւ բազրիքին... Հիմա ո՞վ էր ինք, ի՞նչ էր. վրանաւոր մը: Անիւրաւութեամբ մը: Իր գլուխը, իր խոշոր աչքերը, որոնց կրակը չէր տեսներ հիմա. սարսափած ուսերը, որոնց վրայ տարած էր իր դոյաւթեան վիթխարի եւ ճաւաղուն վիթխար... Ի՞նչ էր հիմա, Աստուած իմ:

— Ի՞նչ եմ հիմա, ի՞նչ, ի՞նչ...

Կը տեսնեմ ինքզինքս: Գեղեցիկ եւ բոտասարգուհի մըն եմ. երկար մազերով, երկար աչքերով, բարձր հասակով. կը քաշեմ կեանքիս արշալոյսին մէջէն, չիտակ, գլուխս բարձր, փոքրիկ գինուորի մը պէս: Ի՞նչ երջանիկ կը զգամ ինքզինքս. ընտանիքս բարի է հետս, մարդիկ՝ ազնիւ... Սիրուած եմ. գիտէ՞ք ի՞նչ կը նշանակէ սիրուիլ մարդոցմէ: Եւրեք տարիներ հետեւեցայ հիւանդապահուհիի դասընթացներուն համալսարանին մէջ. յաջնացայ, սակայն հպարտ եմ հիմա, վկայական մը ունիմ, բան մը գիտեմ... մարդկութեան կրնամ ծառայել... մարդկութեան... դիտէ՞ք ի՞նչ են մարդիկ. փոքրիկ կենդանիներ, որոնք կրնան հիւանդանալ... Իսկ եթէ առողջ են... կը դառնան անդուապ, վայրի, յամառ: Միշտ նախընտրած եմ հիւանդ մարդը առողջէն... որովհետեւ անոր

աչքերը յաճախ բարի են, եւ մարմինը տկար է չնայր գրկելու, չարք օնուցանելու համար: Յերեկները կ'աշխատիմ հիւանդանոցի մը մէջ իրրեւ նըրս. իսկ իրիկունները, գործէս ետք, դուրսէն հիւանդներ կուզան. տանս մէջ երբեմն զանոնք կը խնամեմ. վէրքեր կը գնդեմ, անոնց կ'ընեմ. յաւելեալ զբաւ է, չէ՞: Փոքրիկ եղբայրս կը կարգացնեմ, որ լսի՞նք ըլլայ ապագային, յաղթական դէմքով եւ զանկով բոխիկ մը... Թերեւս շտապանամ ալ. կը խորհիմ օր մը Եւրոպայ անցնիլ, եւ հո՞ն, թերեւս...

Եւ օր մը... օրերէս մէկը:

Եւ սակայն օր մը, փոքրիկ աղջիկ մը բերին ջովս. աղքատ, ցնցոտիներու մէջ փաթթուած: 8-9 տարեկան աղջիկ մը... Կը յիշեմ օրը. արեւը անխաղախ կերպով կը ժպտէր, շուրջս ամէն ինչ ուրախ էր, ուրախ... ես ալ ուրախ էի... Ինչո՞ւ չըլլայի. մանաւանդ որ ոչ մէկ խուսարարէին, կեղծ, եւ արտառոց դիպուածի մը լէի հանդիպած քսաներկու տարուայ կտրեմ կեանքիս ընթացքին... Ո՛չ մէկ հեծկլտուք լուացած էր կուրծքիս, ո՛չ մէկ ցաւ կոկորտէն էր թարթիւններս... մանկութենէս մինչեւ երիտասարդութիւնս:

Աղջիկը կուլար, կուլար ցաւէն. մաղերը կը քաշէր, փոքրիկ ձեռքերը կը պարնէր կուրծքին. ողբալի էր եւ... աղքատ...

Ի՞նչ ընէի... կցկատու բառերով կը յստնէր թէ գլուխը կը ցաւէր սաստիկ, թէ ծունկերը կը բռնուէին...

— Ուզածդ ըրէ, մամդէլ, ըսաւ աղջըկան ընկերացող կինը, քեզի կը ձգենք:

Բացի շտապով դեղերու տուփը: Ուղղութիւն աչքերս աղտոտած էին... Սա աղջիկը... խորհեցայ նոյն պահուն, այս ալ պէտք է ապրի... եւ ահա այս տարիքին կուլայ, կ'ողբայ... Բոպիկ է... Ծերացած են այտերը, Ծերացած է նոյնիսկ լացը. կուլայ տարիքը առած կնոջ մը նման... Հասուն է տառապանքը... կը զգայ:

Առի ամբուլ մը... ցաւին հակառակ:

Նույնպես ասեղհերու տուփը պատրաստ էր արգէն. հատ մը առի եւ լեցուցի Եւրիմեդը. մօտեցայ աղջկան. կիներ ամուր բռնեց ոտքերէն: Մոլեգնօրէն ասեղը խորեցու աղջկան միսերուն մէջ... ա՛հ, չէի գիտեր երեւք որ այդ ասեղը խորած էի երեխային սրտին մէջ, հեռուն... շատ հեռուն... սիրտը պատուելու եւ քանդելու տոտիման... այդ ասեղը աղջկան վերջին շունչը ծծած էր:

Յաջորդ առտու աղջիկը մեռած դրտած էին: Որը էր, եւ մօրաքրոջը ագթատ րնտանիքը կը պահէր զայն: Բժիշկը, որ տղջիկը անտէն մերժած էր դալ այցելուութեան, եկած էր փոքրիկին մեռնելէն ետք, եւ յայտարարած էր որ շատ զօրաւոր տօզ ներարկուած էր (քնարեր դեղ մը): Ամբողջ նետած էի. եւ սակայն չէի կրնար ուրանալ... ոչ այ նրա պատակին անմեղութիւնը փաստել... Մէջտեղը դիակ մը կար, 8 տարեկան աղջկայ մը դիակը, որ ուղջ՝ բան մը չէր արած, եւ հիմա ութ բժիշկներով կը քննուէր, կը սերտուէր, կը վճռէին ճակատագիրը... որովհետեւ ամէն ինչ արդար էին...

Ամէն մարդ զատապարտած էր զիս իբրեւ ոճրագործ, մարգասպան... ցաւալար մը... որ հաճոյք զգացած էր երեխայ մը սպաննելով:

Ինչո՞ւ, ինչո՞ւ պատահած էր այս բոլորը... Ինչո՞ւ լաւ չէի նայած ամբողջին... Ինչո՞ւ ներքու ամբողջ մը կուզար խլրտելու էութեան ամենաչին մասնիկին մէջ, եւ ճգմելու ամէն մէկը, փոքրիկ սրտի մը նման... Մն, դժբախտ մըն էի: Սկսաւ տառապանքս:

Գատապարտուեցայ: Եղբայրս ձղեց զպրոցը. դնաց աշխատելու որպէսզի բնտանիքը պահէ իմ տեղս: Վկայականս, որուն համար տարիներ խոնջած էի, պատուած էր օրէնքին կողմէ... Արդարութեան գէժ գործած էի: Յանցաւոր էի օրէնքին եւ մարդոց միջեւ: Ողորմելի մըն էի... լքուած մը, մանրէ մը:

Հայրս վիշտէն մեռաւ երեք ամիս վերջ. մայրս ապրեցաւ. եւ սակայն ի՞նչ

կիսնք... երանի ան ալ չապրէր: Իսկ ես...

Ութ տարեկան երեխայի մը պատկերը... աղտոտ մազերը, բարակ, վախ մատները, անարիւն գէժքը, սակրացած գիտակը կը հալածէին զիս ամբողջ օրեր: Ե՛ս, իմ կամքովս, ուզած էի ըստաննել զայն: Ո՛չ... Բայց չէ որ արարքի մը սխալին համար մեռաւ ան, այդ աղջիկը... Ո՛չ մէկ բան կրնայ փրկել արարքի մը ծանրութիւնը, բացի բու մերկութենէն՝ արարքի մը գէժ: Բարբարոս ձեռքերով ուղեցի արարքս ղեղեցկացնել, պննել քիչ մը, ճերմկցնել... սակայն ան օրէ օր կ'աղտոտէր մարդկային շունչերէ, խօսքերէ, ձեռքերէ, եւ կարծես ո՛չ մէկ բաժին ունեցած ըլլայի բրածիս մէջ... գործած յանցանքիս մէջ... գործած՝ առանց գիտնալու:

Օր մը, փոքրիկ եղբայրս եկաւ արդեւարան զիս տեսնելու... Կարծես իր շուքն էր որ խօսեցաւ հետս... Ողորդ բացի աչքերս, կուրծքս կը ճեղքուէր արցունքով, ցաւով:

— Իմ երեսէս դո՛ւն ալ, դուն ալ փրճացար. ամէնքդ ալ մեռաք. ինչո՞ւ ալ լեւս չո՞վ կուզան. չեմ ուղիւ քեզ տեսնել, զնա՛, եւ մի ճանչնար զիս այլեւս, մի ճանչնար, կը լսե՞ս... Վաղը ցուցամատեր ինծի պիտի ուղղուին եւ շուքիներ պիտի լեցուն ապանքներու մէջ:

— Այս աղջիկը, գիտե՞ք... ան է... ոճրագործը. 8 տարեկան թշուառ աղջիկ մը մեռցուց... եւ ըսել թէ այսպիսիներ կ'ապրին եւ համարաբանական կը դառնան... Սակայն կառավարութիւնը արդար է... գիտէ դատել... պատիժ առաւ... ուրախ ենք մենք, ամէնքս ալ... զոհ ենք որ այսպիսիները կը դատուին... արդարութիւնը բարձր է միշտ...

Եղբորս ճերմակ նայուածքը պահ մը թափառեցաւ ոտկրացած կուրծքէս մինչեւ աչքերուս խորքերը, մինչեւ արեւնող լինտերս. յետոյ դանդաղ, սակայն ջախջախուող բառերը օրօրուեցան միջոցին մէջ, եւ ինչպէս ապանքներու մէջ, սրածայր քարերու նման.

— Ակնէ՛ս, ամէնքնիս ալ այս կամ այն արարքով դատաւարտեալներ ենք, մեզմէ մեր շինած քանոնքով մէջ... կը լսե՛ս Ակնէ՛ս, քոյրիկ, ինծի նայէ պահ մը... եթէ ինծի համար յաւելեալ ժամեր չաշխատէիր, պիտի չպատահէր այս բոլորը: Խեղճես... կը լսե՛ս Ակնէ՛ս, մի խօսիր այլեւս: Ամէն մարդ այս կամ այն ձեւով կը սպաննէ, կը սպաննուի, Ակնէ՛ս... մտիկ ըրէ, վաղը կ'ելլես, կը ճամբորդենք միասին...

— Գնա՛, գնա՛, ըսի ճշտով, եւ թեւեւ դիմեալ դարեւելով փախաւ եւ մտայ ինքիս...

Դժուար է պատիժ մը կրել երբ ամբողջ անցանքին մէջ չես ապրիր...

Ամբոսներ վերջ Ալպէտին հանդիպեցայ... քամուսանք. սիրեց զիս. եւ սակայն զիտէր ամէն ի՛նչ... Գիտէր, եւ անոր համար սիրեց զիս... զիտէր նաեւ ուրիշ հազարաւոր մարդոց կամաւոր ուճիւրները... եւ ամբողջ համար աչքերը դուրսէն մարդոց կեցողութեան վրէժ... եւ...

Եւ... ահա հիմա...

Աչքերը բացաւ... Որքա՛ն տեսած էր այս:



— Երբ ամառ Ակնէսը քեզի դեղ չտրուեւ, ըսէ՛, քեզի չըսի՞ որ դեղ ուզէ, խոֆած, խօսք չես հասկնար երբե՛ք, պոռակց հարսը, կետուր մօրը օձիքէն ամուր բռնելով, եւ գրեթէ ցնցելով զայն:

— Բազմեքալիս նայեցաւ եւ ըսաւ թէ բան մը չուէիք, կամկամաց ծերը դողդոջեցաւ, ի՛նչ ընեմ աղջիկս, կրնա՞մ իրեն ստիպել: Ըսէ՛ք, կրնա՞մ, խեղճը նորէն գործը ձգելով, ամէն երթալու կը նայի ինծի...

— Կը լսե՞ք ըսաւ զայրացկոտ հարսը շուրջիններուն նայելով, կը լսե՞ք, — սիրտս լաւ է — կ'ըսէ: Սր մը այդ նըրսը... լսած էք իր մասին չէ՞: Ժամանա-

կին, Կ-Տ տարի առաջ, փոքրիկ երեխայ մը սպաննած է, ասեղ մը բնելով, եւ ամբողջ համար բանաւարկուած է: Հա՛հա... եւ այս ամէն բանով, հետք չի խօսուիր. բա՛ն մը կը կարծէ ինքզինքը: — Եւ Լորիս, լորձունքները հոսեցնելով առատօրէն, մինչեւ կզակը, անօթի կենդանիի մը նման, սկսաւ ճշտով խնդալ:

— Լորիս, այդ ծիծաղը չի փրկեր քեզ. ինչո՞ւ կ'ուզես ամէնուն անցեալը պրպտել: Լուրջ կին մըն է Ակնէս. լուրջ է նոյնպէս իր ամուսինը որ շատ լաւ պաշտօն ունի: Վնաս մը ունի՞ն քեզի, ըսէ՛... Հասկո՞ւ ինչո՞ւ այս բոլոր խօսքերը... ամօթ է. մի դատեր: Կրնայ անմեղ ըլլալ:

— Դո՛ւն ալ զինք կը պաշտպանես... «Ակնէս», «Ակնէս»... գեղեցիկ կին մը չէ՞, ըսէ՛. եւ նըրս... արդէն նըրսերը գիտեմ ինչպէ՞ս կ'ըլլան, ինծի մի բացատրեր:

— Լորիս, կ'արդիւնմ քեզի այդպէս խօսիլ:

— Կ'արդիւնմ, հը, հա՛, հա՛, հա՛. նախ սա խոֆած մօրդ նայէ, վերջը գնա ոճրադործներ պաշտպանէ. կը հասկընա՞մ, մայրդ, սա զաղրիլի կերպարանքով, թարախոտած աչքերով, կ'ուզէ երիտասարդանալ, ապրիլ շուրջիններուն արիւնով: Միտիլի պէս է կեանքս, մոխիլի պէ՛ս, կը հասկնա՞մ... Տեսէ՛ք սա վեպեցիկ ձեռքերս ինչերո՞ւ վերածուեցան սա քանի մը տարուայ ընթացքին:

Լուեց, սուր ակնարկ մը արձակելով ամուսնին կողմը. եւ կողմնակի սննեաւ կին դուռը ամուր գոցելով մտաւ ներս:

Սկսաւ դուռը ափերուն մէջ՝ մոտածել... Գանի անդամներ զրկած էր ծերը վեր, եւ սակայն ապարդիւն. անշուշտ յարկելի հիւանդապահուհին կը վախնար դեղ տալու... իսկ եթէ ինք տար, եւ ծերը մեռնէր... կ'ազատուէին ամէնն ալ... այս ծաղրելի եւ քոտոտ ծերէն որ ամէն բոլոր անձկութեան եւ հիւսիսներ ալիք մը կը ստեղծէր իր մէջ... Եւ յետոյ կրնար Ակնէսը դատաւարտել տալ:

Դիւրին էր չէ՞... ան էր որ ոճիւր գործածած էր... Իրմէ պիտի չկասկածէին... ո՞հ, որքան կ'ատէր այդ կիներ, որ նոյնիսկ իր Մոնտ-Լիդայի ժպիտովը ամուսինը գրաւած էր:

Շատ դեղեր չուէնէր քովը, սակայն լաւ էր հասկնար դեղերէն. չէ՞ որ տարի մը գեղազործութիւն կարդացած էր, եւ յետոյ ձգած՝ տմուռնանալու համար... Իր գիտութիւնը կը բաւէր այս գործին համար: Ուտէր ելաւ: Բացաւ դրոցը... անցեալ օր քանի մը ամբուլներ ձեռք ձեռքէր իր մէկ բարեկամին դեղի տէփուցէն, որոնք բաւական վտանգաւոր էին բնականոն եղող մարդու մը կեանքին համար: Մատները քսեց ամբուլին եւ սառած մնաց տեղը... դեղահատի սէտք ունէր... ո՛չ թէ ամբուլի: Պահ մը շուարեցաւ: Բացազանչութիւն մը արձակեց... Այո՛, ունէր քովը, վրատնազաւոր դեղահատեր, որոնք երկարատեւնէ ի վեր քովն էին...: Երկրորդ դրոցին բանալին հանեց զրպանէն եւ թացաւ: Նոյն տեղն էին, փոշիով թաթխուած... Հոգ չէր... Ատաւ հատ մը... վերջնապէս պիտի փրկուէր...

Դուրսէն կը լսուէր ամուսինն եւ կեռուր մօրը հսկայ աղմուկը... Երբեմն մայր-տղայ կը կռուէին ժամեր, այդպէս, կեանքին արահետին վրայ կայնած... քով քովի, իրմէ հեռու, եւ սակայն սա բռնած դեղահատէն աւելի մօտիկ, այն թոյնը որ կը հոսէր անոնց վէրքէն, կը հոսէր իր կարմրած եւ ցաւոյ միտերուն վրայ... եւ կը զգար... տառազանքով միայն:

Դեղահատին պարունակութիւնը պարպած էր թէյի զաւաթին մէջ, որը կէս ժամէն պիտի հրամցնէր ծերին:

— Ինքն ալ կ'ապատի այս կեանքէն... Էթէ ես ալ իրեն նման ծերանամ, ինծի մահացու ասեղ մը թող ընեն բժշկանքը... ապարդիւն է ապրիլ 85 տարեկանէ վերջ, վտանգաւոր եւ ապարդիւն, ըսաւ մօքէն, եւ թեւերը տարաւ դէր խոսն... եւ մնաց այդպէս:

❖

— Շո՛ւտ, բժիշկ մը կանչեցէք, պոռաց իորիս յուղուած բիրերը քացած իոր, կարծես լափելու համար տեսարանին մոայլութիւնը...

Ամուսինը եւ տալը կտրածակի արաւորութեամբ վազեցին դուրս:

— Որքա՛ն շուտ ազդեց, մտածեց իորիս, ափերուն մէջ սեղմելով ծերին գլուխը, — Հիմա այլեւս լրացաւ... ա՛յ շես տառապեցնէր շուրջիններդ, փոփոխաց եւ կամացուկ, ափերուն մէջ սեղմեց մահամերձին դանկը, որմէ կարծես կը ցայտէր տեսակ մը զգուշի եւ անթափանց ցոլք մը, մոայլ ու տրտում աղբիւրէ մը բխած: Ծերին չըթները կը շարժէին... Անծանօթ եւ քստմնելի բառեր կը լեցուէին պարապին մէջ:

Հիմա ո՛չ մէկ բառ նշանակութիւն չուէր... Ծերը կը պատկանէր հեռաւոր աշխարհի մը, շա՛տ հեռաւոր, իսկ ի՛նք, իորիս, երիտասարդ էր զեղեցիկ, կեանք ունէր սպրիւթ: Կուրծքը կը պատռուէր անոյ ջերմով... Զեղերը կը պարէին մօրթին տակ, կարծես ուրախ էր:

— Վաղը, իր սենեակը կը մաքրեմ, այսինքն թաղուելէն վերջ... կը շտկեմ, վա՛ռը... Նոյնիսկ ամէնէն գեղեցիկ սենեակը գրաւեց. Ծերեր... անձնաթիւութիւն... նախանձ:

Բարձ մը սպրդեցուց պառաւին վզին տակ, այսպէս տուէր հանգիստ կ'ընես, նայէ՛, որքան կը խորհիմ վրադ, նոյնիսկ մահէդ վերջ...:

Ինչպէ՞ս դեղը թէյին հետ խառնած՝ խմցուցած էր ծերին, եւ յետոյ զրկած Ակնէսին քովը, բռնի... Վերէն իջնելէն տասը վայրկեան ետք պառաւը սկսած էր զատանցել... եւ ահա հիմա կը մեռնէր... Ակնէս կրկին պիտի երթար դէպի անցեալ... դէպի իր ոճիւրը... ո՛չ մէկը պիտի հաւատար անոր անմեղութեան, եւ այսպէս խնդիրը պիտի փակուէր... Վրէժը պիտի լուծէր այդ օրրաւն, որ միշտ գրաւած էր ամէնուն սիրտերը (մառնաւանդ մարդոց): Նայեցաւ հայելիին... Ի՛նչ ունէր ան իրմէ տուէր. եւ մանա-

ւանդ անկէ տարիքով փոքր էր... սկսաւ բարակ մատներովը շոյել ինքն իր մարմինը, դառտալիները, կուրծքը, գիտե՞րք... եւ յետոյ՝ նայեցաւ ծերին...

Առաջին անգամ ըլլալով սոսկալի հիշ մը արձակեց, որ թուաւ ականներուն տակէն եւ պայթեցաւ միջոցին մէջ, խուլ թնդիւնով մը.

— Մեռա՞ծ է, — շնչաց, — մեռած, լը՝ մահ մեռած:

Եւ դուրսը խրեց ափերուն մէջ, աչքերը գոցեց ամուր, չտեսնելու համար համար մեռելին զոյգ մը աչքերը որոնք իրեն ուղղուած էին յամառ հայեացքով: Իսկ եթէ բռնուէր, եթէ չհաւատային, եթէ այս կամ այն ձեւով երեւան զար իրականութիւնը... պիտի թքնէին իր վրայ, պիտի չարարուէր, պիտի կեղտանար մարդկային ընկերութեան մէջ, եւ ոչ մէկ բան պիտի ազատէր գինք: Ոչ մէկ բան... ոչ իսկ իր կեանքը:

Սնկանոն շունչը կը հեւար վախցող սողուն մը շունչին նման. մինակ էր այս գիւղին հետ, միւս մինակ, ի՞ր դիպկիմ ինտ... Փութկոտ ոտքի ելաւ: Այլ չէր կրնար դիմանալ գերեզմանային միջոց լորտին: Պատուհանը քացաւ. կարծես երկաթի հարուածներ կը տեղային սըր՝ աին ժաշկերուն վրայ, թաք, թաք, թաք. հիմա կը զգար թէ որքա՞ն ծանր եւ ցուրտ էր յանցանքը. եթէ նոյնիսկ Ակնէսը զատապարտէին, ինք պիտի չփրկուէր երբե՛ք, երբե՛ք, ոչ իսկ ապրիլարթ մը:

— Երբե՛ք, — ըսաւ պոռալով պատե՝րուն ներքեւ կայնած, — երբե՛ք, կը լսէ՞ք զիս, եւ դո՛ւն, ծեր կնիկ, դո՛ւն որ չես լսեր... եւ սակայն կը զգաս... գիտեմ... զեւ կ'ապրիս, սակայն ուրիշ կեանքով: Յանկարծ ինքնաշարժի մը աղմուկը ցնցեց զինք:

— Իմիկն է, — թոթովեց յոնկարծ, դէմքը տփուռեցաւ մեռելային զեղինով մը: Հսկայ ժիւղ մը կը պատուէր ապանջին մաշկերը... աղմուկի, մեռելապառքի մը աղմուկին թանձր ժիւղը: Իժիշկը մօտեցաւ մեռելային.

— Ի՞նչ ունէր, — հարցուց նայելով մարդուն եւ կնոջ գէմքերուն: Ձեռքերը տարածեց մեռելային ափերուն եւ հղուեղձերուն վրայ, նայեցաւ մորթին, մատներուն, շրթներուն.

— Սրտի կաթուած է, — ըսաւ խօսքը սաղիւնով Լորիսին, որ քիչ մը անդին կայնած՝ դողալով, մեռել մատներուն եղունգները կը կրծէր, կծկուած ուղեղով:

Յանկարծ Լորիս խօսեցաւ, կցկոտոր եւ վախկոտ բառերով.

— Վէրի նրբին քովը գնաց քիչ առաջ... վար իջաւ... թերեւս... ըսէք, տոթոր... իրա՞ւ սրտի կաթուած է... ըսէք... սխալած ըլլաք... դեղի հետքեր չկան:

— Այլ մէկ զօրաւոր դեղի ներարկման նշան կայ, — ըսաւ բժիշկը աւելի երկար նայելով Լորիսին աչքերուն, աւելած զոյնին, դողացող շրթներուն...

Ուրեմն քնական մահով մեռած է: Դեղս չէ ուղղած վրան... Աստուած իմ, աղատուեցաւ... այսինքն Ակնէս աղատուեցաւ... իսկ ես... կերպով մը միայն: Ձէ՞ որ դրի դեղը, ուղեցի սպաննել զայն...

Նոյն պահուն բաց դռնէն կը մտնէր Ակնէս:

— Ներեցէք... մտնեմ... քիչ առաջ դեռ քովս էր... թռչունի պէս կը դողար... ըսաւ թէ շատ յոգնած էր... թէ սիրտը կարծես կը մարի, եւ թէ դիտէր որ ժամը հասած էր... քանի մը վայրկեան քովը նստայ, խօսեցայ:

Մինչ Լորիս մօտենալով Ակնէսին, կ'ըսէր.

— Նստեցէք, Տիկին Ակնէս... Ծեր էր հարկաւ, սակայն հարուած մըն է չէ՞... ցա՛ւ մըն է չէ՞, մեզի համար...

— Ամէն մարդ կ'ապրի իրեն սահմանուած կեանքը, — ըսաւ Ակնէս եւ սարսափած աչքերով մէյ մըն ալ նայեցաւ. մեռած կնոջ երեսին, կարծես նայած ըլլար ութ տարեկան աղջկայ մը գիտկին:

Ա. ՍԱՐԵՆՑ

ԿԵԱՆՔԻ ԱԼԵԿՍԱՆԴՐ

Դիտե՛լ, դիտե՛լ ու ապրե՛լ ալեկսանդր կեանքին,
Ըլլա՛լ գգոյշ խուրբերէն՝ աներեւոյթ, մշտակայ,
Մի՛շտ գիտակից, մի՛շտ արթուն՝ լայնածիր, բիրտ պայփարին,
Որ առաքուր կը սրբէ՝ յանդըզներէն, անըզգայ:

Խըլացուցիչ ի՛նչ ձայներ՝ կոկորդներէն քիւրաւոր,
Մարդը մարդուն հալընդդէմ, մի՛շտ քշեամի, անոգո՛ւ...
Խենթ ու խելառ կը վագեն՝ հոսանքն ի վար անաւոր,
Մէջն հեւապառ այս կրօնին, միշտ ճեռնաքափ ու անօգ:

Կեանքի զրախտ կ'որոնեն, – անմըտաբար՝ մարդէն վեր, –
Փընտրուումէն մէջ երկա՛ր, – խելագարիչ, անհեթեթ, –
Կը հեռանան շղեմէն, դարձած՝ սիւռէթ, անբստուներ,
Ուզեմուր հոգիներ, նըկում, քշուառ՝ առյաւելտ:

ՎԵՐԱՊՐՈՒՄ

Երանի՛ր թէ ըսէի բառը աղուոր, զիւթակամ,
Ականջն ի վար գգայնուտ, խաժակ-երագ աղջըկան,
Որում, օր մը, ժրպտեցաւ, նորագարթ, ջինջ իմ հոգին,
Առաջին իսկ ակնարկով՝ արեւոզող սէ՛ր սեմին:

Հոգիս երկնեց, հիւսեց գայն՝ մեծ լռութեան գրկին մէջ, –
Շերամն ինչպէս բախտարկուած, տիւ ու գիշեր անընդմէջ...
Սրբոյիս յիթեռն աննըմամ կը մընայ դեռ անազարտ,
Չեղաւ ելքե՛մ քափառիկ, այլ՝ մեկուսի, անաւարտ...:

Աղուորութիւնը հոգւոյս չուգեց ըլլալ ուրիշին,
Չուգեց դառնալ տժգոյն լոյս, հմայաբափ, վաղանցիկ,
Այլ՝ մնալ մի՛շտ լուսափայլ, ճեմանչուէտ, աշգային:

Ափսոսանքի ո՛չ մէկ խօսք՝ հոգիս մէջ սա պահում,
– Վերադառնալ անցեալին, գգալ, ապրիլ հիացիկ,
Երբ թերթատել կը փորձեմ Սիրոյ Գիրքը հրմայում:

Ն. ՎԻՐԱՊԵԱՆ

Մ Ր Տ Ի Չ Ը

Քիչ գրութիւններ ստորագրած սկսեալ մըն է Ն. Վիրապեան: Քիչ գրութիւնք մէջ երեւցած է ցարդ երկու անգամ: Իր նորագոյ գրութիւնն է որ հրատարակութեան կու տանք այս քիւնով, ետեւ տատելով իր գրութեան մէջ արուեստագէտ գրագի մը ներդրեալ գատորոշուող ու շեշտուող խառնուածքը: Վերստան հնէ, որ տարիներն ու ստեղծագործական յուրջ աշխատանքը, Ն. Վիրապեանի գրական շնորհքը պիտի կարենամ գրական ամուր տալանդի մը վերածել, ընդունակ՝ ընթերցողները գեղեցիկ անակնկալներու առջեւ դնելու:

Վիրապեանի մեր նպատարական կարմ արձակներուն առէն թէն ցայտուն գիծը, անոր դիտելու աւար կարողութիւնն է եւ դիտածը երգիծանքի, անուանում շնորհքը հաճախ մը անորոշանալով հազարայն է: Վիրապեան տիպարներու վրայ կը կեդրոնացնէ իր անուշադար, եւ հոն է որ տեսիլ յաջողած կը գտնենք զինք:

Եկեղեցիին բակը կանգնած էր. բարձրահասակ, քիչ մը առաջ ծոած մարմնով, կարմիր երեսներով, ձեռքը հովանոց մը, ֆէսաւոր մարդ մը. Մրտիչ Էֆէնտին:

Ժողովուրդին մէջ միայն ինքն էր որ ֆէս ունէր: Տարիները, վերցուցած էին իր տարեկիցներուն գլխէն ֆէսերը. իրը՝ կը մնար:

Փառաւոր պեխեր ունէր. չինձու կը թուէին: Ձախ կողմինը լաւ մը փակած կ'երեւար, աջ կողմինը կարծես պիտի փրթէր, շարունակ ալ ձեռքի մասնէրով պեխը կը շփէր ամուր ամուր, կարծես ամրացնել կ'ուզէր:

Ձեռք վայելած էր կարմիր այտերուն: Կը թուէր թէ գլխէն բնաւ չէր հաներ՝ ականջին կպած կողմերը աւելի մուր կարմիր էին:

Քնանալու ժամանակ, ֆէսը սեղանին վրայ կը դնէ, տակը՝ չինձու ակունքերը: Թոռնիկները, խակալը լսելով, կու գան կը վերցնեն ակունքերը, կը խաղան,

կ'աշխատին իրենց բերանը մտցնել:

Կերակի կէսօրները, երեսը վար կը պառկէ, ֆէսը քովը կը դնէ, թոռնիկները կանչելով կը պատուիրէ գլխուն վրայի ճերմակ մազերը քաշել ու գնել ֆէսին վրայ: Արթնալուսն, կը ստուգէ քաշուած ճերմակ մազերուն թիւն ու մեծութիւնը, ու ատոր համեմատ նուէր կու տայ պրզ-տիկներուն: Թոռնիկները դործի կը սկսին. ճերմակ մազերը չեն հատնիր. կը յուզին պրզտիկները, մէկիկ մէկիկ կը քաշուին. մէկն ալ կը համարձակի ըսելու.

— Մեծ պապա, սեւ մազերը քաշենք, անոնք աւելի քիչ են:

— Ձէ՛, յանկարծ կը շտկուի Մրտիչ աղան: Ձէսին կը նայի, ստուգելու համար թէ սեւ մազերը փրցուած են. յետոյ դարձեալ կը պառկէ, կը սկսի խրոկալ:

Տարօրինակ մարդ է Մրտիչ աղան: Եթէ դիտցած մէկ գործը բերեն իրեն՝ Պրդատոսի պէս կը չէզոքանայ. իսկ

չգիտցած բաներուն՝ գիտցածի պէս կը խառնուի եւ առատ առատ կը խօսի:

Դասախօսութիւններու առեւն բռնուն կերպով կը ծափահարէ. բայց տեսնելով որ քովի մարդիկը չեն ծափահարեր, ինքն ալ, անկէ ետք, ինչքան ալ լաւ պատրաստուած ըլլայ զասախօսութիւնը, չի ծափահարեր:

Երբ տեսաւ որ իր ընկերները ականց կը գործածեն, ինքն ալ ականց մը գնեց շուկայէն, առանց աչքը քննել տալու, ու գործածեց մինչեւ վերջ:

Փողկապը, հանգոյցէն վար, ձուկի կռնակին պէս կը տնկուի, յետոյ կոմաց կամաց կը տափակնայ, կը մտնէ տարա-տին մէջ:

Ճաշէն յետոյ, անմիջապէս քուշը կու գայ. մինչ միւսները դեռ կը ճաշեն, ինք կ'երկնայ բազմոցին վրայ ու կը սկսի խուկալ. ժամ մը յետոյ կ'արթննայ, կամ փիկալ կը խաղայ, կամ իրենց հայրենակցական միութեան մասին երկու խօսք կ'ըսէ:

Քսան տարի է հայրենակցական միութեան վարչականներէն է, — զանձապահը. ոչ մէկ ատեն չկրցան այդ անձը իրմէ առնել, քանի որ սկուայ ունէր. ձեռքերովը ամուր մը բռնած էր անձը: Երբ ընտրութիւնները ըլլային, իր հոգը չէր ընել, քանի որ գիտէր որ զինք պիտի ընտրէին. հակառակ պարագային... ան-գամ մը թող փորձէին զինք չընտրել, այն ատեն տաղանակին մեծագոյնը ինք պիտի ստեղծէր:

Երբ յառաջացած տարիքին բերու-մով գործը ձգեց, փորը սկսաւ ուռիլ. մտահոգուեցաւ. բժիշկի գնաց. անոնք քննեցին, շատ դրամ առին իրմէ: Դեռ շատ դրամ պիտի տար բժիշկներուն, ե-թէ արհեստաւոր մը չըսէր իրեն՝

— Մտի՛ն էֆէնտի, երբ աշխատիս կ'անցնի:

Մտի՛նը նորէն սկսաւ ուշաատիլ եւ փորը նահանջեց:

Տարիքը առած մարդ է, բայց փոքր տղոց հետ տամալ կը խաղայ, ժամանակ անցընելու համար. երիտասարդներուն

հետ որսի կ'երթայ՝ կազդուրուելու հա-մար. իսկ ծերերուն հետ ժողովի կը նըս-տի՝ եթէ Հալէպ չէ դաջած հարսնիքի, եւ կամ Դամասկոս՝ միջազգային ցուցա-հանդէսի: Կը պատահէր, որ Կիրակի օր մը, կէսօրէ ետք ժողով ըլլայ կարեւոր հարցեր քննելու համար, այն ատեն, ին-քը, երիտասարդներուն հետ Փութպոլի խողի կ'երթայ:

Ուրիշ ծերերու պէս չէ ասիկա, երի-տասարդ հոգի ունի. երբեք չի մտածեր որեւէ մէկ նիւթի շուրջ, միտքը ինչ որ զայ տնմիջապէս կը խօսի, կը պատահի որ յանկարծ բորբոքի եւ ուղղակի առ-պարէզ կարգայ մէկու մը, յաջորդ օրը սակայն, բան չպատահածի պէս, անոր հետ թեւ-թեւի մտած կը սրտըտի, ու-րախ-ուրախ կը խնդայ, կը կատակէ ու իր ծննդավայրի մասին կը խօսի:

Բնաւ քէն չի սրահեր: Կեանքէն դո-հացած մարդ մըն է: Եօթը, ութ, հաստ զաւակ ունի, վերջինը նոր ծնած:

Մրտի՛նը յաճախ կը բարկանայ կըն-կան. կ'իյնը՝ մեծ աղջկան, մեծ աղջիկը՝ պզտիկ եղբորը ու այսպէս մինչեւ ամէ-նէն պզտիկը: Ան ալ, տեսնելով որ իրմէ պզտիկ չկայ, իրենց շունին կը բարկա-նայ. իսկ շունն ալ, անցնող, դացողնե-րուն վրայ կը հաջէ:

Հիմա, ինք չ'աշխատիր այլեւս, գրա-ցիկներուն խանութները կ'այցելէ, համ-րի՛նը ձեռքը, անուշ դրոյցի կը նստի, յե-տոյ, ձանձրանալու պարագային, կ'եր-թայ մէկ կամ միւս տղուն խանութը, ժամանակ կ'անցընէ մինչեւ իրիկուն: Ե-րեկոյեան տուն կու գայ: Շունը, ցատ-կըտելով, սուր շարժելով դէպի իրեն կու գայ. ինքը կը կայնի դրան առջեւ, կը ժպտի, գլուխը կը խաղցնէ, համ-րի՛նը շան դունչին կը մօտեցնէ, փաղաք-չական խօտքեր ըսելով քանի մը անգամ շան փորին կը զարնէ ու ներս կ'անցնի: Թաղին ծայրէն իր հոտը կ'առնեն պրո-տիկները, վրան կը թափին, գրպանները կը խուզարկեն, շաբար, շոգոյայ գտնելու յոյսով: Ինք կ'երկնայ բազմոցին վրայ ու մինչեւ որ տղաքը գործէն վերադառ-

նան, համբիշ կը դարձնէ:

Քննանալէն առաջ բակը կը շրջի. առաջ աշտին որպիսութիւնը կը հարցնէ, յետոյ Ստամպուլի հաւերուն կը նայի, կը համբէ զանոնք. ու երբ տեսնէ որ ամէն ինչ կարգին է, հանգիստ՝ միդելու կ'երթայ. յետոյ, դռնը ամուր մը կը դռցնէ, վստահ ըլլալու համար, ձայնէն, թէ դոցեց դռնը: Անկողին մանելէն ետք կ'երկմտի, արդեօք դռնը լաւ գոցե՞ց... բայց ձայնը Չէ: Անգամ մը եւս կ'ելլէ, կը ստուգէ դոցուած ըլլալը, կը դառնայ, հանգիստ սրտով օխ մը կը քաշէ, որը ընտանիքին բոլոր անդամները կը լսեն անպատճառ, եւ ատիկա կ'ընդունին իբր ճրագմարի ազդանշան, որմէ յետոյ ամէնքն ալ կը պառկին, ժամը ինը չեղած:

Մըտիշ էֆէնտի հին, պահպանողական ծերունկ մըն է. չ'ուզեր իր շրջանակէն դուրս ելլել, ինչպէս որ է այդպէս կ'ուզէ մնալ. երբեք չ'ուզեր յառաջդիմել, ատոր համար ալ պատահանէն դուրս ելլելու կը վախնայ. կ'ուզէ յիսուն տարի առաջուայ կեանքը ապրիլ, ատոր համար, հակառակ տանը մէջ հզօր տրամունջներուն, հաւ կը պահէ, այծ, շուն, ու տանիքն ալ՝ երշիկ, ամառներն ալ,

զիւզը՝ թարխանայ, սուճուխ, պատարի ու նահւ՝ այծ կ'արածէ:

Կը պատահի երբեմն, որ փողոցէն կանչէ իր կինը կամ աղջիկը. փոխանակ անուններով կանչելու «Տիպրան» կը պոռայ, «Յոփաէփ» կը կանչէ, ու այսպէս մինչեւ որ աղջիկը կամ կինը պատուհանէն նային:

Սկիզբէն ի վեր մէկ զիւզ ելած են Մըտիշներ: Իրենց ինքնաշարժը, ամէն օր ելլել իջնելէն ալ դժմաբան դոց սորված է. զիտէ թէ ո՞ւր պիտի հանդիպին, ո՞ւր պէնզին պիտի առնեն, ո՞ւր պիտի կենան իր ջուրը փոխելու համար, եւ յետոյ, ի՞նչ ձեւով ինք պիտի մտնէ ու կենայ տան առջեւ, եւ մանաւանդ՝ ո՞վ ամէնէն առաջ պիտի իջնէ: Տասնըչորս տարիէ ի վեր նոյն տունը վարձենուն համար, ինքնաշարժը ասոնք բոլորը սորված է: Տնեցիները երբեք չ'են ուզեր ուրիշ տուն վարձել, ուրիշ զիւզ երթալ, քանի որ Մըտիշ էֆէնտին այդպէս կը փափարէ, անոր համար նոյն տեղը կը մնան, նոյն կեանքը կ'ապրին:

Մըտիշ էֆէնտին ծնած է Այնթուպ, ապրած է Դամասկոս, եւ պիտի մեռնի Պէյրուսի մէջ:

Ն. Վ.



ՋՕՀՐԱՊ ԳԻՐԷՋԵԱՆ

« ՄԻ՝ ՄՈՌՆԱՐ, ՊԷԹԻ . . . »

Մ՞ալրամուտի նման բան մըն էր։ Վերը՝ ազա՛հ արեւի մնացորդ մը, գո՛րշ երկնքին գիրկը։ Վարը՝ նոյնքան գորշ ճամբաներ, չէնքեր եւ մարդիկ։

Սրճարանը կը գտնուէր քաղաքին մէկ անկիւնը։ Անուն չուէր։ Պէտք չը կար։ Ընդհանրապէս ամայի կ'ըլլար։ Պարապ աթոռները, սեղանները, խորտուրորտ դետնին վրայ, որոշ լքուածութիւն մը, ձանձրոյթ մը կը մատնէին։ Ժազ նստած էր այդպէս։ Կը նայէր ծովուն։ Նաւ մը կ'ամպոտէր երկինքը։ Պէթի քակած էր գլխուն լաշակը։ Ձեռքին վրայ կ'ուրէր։ Կը քակէր։ Կրկին կ'ուրէր։

– Ուրեմն պիտի մեկնիս, ըսաւ, Ժազ։

Պէթի չպատասխանեց։ Ձանձրացած՝ լաշակը աթոռին հտեւը կտնեց։

– Աստորայիա ընդարձակ երկիր է, շարունակեց Ժազ։ Ահադին «քանկուռունք» կան։ Երախաները իրենց փորը, տարօրինակ ձեւով կը վազեն։

– Ժազ, ի՞նչ ունիս այսօր, ըսաւ Պէթի։

– Ոչինչ։ Ի՞նչ կ'ուզես որ ունենամ։ Ամէն օրուայ պատմութիւնը։

– Երբեք պիտի չփոխուիս, ըսաւ Պէթի ժպտելով։

– Կը կարծե՞ս։ Ամբողջ օրը, տոլարները սթերիլնի կը վերածեմ։ Լիրերն ալ ֆրանքի։ Եւ տակաւին չեմ գիտեր ի՞նչ բանը, ինչի։ Ես ալ չեմ գիտեր ինչի կը վերածուիմ։

Պէթի սրկարէթ մը վառեց։ Մուխը քաշեց ու փչեց։ Կրկին քաշեց ու փչեց։

– Շատեր ծուխը, գունդի նման կ'ըլլոր, կ'ըր կը հանեն, դուն կրնա՞ս Ժազ։

Ժազ չպատասխանեց։ Կը շարունակէր ծխել։ Իր դիտցած ձեւով։ Այդպէս մեքենայի նման, դուրս տալով ծուխը։

– Այսօր երբ հրաժարակա՛նս տուի, շարունակեց Պէթի, թեթեւութիւն մը զգացի։ Այլեւս անօրէնը պիտի չըսէ ինձի։ Պէթի՛ այս նամակը մեքենազրէ, Պէթի՛ սա յանախորդին հեռաձայնէ։ Պէթի՛ սա ըրէ։ Պէթի՛ նա ըրէ։ Պէթի՛... Պէթի...։ Վերջացաւ ալիւս։

– Կը կարծես թէ Աստորայիա...։

– Ժազ, նորէն մի սկսիր, հանդիսս ձգէ «քանկուռունք»։

– Ղաւ... լաւ...։

Ժազ վերստին աչքերը սեւեռեց ծովուն։ Նաւը հետզհետէ կը պզտիկնար։ Քիչ մը հեւ եւ ոչինչ պիտի տեսնուէր։

– Այս սպասեակը ո՞ւր է, մուտաց, Ժազ։

Ջղային՝ ձեռքերը իրարու զարկաւ։

Վերջապէս Սալիւ երեւցաւ: Գիրուկ տը-
ղայ մըն էր: Սրբորուելէն մօտեցաւ: Յօ-
րանջեց: Ապա բարեւեց: Գուրջի կտորով
մը սեղանը սրբեց: Կրկին յօրանջեց:

– Սովորականին նման, ըսաւ, ժառ:
– Երբ քեզի հանդիպեցայ այդ երեւ-
կոյթին, դուն ալ կը յօրանջէիր աւել-
ցուց Պէթին: Հարցուցի թէ քո՞ւն ունէիր:
Ձեմ՝ դիտելը ըսիր: Հետաքրքրուեցար ե-
թէ երբեք կը ձանձրանայիր:

– Ինչո՞ւ չպատասխանեցիր, վրայ
բերաւ ժառ:

– Վրաս պիտի խնայիր: Օրական
քսանըրորս ժամ մինակ կը դպայի ինք-
զինքս:

Փռչիի ամպ մը բարձրացաւ: Ինք-
նաշարժ մը կանդ առաւ սրճարանին
ստիւն: Զույգ մը իջաւ: Երեսասարդ էին:
Կը ժպտէին տակաւին: Իրտրու ձեռք
բռնած՝ ներս մտան: Անկիւն մը տեղա-
ւորուեցան: Տղան բանկը մը ապսպրեց:
Ապա ձեռքը նետեց աղջկան ուսին: Իր
մօտ քաշեց աղջիկը:

Պալիւ բերաւ դարեկուրի դաւաթնե-
րը: Պէտք եղածէն աւելի լեցուցած էր:
Փրփուրը կը սահէր դաւաթներուն բո-
լորտերը: Պալիւ աչք մը ըրաւ ժառին:
Ըսաւ թէ այդ գոյգը դիտար շատ կը սի-
րէին:

Պէթի կը նայէր անոնց: Տղան յան-
դուպն դարձած էր: Իր չրթները կը պը-
տըտցնէր աղջկան դէմքին վրայ:

– Որքա՞ն պիտի տեսէ ժառ:

– Ի՞նչ բանը:

– Անոնք, ըսաւ Պէթի, գլխու շար-
ժում մը քնելով զոյգին կողմը:

Ժառ չպատասխանեց: Մատը կը պը-
տըտցնէր դարեկուրի փրփուրին վրայ:
Նաւը պղտիկ շարժուն կէտի մը վերած-
ուած էր:

– Վերջնական է որոշումդ Պէթի:

– Ի՞նչ եւ ես անկարելի է, ըսաւ,
աղջիկը: Ձե՞ս յիշեր պարահանդէսը:

Ո՞ր մէկը: Ամէնքը իրարու կը նմա-
նէին: Հաւանաբար վերջինը: Պարահան-
դէսի ամէնէն տաք շրջանին, Պէթի յան-
կարծ նայած էր իրեն: Պարապ նայուածք
մըն էր: Կարծես առաջին անգամ կը տես-

նէր իրեն: Ապա սեղմուած էր կուրծքին:
Նոյնիսկ Պէթին եղունգը դաջած էր
ափին մէջ:

– Ժա՛ղ, դի՛ւ տուն տար, ըսած էր,
խոտիքով մը:

Պէթին բաժնուելէն հտք զղջացած
էր: Ժիզ մը ըրած չէր Պէթին հանդար-
տեցնելու: Նոյն դիշերը վերադարձած
էր անոնց տունը: Ձէր յանդիմած դան-
դը հնչեցնել: Գլխիկոր վերադարձած
էր դրան առջեւէն: Զղջումը ոչինչ կը
նշտնակէր: Համբոյրներն ալ, գիրկընդ-
խառնումներն ալ ոչինչ կը նշանակէին:
Նոյնիսկ ոչինչէն ալ պակաս բան մը: Պէ-
թին տարբեր բան մը չէր:

Այսօր Պէթին հեռաձայնած էր իրեն:
Հաղորդելիք լուր մը ունիմ ըսած էր: Կը
մեկնէր: Ու ինք կը մնար այդպէս, ձեռ-
նածալ: Փորձ մը եղած էր կարծես իրեն-
ցը: «Պօյ Ֆրէնտի» ու «Կրըլ Ֆրէնտի»
սահմանը չէին անցած: Միշտ միեւնոյն
հաղած էին: Միշտ օտարներ: Կը մեկնէր եւ
կարծես ոչինչ կը փոխուէր: Վաղը՝ առ-
վորականին նման պիտի երթար դրասնե-
ւակ: Տնօրէնը տրցակ մը տուար պիտի
երկարէր իրեն: Համբէ՛ պիտի ըսէր: Եւ
ինք պիտի սկսէր: – Տասը, քսան, երե-
սուն: Ձէ, չեղաւ: Տասնոցներու մէջ,
հինգնոց մը փախած էր: Հարկ էր վե-
րստին համբել: Միշտ համբել: Ուրիշ
բանի ժամանակ չկար: Ամէն ինչ համ-
բել: Ամէն ինչ հաշուել: Ժիշդ մեքենայի
մը նման: Մեքենայի նման ապրիլ: Մե-
քենայի նման մաշիլ: Այդպէս, ապուշո-
րէն:

– Ժառ, ի՞նչ կը մտածես հարցուց
Պէթի:

– Ոչ մէկ բան:

– Ձէ, երբ շրթունքներդ այդպէս
պրկես, դիտեմ թէ բանի մը կը մտածես:

– «Քանկուռունքունք», ըսաւ, ժառ:

– Ի՞նչ կ'ուզես այդ անտառներէն:

– Ոչինչ, հաճելի կը զտնեմ զանոնք
այդպէս երկու օտքի վրայ:

Մութը իջնելու վրայ էր: Մովը ըստ-
ուերոտիլ սկսած էր: Կը միախառնուէր
հորիզոնին: Սեղանները հաղիւ կը զատո-

բողոքին: Յողիած երեւոյթ մը ունէին
կապարագոյն երկնքին տակ:

– Գաւաթ մը հաւ կ'առնե՞ս, Պէթի:

– Ի՞նչ...

– Գաւաթ մը եւս կը խմե՞ս:

– Այո, այո... միայն պաղ թոզ ըլ-

լա՛յ:

Ու Պէթի կրկին ծռեցաւ եւ սկսաւ
թաղարին մէջի կէս մը շորցած վարդը
մաքրել:

– Տակաւին երկու օր առաջ, այնքան
գեղեցիկ էր, ըսաւ:

Ժառ Խալիլը կանչեց: Աթոռակի մը
վրայ նստած էր: Դադրած էր յօրանջնէլ:
Ապուշօրէն բերանը բացած՝ համբուրուող
զոյգին կը նայէր:

Պէթի սպասեակին հարցուց թէ ին-
չո՞ւ չէր ինամեր վարդը: Խալիլ ուսերը
շարժեց: Ըսաւ՝ թէ ուշ կամ կանուխ պի-
տի շորնար: Օր մը առաջ, օր մը վերջը,
ի՛նչ արժէք ունէր: Ժառ աւելցուց թէ
ընտրեալն օրէնքը այդ էր: Այն ինչ որ
ծաղկէր, կը խամրէր: Ապա կը փտէր:

– Յիմար օրէնք մըն է, ըսաւ, Պէ-
թին:

– Յիմար կամ ոչ, պէտք է ընդու-
նինք:

Վայրկեան մը իրարու նայեցան:

– Ինչո՞ւ չես խմեր հարցուց Ժառ:

– Հա... բոյորսդին մոռցած էի...

Գաղջ հով մը կը փչէր ծովէն: Ծու-
քերը հետզհետէ կ'երկարէին: Պէթի ը-
սաւ թէ տունէն կը հակառակէին իր
իր ճամբորդութեան: Մայրը ահազին
պատմութիւններ կը հանէր:

– Մայրս այլեւս պիտի չզանգատի:
Պէթի՛ ինչո՞ւ կը մերժես ամուսնանալ:
Լաւ աղայ է: Հորուստ աղայ է: Երկու
աչք ունի: Երկու ձեռք: Ոչ ալ հայրս
պիտի հարցնէ թթուած գէմքով: Լաւ
ամուսկան կ'առնես: Ի՞նչ կ'ընես Պէթի:

Մինակդ ի՞նչ պիտի ընես օտար քա-
ղաքի մէջ: Ի՞նչ է ուղածդ: Կը կարծեն

թէ ոչինչ կը պակսի ինծի, Էդրակացուց
Պէթի: Կարծես թէ հոս միշտ, կորու-
ւած չեմ:

Ժառ նաւը կը փնտռէր: Ձրացած էր
ան: Իր գէմ ունէր մութին մէջ անհետա-
ցող ծովը:

Սպասեակը տնտեսով մօտեցաւ:
Հարցուց իրենց եթէ լոյս կ'ուզէին:

– Ոչ, ըսաւ, Ժառ, թող ազատ ըլ-

լան

– Համբուրուիլը լաւ բան է: Ծառ
լաւ բան, աւելցուց Խալիլ, ձեռքերը ի-
րարու շփելով:

Եւ զարմացած նայեցաւ իրենց, որ
նստած էին այդպէս գէմ գիմաց:

Երկնքի գորշութիւնը տեղի տուած
էր մթութեան: Ամէն ինչ ստուերոտած
էր վարը: Ծնչիչ առանձնութիւն մըն էր:

– Ի՞նչ պիտի ընես հոն, հարցուց,
Ժառ:

– Հիւանդանոցի մը մէջ պիտի աշ-
խատիմ:

– Լուծում մըն է:

– Ձեմ գիտեր, ըսաւ, Պէթի:

Ինքնաշարժի մը դարդունը վայրկեա-
նի մը համար խանդարեց անդորրութիւ-
նը: Մութը կը թանձրանար: Օդը ցրտիլ
սկսած էր: Ժառ նայեցաւ Թեւի ժամա-
ցոյցին:

– Երթանք, ըսաւ, Պէթի:

– Ո՞ւր:

Պէթի չպատասխանեց: Լաշակը գլը-

խուռն կը կապէր:

– Տունէն դրասենեակ, դրասենեակէն

տուն: Պատէ պատ վազել:

Եւ սիկարէթը մոխրամանին մէջ ճըզ-

մելով, Ժառ աւելցուց:

– Մի՛ մոռնար, Պէթի, «քանկու-

ռուի» նկար մը գրկել:

Ինքն ալ չհասկցաւ, թէ ինչո՞ւ կը

ժպտէր դառնօրէն:

Ձ. Գ.





ԳՐԱԿԱՆ ԶՐՈՅՑ

ՎԷՊԻՆ ԲՆՈՅԹԸ

ԵՒ ԻՐ ՆԿԱՐԱԳՐԱՅԻՆ ԳԱՆԻ ՄԸ ԳԻԾԵՐԸ

(Զեկուցում՝ Ե.Գ. ՊՕՅԱԺԵԱՆԻ)

Արուեստ.— Վէպը արուեստի ամենէն
կարեւոր մէկ ճիւղին՝ գրականութեան
պատկանելուն համար, անհրաժեշտ կը
թուի ինծի տալ այստեղ, նախ, արուեստին
ընդհանուր մէկ սահմանումը, քանի
մը սեղմ տողերու մէջ։

Արուեստի որեւէ գործ, իր պարզա-
գոյն բացատրութեան մէջ, ծնունդն է եւ
արդիւնքը՝ երկու յաջորդական պահե-
րու։ Առաջին.— Ապրումի պահ։ Երկ-
րորդ.— Ապրումը գեղեցկօրէն եւ այս կամ
այն միջոցով արտայայտելու պահ։
Մարդկային խոր ապրում, առուել ղե-
ղեցիկ արտայայտութիւն՝ հաւասար են
հետեւարար արուեստի։ Ապրումին եւ ա-
նոր արտայայտութեան մէջէն երբ գեղե-
ցիկը, որ իր բուն եւ լայն առումին մէջ
կը նշանակէ նաեւ ուժ, կարգ, միութիւն,
ներգանակութիւն եւ խորք՝ ղեղչենք, —
մարդ ենք։ Երբ աւելցնենք անոնց վրայ
գեղեցիկը — արուեստագէտ մարդ ենք։
Իսկ այդ գեղեցիկը, որ հոգեկան ստեղ-
ծագործութիւնն ու բարին կը կրէ իր

մէջ, ղերով կամ խօսքով տալու պարա-
դային՝ գրող-մարդ ենք, գրագէտ, գե-
ղարուեստական քանակաութեամբ մշակ։

Արուեստը արտայայտութիւն է եւ
իր լրջապատը կտրծես արտայայտու-
թեան մղող՝ ինչպէս տիեզերական ար-
տաքին կարգին մէջ լոյսը։ Արարչական
եւ արտայայտչական նոյն բնոյթը ունին,
լոյսը արտաքին աշխարհին կերպով մը
արուեստը ըլլալուն, իսկ արուեստը՝
ներքին հոգեկան աշխարհին լոյսը։

Այսպէս, արուեստի որեւէ գործի
մէջ նախապայման է հետեւարար գեղե-
ցիկը, որուն մէկ հոմանիշն է, նաեւ հա-
րազատութիւնը։ Պայծառութիւն, ջեր-
մութիւն, ուժ՝ ուրիշ բան չեն արուեստի
կարգին մէջ վերջին հաշուով, եթէ ոչ
հարազատութիւն։ Այսինքն՝ իսկութեան
ամբողջական ճանաչման արդիւնաւէտ
ճիշդ, ամբողջական ապրում, եւ ասոնց
արտայայտութիւնը։

Գեղարուեստական գրականութիւնը,
իր բոլոր սեռերով, ենթակայ է, առա-

ւել կամ նուազ չափով մը, արուեստի այս կարծես տեսակ մը աֆսիռովն: Ու, հետեւաբար նաեւ վէպը:

Արդ ջանանք քննել հիմա վէպը իր բնույթին եւ նկարագրային քանի մը դիտերուն մէջ:

Մագու՛մը .—

Վէպ բառը մեր անգիր բանահիւսուածքան շրջանին գործածուած վիպասանութիւն, աւանդավէպ, կամ պարզապէս վէպ բառն է, որ շատ մօտ, գրեթէ հոմանիշ բառ մըն է այդ օրերուն, հեքիաթին ու պատմութեան. օրինակ .— Արա Գեղեցիկի եւ Շամիրամ Թագուհիի վէպը, Վահագնի վէպը, Արտաշէսի եւ Սաթենիկի վէպը, Արտաշատի վէպը, Տորք Անգեղի վէպը, Պոռ թագաւորի վէպը եւ այլն: Այսօր, բառը հեռացած է իր նախկին իմաստէն եւ իբրեւ գրական սեռ՝ կը գործածուի գրեթէ բոլորովին նոր առումով մը: Առասպելի մը գեղեցիկ ճարտարապետութիւնն էր առաջ, մէկու մը կամ բազմաթիւներու հարուստ երեւակայութեան արդիւնք՝ ժողովուրդի մը հոգիին հիմնական ստորգիւլիները, իրենց առաքինութեան ուժով, անձերու և դէպքերու մէջ բացայայտելու կոչուած: Այսպէս ըսած, ժողովուրդի մը հոգեկան բարեմասնութիւններուն կարելի մէկ խրատացումը, առհասարակ հաւաքական հեղինակութեամբ մը, գեղարուեստական խօսքի ճամբով ժողովուրդը մը եւ դարեր՝ կ'աշխատէին հաւաքականութեան մը վէպին կամ վէպերու վրայ: Պարզ անհատի մը հոգիին պատմութիւնը անհատի մը կողմէ տրուած՝ չկայ այդ շրջանին մեր մէջ: Հին յոյները իբրեւ վիպագիր ունին Հելիոտորը, Լօնկուսը, Լիւսիէնը, Հոմըրոսը, իբրեւ վէպը նախազգացող հեղինակ, ունին Փեթրոնը եւ Ապուլէյն: Պրանսայի մէջ վէպը կը սկսի Հ. Դուրֆիէն, Ասքրէով: Նոր դարերու վէպը իր այսօրուան ըմբռնումէն ոչ հեռու ըմբռնումով մը՝ միջնադարեան ծագում ունի: Պրանսերէն roman-ն է ան կամ Սպանիայէն հաւանաբար Սերվանթեսով Անգլիա անցած novel-ը, ու

րոնք, իրենց կարգին, պատմական երկար հոլովոյթի մը ենթարկուելով, եղած են այսօրուան քիչ թէ շատ ընդհանրացած առումով համախարհային գրականութեան մէջ վէպ ճանչցուած սեռը:

Վէպին սկզբնական նկարագիրը իր ժողովրդայնութիւնը եղած է, ինչպէս հեքիաթներունը, ինչպէս քիչ մը գրական եւ ընդհանրապէս արուեստի ամէն գործի սկզբնական նկարագիր: Չմոռնանք՝ որ ինքը, արտայայտութիւն ըսուածը, ներառարժէ մը գրեթէ ամբողջ եւ ապա ուրիշը գրեթէ ամբողջ ճիշդ՝ ընկերային խորք մը ունի, հաւաքականութեան փոխանցուելու եւ անոր մէջ տարածուելու կենսական պահանջ մը՝ մարդ արարածին համար: Մեր ամէնէն մտերիմ, ամէնէն աւելի մերը նկատուող բանն իսկ, աղօթքը, ուրիշին ուղղուած է՝ ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ .— արտածման ապրանք է, վերջին հաշուով:

Վէպը ոչ միայն իր մտադրութեան, այլ նաեւ ու մանաւանդ իր յղացքին ու գործադրած միջոցներուն մէջ, աւելի լայն ունկնդրութեան մը սահմանուած է, հասարակութեան բոլոր խաւերուն մէջ գեղեցիկ խօսքին ուժն ու հմայքը տարածելուն միտքով, առաքելութիւնը ունի: Լիթուէի, Լատուի, Ճ. Պրիւնըթիէ-րի եւ գրական սեռերու ուսումնասիրութեանց նուիրուած բազմաթիւ գործերու համաձայն, roman՝ կը նշանակէ բոման լեզուով (Պրանսերէնը նախորդող լատիներէնէ ածանցուած լեզու. Պրանսայի մէջ) եղած իրական կամ երեւակայական պատմութիւն, որ կրնայ ըլլալ արձակ կամ ոտանաւոր: Roman-ին նպատակն է ձեւը գտնել հիացնելու, հետաքրքրութիւնը գրգռելու եւ ժամանցի հաճելի պահ տեղծելու, ինչպէս եւ յաճախ, տոռանց քարոզի, հասարակութիւնը շփով մը բարոյակրթելու: Հեքիաթին եւ դիւցազնեղութեան շատ մօտը կեցած, թեւեւ անոնցմէ ածանցուած սեռ մը, որ կը դիպչէ հետզհետէ իր մէջէն գերբնականին ու հրաշալիքին օգնութեամբ հարցերն ու հանդիսները լուծելու նախկին եղանակը: Կը ջանայ լուծել գանձք բա-

նականությունը, կը ջանայ մարդու իրական կեանքին մօտենալ, ճշմարտանման ըլլալ:

Ժողովրդայնութիւն, հանելիութիւն, հետաքրքրականութիւն, հիացում պատճառելու փորձ՝ իր գոյութիւնը նոր սկրոտող վէպին դրական նկարագրէր կերտող հիմնական գծերն են:

Իր այս աստիճանին վրայ, վէպին իմացումը սահմանափակ իմացում մըն է դեռ: Սկանքին հետ եւ օրինակովը արուեստի միւս սեռերուն, վէպն ալ կ'ենթարկուի բնաշրջման օրէնքի մը, չըջանէ չըջանալով զոման պատմական հոլովութիւնը մը ծիրը գծելով իր ետին: Միջնադարեան իր միջավայրը (կախարդած. անտառներ, տեսիլքներ, ուրուականներ, հրէշներ, պարիկներ եւն.), չափով մը իրականութիւն, չափով մը տակաւին հեքիաթ՝ կարող մը դիւրեքու մէջ քիչիքացան ճշգրտութեամբ միջավայրի մը վերածուած է արդէն այնքա՛ն նախկին պարզ, ղիւրճասիւնայի նկարագրէն ու չինչ կամ քիչ բան մնացած է վէպին մէջ: Ժամանակին ու ստեղծուած քաղաքակրթութեան հետ, ազգային, ընկերային, կրօնական եւ իմաստասիրական թոհոբոհին մէջ, վէպը կը ստանայ աւելի բարդ եւ աւելի ծաւալուն նկարագիր մը, աւելի մօտէն ծառայելով հետզհետէ հոգիին, անոր միջավայրի ու ժամանակի խնդիրներուն եւ իրարու հետ ունեցած յարաբերութեանց: Իր յարգութիւնը կը ստանայ կեանքէն, Հետեւելով անոր շարունակ, զուգահեռն ու հայելին ընելով ինքզինք, տեւաբար խորացող ու ճիւղաւորուող այդ կեանքին:

Գրական սեռերուն մէջ տիրապետողն ու ամէնէն աւելի ժողովրդականութիւն ստացածը վէպն է նորէն, իր նկարագրի հիմնական գծերէն մին ճկունութիւնը ըլլալով, նիւթերը զարգացնելու կապակցութեամբ իր elasticité-ն:

Վէպը, արդարեւ, իր բնոյթով իսկ, աւելի լայն սահմաններ տրամադրելու ի վիճակի է, մարդուն կենսափորձը իր գրեթէ ամբողջութեանը մէջ կարենալ ար-

տայայտելու համար: Զկաշ դեռ դրական ուրիշ սեռ մը, որուն արտօնուած ըլլայ արուեստի օրինակներէն մէջ վէպին շափ տարածուիլ կեանքին զանազան երեւոյթուն վրայ: Միւս բոլոր սեռերուն հետ բաղդատած, վէպը ամէնէն նուազ սեղմութիւն պահանջողն է, դրական բոլոր սեռերուն աւելի մերձաւոր, աւելի կարեւոր՝ միջինը, համադրութիւնը՝ իր ներքին հնարաւորութիւններով: Եթէ առածը դերագոյն խտութիւնն է զեղարուեստական խօսքին, վէպը առաւելագոյն սահմանն է անոր տարածական կարելիութեան, ինչ որ իր հետ որոշ ազատութիւններ կը բերէ ի հարկէ: Բանաստեղծութիւն, հեքիաթ, պատմուածք, թատերգութիւն, երգիծանք եւն.՝ ամփոփման բաւական խիստ օրէնքներ ունին միշտ իրենց վրայ: Վէպը չունի: Անոր պարտադրուած սեղմութիւնը յարաբերաբար շատ քիչ է: Տաղանդաւոր ու ճարտար վիպագիր մը կրնայ ընդարձակածաւալ գործ մը տալ, կեանքի նոր ու զանազան հարցեր, հանգոյցներ ու կացութիւններ, ինչպէս եւ տիպարներ եւ դէպքեր օգտագործելով, առանց սահմանափակման վախի, առանց վնասելու երկի ներքին արժէքին: Անախտ եւ լուրջ քննադատութիւնը զինք չառաքիտ չի նշկատելու գործին ծաւալին կապակցութեամբ: Իրաւունք չունի այդպէս նկատելու: («Պատերազմ եւ խաղաղութիւն», «Թշուառներ», roman-fleuve-ի հեղինակները, մեր մէջ Յակոբ Օշական):

Մենք ուզում իսկ խոշորակազմ զաւակ է գրականութեան համար վէպը, իր միւս եղբայրներուն կամ քոյրերուն մէջ: Բայց ինչո՞ւ ստեղծուած է վէպը, ինչ պահանջ գոհացնելու կոչուած կըրնայ ըլլալ ան: Դժուար է բոլորովին ճշգրիտ պատասխան մը տալ այս հարցին, ինչպէս դէպքին չէ առհասարակ բոլոր սեռերուն համար եւս: Հեղինակութիւն եղող մարդոց բանաձեւած կարծիքէն անկախ, զոր սկիզբը յիշեցինք արդէն, եւ որ վէպը կը համարէր զբոսուորի դեղարուեստական պահ, ինծի կը թուի թէ պէտք է լրացնել եւ խորացնել ըստածը:

վէպին դոյութեան նախապատճառին առնչութեամբ:

Արդ, վէպին դոյութեան առաջին եւ թերեւս նախապատճառներէն ամէնէն չիմնականը ըստ իս, պէտք է փնտռել գրական միւս սեռերուն նախ չափէն աւելի սեղմ, եւ երկրորդ՝ անոնց զօռութեամբ նկարագրին մէջ: Բանաստեղծութիւն, թատերական երկ, կամ որոշ չափով ուրիշ որեւէ գրական սեռի ստեղծագործութիւն՝ կեանքի նեղ շրջանակի մը մէջ կը կատարուի, ունի սահմանափակ ժամանակ եւ միջավայր, մէկ խօսքով՝ կերպարային պահանջ եւ վիճակներու գեղարուեստական փոխանցում է ընթերցողին կամ հանդիսատեսին: Ընթերցող կամ հանդիսատես որոնք մարդ են եւ լման կեանքի մը ներկայացուցիչ՝ բուարարուած հոգիով մը չէ որ կ'աւարտեն քերթուածը, հեքիաթը, թատերական երկը կամ երգիծանքը: Ձեն կշտացած: Ու բաւական մշակուած հոգի մը չունին այդ բոլոր ընթերցողներն ու հանդիսատեսները ըստածէն անդին, դէպի չըսուած բաներ, չնկարագրուած տեղեր երթալու: Մեծամասնութիւն են, ժողովուրդի հասարակ կամ միջին խաւին այդ ընթերցողները ընդհանրապէս, եւ կը փափաքին որ արուեստը բանաստեղծական չըրարձրացնէ ամէն կողմէ իրենց չգահացած հետաքրքրութիւնը մութը ձգող, այդպէս պայն կիսող: Թատերգութեան պիտի ուզէին հաւանաբար յաւելեալ բացատրութիւն, յաւելեալ վիճակ, յաւելեալ հանդոյց: Փերթուածէն՝ պիտի ուզէին թերեւս իրականութեան աւելի հաստատ զետիւն մը, տիրութեան կամ զմայլանքներու եւ հետանքի ետին սիրուած պատմութիւն մը, դէպք, դէմք, շարժում: Բուն պատմութիւնը շատ չոր է, տաղտկալիօրէն ճշգրիտ, տաղտկալիօրէն՝ գեղած վերջացած բան մը: Միւս կողմէ, հեքիաթն ու առասպելը՝ յուսահատականօրէն անհաւատալի են, անիրական, չեղած ու չըլլալիք: ...Կար ու չկար: Գնա մէջէն ե'լ հիմա: Հարկ է միջին մը, կենսական է այդ միջինը, միւս սեռերով բարեխառնուած եւ

հետաքրքրութիւնն ու հիացումը կշտացնող գործ մը – վէպը:

Հրաշալիքով լեցուն հեքիաթին եւ գիշարաներգութեան եւ ազգերու չոր պատմութեան կողքին, քովը քերթուածին ամփոփ ժայներուն եւ թատերական երկի դժուար ընթերցումին՝ գրականութիւնը հարկադրուած եղաւ այս բոլոր որոշ չափով եւ ի պահանջել հարկին օգտակործող վէպին ծնունդ տալու: Մարդուն անհամար դարեր ամբողջ կենսափորձի ենթարկուած հոգին ուղած է տալու իրականութեան գիրքը. բայց զնոյն կողմէն ըսուածը, ճարտարօրէն դրուելու, կապակցուածն ու կառուցուածը: Եւ ոչ թէ գերբնականին՝ այլ կեանքին տուած լուծումով: Տրամաբանութիւնը չվիրաւորելու պայմանով մը: Արուեստի պատկերացման այս հիման վրայ է ահա, որ վէպը կը ձգտի շարունակ տալ հոգիներու մէջ մթերուած կեանքին իրականութիւնը, գեղարուեստական խօսքի եւ կառուցման առաւելագոյն օգտագործումով մը – լեզուով, ունով, ընդհանուր ճարտարապետութեամբ: Տիպարներու կերտումով, կացութիւններու ստեղծումով ու դասաւորութեամբ, գործողութեան, շարժումի եւ նկարագրութեան բարեյալող անտեսութեամբ մը: Այս բոլորէն կազմուող մարդկային մթնոլորտով:

Մարդուն կեանքը, երբ գիտակցութեան առաջին պահ է ան, իր խոր էութեան մէջ թատերաբանաստեղծական է միշտ, – զմայլանք, զարմանք, տիրութիւն եւ ներքին հարցադրում, հոգեկան բարդ տիպով: Երջանապէս հետ շփուելով եւ կեանքի սեփական ուղի մը բանալու ընթացքին, պահերու, ներքոր ազդարումի եւ կենսափորձի ընդլայնումով՝ կը դառնայ պատմութիւն, որ ընդգրկած է ու կը պահէ թատերական ու բանաստեղծական տարրերը: Կը դառնայ վէպ:

Վէպը ամէնէն հարուստն է նաեւ իր տեսականութեամբ, որոնք ի հարկէ կը փոխեն անոր նկարագրային դիմերը. կայ պատմական վէպը, կայ հովուերգականը, դաստիարակչականը, երգիծականը, բար-

քերու վէպը, հոգեբանականը, ընկերա-
յինը, արկածախնդրականը, ոստիկանա-
կանը, լրտեսականը, կեղծ-գիտականը,
եւն., եւն., եւն.:

Ամէն նիւթ մարտնչու անոր ներքին
հարուստ կարելիութիւններուն առջև կե-
ցած, զբաղանք քննադատութիւնը, իր ա-
մէնէն հեղինակաւոր ներկայացուցիչնե-
րուն բերնով իսկ կը զփուարանայ վճռա-
կանօրէն սահմանելու վէպը:

Այսուհանդերձ, վէպի նկարագրային
գիծերու մասին, անոնց յաճախ կրկնածն
ու կրկնել ուղածը, երբ փորձենք պարզ
նախադասութիւններու մէջ ամփոփել,
կ'ունենանք հետեւեալը, զէթ մինչեւ Բ.
համալսարանային պատերազմին սկիզբը:

Վէպը պարտի տալ:

1. Պատմութիւնը (ամբողջական կամ
հատուածական չափով մը) անհատի մը
կամ անհատներու, ասոնց հոգիին ու նը-
կարագրին էական գիծերուն վերահանու-
մովը ջանալով պահողն տիպարային կեր-
պարներ դարձնել:

2. Վէպին մէջ տուած պէտք է ըլլայ
(զգացական, իմացական եւ կամ երկուքն
ալ միասին), բայտում, օտոմէ:

3. Էմփրիկը եւ կացութիւնները ան-
հրաժեշտ են:

4. Պիտի տայ միջավայր, որոշ չա-
փով բարձր, ընդհանուրին վրայ տարած-
ուող բնականութիւն եւ մթնոլորտ:

5. Վիպագիրը պարտաւոր է ունենալ
իր ժամանակին եւ լայն չափով մըն ալ
անցեալ ժամանակին եթէ ո'չ միշտ յըս-
տակ գիտակցութիւնը, այլ զոնէ բնագ-
ղը:

6. Ու լաւ կ'ըլլայ, եթէ վէպ գրող
հեղինակը որոշ չափով անսխալօքսիք
միտք մը ըլլայ եւ զգայնութիւններով
հարուստ մէկը: Առանց երբեք հարազա-
տութեան զէմ մեղանչելու, պէտք է կեր-
պը դասէ շահագրգռութիւն ստեղծելու՝
իր լիզուով, ճեղով, տիպարներով, էմփ-
րիկներով ու կացութիւններով: Արար-
ներով, տիպարով ու շարժումով: Բըս-

նապրօսիկ եւ անհամարանման պէտք չէ
ըլլայ վէպը, այլ կարծես բնականօրէն,
մակառարակամօրէն տնդ մը հառած
գործ մը: Այսինքն, կեանք մը կամ կեան-
քեր՝ որոնք իրենց տուեալներով ուրիշ
տեղ չէին կրնար յանդիլ, եթէ ոչ հոն,
ուր վէպը ուղած է որ յանգին:

Վէպի բնոյթին եւ նկարագրային
հիմնական գիծերու բացայայտումը ա-
ւելի պարզ դարձնելու համար, կը մաա-
ծէի ապլ վէպի բնաշրջման քանի մը զըլ-
խաւոր հանգրուանները, հեղինակներու
եւ իրենց դործերուն առանձին յիշատա-
կումներով, բայց տեսնելով որ ատկա
դիւ հնունները կրնայ տանիլ, պիտի գո-
հանամ այս եղածով, ըսելէ հոգ սակայն,
որ մեր հոգիի ներկայ պահանջներուն
պատասխանելով, այսօրուան վէպը կը
ձգար նուազագոյնի իջեցնել նկարագրու-
թիւնը, խորհրդածութիւնը, հոգեբանա-
կան վերլուծումը, ուժ առնով կարճ այլ
հեռանկար բացող տիպարներուն: Շատ
չըրիկ ուղղակի, այլ թելադրական ընել
վէպը: Արթնցնել ընթերցողին հոգին
եւ... մեկնիլ:

ԵՂ. ՊՕՅԱՃԵԱՆ

ԿԱՐԾԻՔՆԵՐ ՎԷՊԻ ՄԱՍԻՆ

1. Պալլաքի մասին ուսումնասիրու-
թեան մը մէջ, Ալֆրեդ Տոտէ հպարտու-
թեամբ կը մատնանչէր 1876-ին, թէ -
վէպը գրական մեծ ձեւն է ժամանակա-
շրջանի մը, երբ մտքերը փառք բաց եմ
վերացականութիւններու եւ ընդհանուր
գաղափարներու առջեւ: Եւ վէպն է որ
տեղը կը բռնէ 17-րդ եւ 18-րդ դարերում
գրուած մտածումներուն, ճամկներուն,
փորձերուն եւն:

2. Մարգարային «կատակերգութեան»
իր նախաբանին մէջ, 1842-ին, Պալլաք
կը յայտնէ որ վէպը - ծրագրի մը ան-
սահմանութիւնն է, որ միաժամանակ
կ'ընդգրկէ ընկերութեան պատմութիւնն

ու ֆենադատութիւնը, վերլուծումը հոն եղած գէշութեանց եւ վէճ՝ անոնց սկըգրումներուն մասին:

3.- Բնապաշտներն ու իրապաշտները չեն ընդունիր թէ իրենց գուարնացնողներ են: Կոնֆուցիւսը կ'ըսեն այս առթիւ, - *պատմարանները անցեալը կը պատմեն, վիպագիրները՝ ներկան:*

4.- *Սէն Բէալ*. - Վէպ մը հայելի մըն է, որ կը պտըտցնեն ճամբու մը երկայնքին:

5.- *Ալտուզ Հըքսլէյ իր Contro-point-ին մէջ*, - «Բուն վիպագիրները մտածումը վէպ չեն գրեր, այլ անձնաւորութիւններ կը ստեղծեն»:

6.- *Պոպէզ՝ Հիւկոյի մասին, եկատի ունենալով անոր վէպը*՝ - համեմար մը անոնց սահմանի»:

7.- *Րոհէ Լալու*. - «Արդի վէպը արժանացած է կոչուելու սահման չունեցող սեռ մը, որուն յաւակնութիւնը ամբողջ շրջանի մը հայելին ըլլալն է»:

8.- Նորէն Բ. Լալու վէպին պայմանը կը նկատէ անոր «հաւատալի» ըլլալը:

9.- *Plaisir et les jours-ին մէջ Մարէլ Փրուսթ*. - Հիւանդացայ և մեացի կարծես տապանի մը մէջ. այն ատեն հասկցայ, որ Նոյ Նահապետ, Էրբէք աւելի լաւ չէր տեսած աշխարհը քան իր տապանին մէջէն, հակառակ որ տապանը ցոյց էր ամեն կողմէ եւ աշխարհը կը գտնուէր խաւարի մէջ:

Ալլուր Նորէն Փրուսթն է. - Հոգեբանական պատկերացումը հաւաքածոյ մըն ենք մենք, գիտակցութեան կղզիակներ՝ մո-

ռացումն ովկիանոսի մը մէջ. *այդ է որ պիտի տայ ըսել կ'ուզէ վէպը*:

10.- Ժ. Տիւհամել կ'ուզէ որ վէպը տեսակ մը անհատին մեղացրութեան ճրգտի. որովհետեւ անհատն է *գերագոյն արժէքը*, ըստ Տիւհամելի. անհատն է որ պէտք է տեսնենք թէ ինչզինք կ'իրագործէ անոր մէջ, յարեկամութեան, սրբութեան եւ իր նմաններուն հետ յարաբերութեան մէջ՝ «ամձնական յեղափոխութիւնով մը» (*«Երկու մարդիկ», «Մայա-վէնի օրագիրը» Քլիւպ տէ Լիոնէ Էն.*):

11.- Ժիտ կ'ուզէ որ վէպը ոչինչ ապացուցանէ, այլ նկարագրէ միշտ աւելի լուսաւոր ձեւով մը:

12.- Վէպը ըստ René Tavernier-ի արտայայտութիւնն է մարդուն համաձայնութեան ինքնին հետ, աշխարհին հետ. համաձայնութիւն մը զոր կ'հաճէ միշտ յստիքոյ առարկայ կը դարձնէ: Ուրեմն *շարժումն* է անա որ վէպը կը գտնէ իր անստեղծութենէն:

13.- Լիթրէին համար՝ *վէպը իրականութեան յաւիտենական փոփոխութիւնն է. իրականութիւնն որ զոնգան ձեւեր կ'առնէ, նայած ժամանակին, ընկերութեան կամ ոգիին որ զայն կը զբոսնէ*:

14.- Ալպէս Թիլլոտէ, որ նոր Սէնթ-պէտլ մը համարութեամբ իր օրերուն, կ'ըսէ. - «Վաւերական վիպագիրը այն է որ կը ստեղծէ իր անձերը իր կարելի կեանքին անհուն ուղղութիւններուն վրայ: Կ'ուսելցնէ աղաւ. - «Վէպը կ'ապրեցնէ *կարեւոր* եւ ոչ թէ կը վերապրեցնէ *իրականը*»:

Լ. ՄԿՐՏՁԵԱՆ

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԲԱԿՈՒՆՑԻ ՄԱՍԻՆ

Մենք արդէն իր ժամանակին յիշեցինք, որ Բակունցի մուտքը խորհրդահայ գրականութեան մէջ՝ գրաւեց գրական հասարակայնութեան ուշադրութիւնը։ Անշուշտ, տարբերութիւն ենք պնդում գրական հասարակայնութեան և իշխանութեան մարմինների ու նրանց կամակատար գրական ակադեմիաների միջեւ։ Առաջինները համակրանքով վերաբերուեցին Բակունցի երեւալուն, զնահատական խօսքով քաջալերեցին նրա արուեստի ծաղկումը, իսկ երկրորդները աշխատում էին «սոյ պրոլետարական», «ազգային» պիտակներով նսեմացնել Բակունցի արուեստի արժէքն ու նշանակութիւնը։ Բայց հետագայում իշխանութեան մարմինները եւս ջանացին իրենց կողմը քաշել Բակունցին եւ նրա անուրանալի տաղանդը ի նպաստ իրենց հունաւորել։ Եթէ Բակունցի վախճանը ողբերգական եղաւ, նոյնքան ողբերգական եղաւ նաեւ խորհրդային իշխանութիւնը հիմնադրած՝ համոզուած կոմունիստ ղեկավարների վախճանը, որոնք ժողովրդի հետ աշխատելով՝ աստիճանաբար սկսում էին ժողովրդականանալ։

Ասկայն մէկ քան ուշագրաւ է։ Սկզբից մինչեւ հիմա Բակունցի գրականութեան մասին արտոյայտուող մասնագէտ գրականագէտները ընդհանուր առմամբ նոյն տեսանկիւնով են մօտեցել Բակունցի գործին։ Եթէ չհաշուենք 1936-38 թթ. ականների քարոզչական հայտյանը ու անհասարակչի առամագրութիւնները, — Բակունցի մասին միշտ էլ, նոյնիսկ քննադատական լինելու դէպքում, գրական խօսք է ասուել։ Իրա պատճառն այն է, որ Բակունցը իր ստեղծագործութեամբ ամբողջական եւ յստակ դէմք է։ Նրա ստեղծագործութիւնը աճել, ընդարձակուել, զարգացել է, բայց երբեք ինքն իրեն չի հակասել։ Բակունցին յստակ չեն դարձրարժումները եւ մաքսանենգային հնարքները։ Նրա սոցիալական եւ ազգային սկունքները պարզ են, իսկ արուեստը՝ բիրեղեայ։

Բակունցի մասին հանգամանալից ուսումնասիրութիւն գրել է գրականագէտ Խորէն Սարգսեանը ղեռնաւ «ՆՈՐԻ» հանդէսի 1938 թուի գրքում։ Այնտեղ առաջ քաշուած զնահատական գրոյթները այնուհետեւ առհասարակ պատահում են

այլ առիթներով գրուած յօդուածներում : Այսպէս, 1929 թուին, Մոսկուայում տպուած «Գրական Հանրագիտարան»-ը գրում է Բակունցի մասին .-

«Հայաստանի արդի երիտասարդ արձակագիր, Ձանգեգուրի յետամնաց եւ կիրճներում կորած հայ գիւղացիների կեանքից վերցուած բազմաթիւ գեղարուեստական երկերի հեղինակ : Բակունցը յաջողութեամբ նկարագրում է աշխարհից կտրուած զանգեգուրեան գիւղերի կենցաղին ու նախնական աշխատանքը : Նախապետական կենցաղի շարքերով կազմուած աւանդութիւնները դանդաղ, բայց աստիճանաբար քայքայուում են : Յետաւընաց գիւղը իր միջից առաջ է քաշում խորհրդային իշխանութեան համար մարտնչողներին եւ խորհրդային շինարարութեան գիւղացիական ակտիւին : Բակունցը գրել է մաքուր «Յավմաք»-ում Մարշալ Երզնկայի վիպակը» :

1932 թուի վերջում խորհրդահայ անուանի գրաքննադատ Յարութիւն Սուրխաթեանը յաջորդաբար ներկայացնելով յատկանշիչներէն հայ գրողներին, այսպէս է բնորոշում Բակունցի գիծագիծը .-

«Ակսել Բակունցը, - խորհրդային Հայաստանի լաւագոյն արձակագիրը, որի տաղանդը թէպէտ ընդունակ է տալ ծաւալուն գործեր, սակայն վերջին երկու-երեք տարում ոչ մի խոշոր բան չի արտագրել : Թէ երբ է սկսել գրել Բակունցը, մեզ յայտնի չէ, բայց խորհրդային իշխանութեան օրով սպուած արտադրամէր կարելի է բաժանել երկու մասի :

Առաջին տարիներում գրած պատմւածքների մի մասի վրայ չկայ դասական գայիմի պայքարի կմիւք, հեղինակը չունի դասակարգային մօտեցում երեւոյթներին ու մարդկանց : Բակունցի այդ պատմւածքներում գիւղը երբ ունի մի օրինակ, որի դէմ նա պարտաւոր է պայքարել, դա իր շրջապատի այն խոժոռ բնութեան տարերքն է, որը ստրկական հնազանդութեան մէջ է պահում անպաշտպան ու յետադիմ մարդուն : Այդտեղ սոցիալական ազատագրման խնդիր

չէ դնում հեղինակը, սոցիալական ազատագրումը նախապայման չէ համարում բնութեան նման տարերքից աւելի արագ ազատագրելու համար : «Մթնանոթ»ի այդ մասը, սակայն, ապարդիւմ գործ չէ : Միջնադարեան մնացորդներով սպարող գիւղի նկարագիրը, արուեստի ու ժողովրդական տաղանդի իրականութեանը, ստիպում է մեզ բաշխիկեան տեմպով վերափոխել հին գիւղի քաղաքացիական կենցաղը, ցամաքեցնել աշխատութեան յետադիմութեան անիծեալ աղբիւրը :

«Մթնանոթ»ի միւս կարգի գործերը կազմում են դասակարգային վերլուծութեան արգասիք : Այստեղ Բակունցը գիտակցում է իր պրոլետարական գործիչները : Պատմւածքների մի ամբողջ շարք անդրադարձնում է գիւղը շարունակաբար շինարարման, պայքարի եւ խորհրդային շինարարութեան լոյսերի տակ» :

Այս ոգով էին դնահատուած Բակունցի երկերը մինչեւ 1936 թուի աշունը : Նոյնիսկ Հայկումկուսի Կենտկոմի քարտուղար Ալասի Կանչեանը, որ հմուտ էր մշակութային հարցերում, ամէն առիթով քննադատելով Բակունցի ստեղծագործութեան ազգային-գաղափարական «թերութիւնները», միշտ էլ մի առանձնապատուկ չէր ունենում նրա արուեստը : Սակայն Կանչեանի խորհրդաւոր սպանութիւնից յետոյ խորհրդահայ հասարակական միջոցաւոր քառսի վերածուեց՝ յանդէլով 1937-38 թուականների զանգուածային բռնութիւններին : Այդ ժամանակ եւս շատ բան ասուեց ու գրուեց Բակունցի եւ ճշմարիտ ընդհանրիկ հեղինակուած միւս մտաւորականների ու գրողների մասին : Բայց դրանք գրականագիտութեան հետ որեւէ առնչութիւն չունէին, այդ տարիներին յատուկ լուսանքներ էին, որոնք արտասոյսաբար էին պատահական, քիսաբարձիւր մարդկանց կամ ոստիկանութեան զբաղումների կողմից : Ուստի հարկաւոր չենք համարում կանգ առնել այդ շրջանի վրայ :

Անցյալ դրեթէ քսան ասարի: Բոլոր ժողովածուներից ու դասագրքերից վերացաւ Բակունցի անունը: Նոյնիսկ խորհրդահայ գրականութեան պատմութեան նուիրուած գրականագիտական հասկաւածքիւ ուսումնասիրութիւններում շրջանցւում էր Բակունցի եւ նրա բախտակիցները երբեմնի գոյութիւնը: Ստեղծուեց արտաոտց վիճակ, երբ գրականութեան պատմութիւն էր հրամցւում՝ առանց իր մէջ ընդգրկելու այդ պատմութիւնը կերտող սիւներին, թէկուզ եւ, ասենք, բացասական մեկնաբանութեամբ: Ձարաբաստիկ Ստալինի մահից յետոյ գրականագիտութիւնը եւս աստիճանաբար սկսեց կենդանութեան նշաններ ցոյց տալ: Վարկաբիկման հոսանքը արդէն հանեց նաեւ Բակունցի «մոռացուած» անունը: Նրա երկերի հայերէն եւ ռուսերէն հրատարակութեան կապակցութեամբ՝ մամուլի մէջ իրար յաջորդեցին զանազան գրականագիտական յօդուածներ ու հոյթներ, որոնք իրենց հիմնական գծերով պաշտպանում են այն գրողները Բակունցի մասին, որոնք հրապարակի վերայ էին 30-ական թուականներին: Դեռ անկրկն: Այժմ աւելացան նահատակ գրողի հասցէին ուղղուած աննշանքի, սիրոյ արատայայտութիւններն ու նրա երկերի աւելի խորը վերլուծումը: Նոյնիսկ նրանք, ովքեր 1937 թուին անձամբ յարձակումներ էին գործել Բակունցի եւ նրա բախտակիցների դէմ, այժմ բոլորովին հակառակ դիրք բռնեցին: Այդպիսիներից, օրինակ, ռուս գրաքննադատ Վալերի Կիրպուտինը «Դրական Թերթ»-ի 1937 թուի Ապրիլի 23-ի համարում գրում էր. —

«Սիւննանք, Բակունցը, Ալազանը եւ ուրիշներ՝ գրականութեան մէջ գործել են որպէս վնասարարներ, որպէս հակա-յեղափոխականներ, որպէս տրեցիկներ եւ դաշնակներ, որպէս միջազգային կապիտալի գործակալներ, — որպէսզի հայ ժողովրդին շեղէին երջանիկ կեանքի ուղուց եւ վերադարձնէին անցեալում նրա ապրած բարւոյն արտաքիններին: Հետագայում, Ձարեմն ընկնում է հակայեղափոխական նացիոնալիստների ազդեցու-

թեան տակ: Մեմֆ անձնագրէն գիտենք նրա «բարեկամներին», որոնք ազդում էին նրա վրայ: Դրանք էին Բակունցը, Խանջեանը եւ ուրիշներ: Նա ստեղծում է մի գիրք՝ «Գիրք Ճանապարհի», որ ամբողջապէս գրուած է որպէս հայ գրականութեան «ազգային յատկանիշների խթանում» թէորիայի իլիւստրացիա:

Այդ նոյն տողերի հեղինակը 1956 թուի Մայիսի 29-ին Մոսկուայի «ԼԻՏԵՐԱՏՈՒՐՆԱՅԱ ԳԱՋԵՏԱ» թերթում՝ Հայկական արուեստի ու գրականութեան տասնօրեակի նախօրէին եւ Բակունցի «Պատմութեան» հոսանքին հրատարակման խնդրի մասին՝ «Սէրը հասարակ մարդկանց նկատմամբ» խորագրով յօդուածում գրում էր հետեւեալը. —

«Ակսել Բակունցը անիրաւացիօրէն քիչ է յայտնի համամիութենական ընթերցողին: Անիրաւացիօրէն, որովհետեւ իր կարեանքի կեանքի ընթացքում Բակունցը ստեղծել է հիմնադր իրեր, որոնք պատկանում են արդի խորհրդային արական լայնագոյն գեղարուեստական շրջանին: ...Նա ամսադրեր եւ վեպերի տարեգրող չէ, որը իր հերթին վրայ մաշում է վերից վար, զարբեր ռապակի միջով: Երբ մա գրում է, նրա սիրտը այրում է: Բակունցը չի կարող եւ չի ուզում քաջանել ոչ իր սէրն ու վիշտը, ոչ իր արեւմտեանքն ու զայրոյթը, ոչ էլ իր յայտերը: ...Բակունցը բնաւ տխուր գրող չէ: Նրա էջերը լի են լուսաւոր խնդութեամբ, արավիտեւ անբարեկամ արտաքինի տակ մա գրում է ժողովրդական հոգու մակին, արավիտեւ ամենաազգայն կենցաղի մէջ մա կարգաւորում է գտնել բանաստեղծութիւն, պատանկան սիրոյ հրապոյրը, մօր անձնագրի մուրաւանքիւնը, արավիտեւ ամենալիւն մա տեսնում է բնութեան գաղտնալիւնը: Բարեկամ, մարդուն ուրախացնող գեղեցկութիւնը: Հայաստանի պատմութիւնը եղել է արիւնտ եւ դաժան, բայց հայ աշխատաւորի մօտ երբեք չի կարել յամառ ու դիմացկուն, դրական կենսասիրութիւնը: Իշխանաւորները եւ քաղա-

հազվեցան, որոնց համար իրենց խաղի մեջ ժողովուրդները միայն մանրամասն դրամա էին, հայերին ջարդել և արտաքին ևն հազար-հազարներով, բայց աշխատասեր գիւղացիները վերստին հերկել են հողը, ոռոգել են զաշտերը, ճրանց տանջել են ստեղծագործի ու կենսասերների վսեմ կրքերը՝ պահպանել նրա խոհանրակամ, սովորական ծառեր, որպեսզի այգիները մարից իրենց կենսաբար ստուներով հովանի դառնան ապագային: ...Բակուցը քնարական է, նրա պատկերները խոստում են, որպես առուակներ, ոչ բարձրաձայն, բայց բիրեղի պես մաքուր և տիրակալ: Բայց նրա բանավոր բնույթի պաշտպան չէ: Բակուցը հիմնադրվել է տիրում է հեղձման վարպետությանը, իսկ հեղձման արտեսար շատ դժուար արտեսար է: Ցանուն հեղձման հեղձմանը դիրքերում դառնում է էտանգի ծանակում կամ ենթակայական քերականություն, որը ամեն ինչ ծաղրի է ենթարկում և ռաբբիի տակ չունի կայուն յեմարան: Բակուցի հեղձմանը կատարվում է նրա աշխարհայեացքով: Նա դասակարգային հակամարտությունների մեջ, որում էլ իրադատական ձևով ներառվում արտայայտվում լինեն, տեսնում է զարգացման շարժիչ ուժը, նա համոզված է, որ սոցիալիզմը կը նորոգի և իր հայրենիքը, և ամբողջ աշխարհը՝ սոցիալական, հաղափանապես և բարոյապես: ...Բակուցը սիրում և հասկանում է երեխաներին: Գրքում չկայ ոչ մի պատմություն, որտեղ նա մի ինչ որ զարմանալի, մաքրաբարոյ քննադատական կանգնած չառնի մանկական ապրումների և մանկական ճակատագրի վրայ: ...Հասարակ մարդիկ, հաղափ ու գիւղի աշխատավորները, ժողովրդական զանգուշանքը երաշխադրում են արդարությանը, որը միացնում է Բակուցի ամբողջ ժողովածուն: ...Բակուցի գիրքը շնչում է միևնույն շնչով, որը շարժում էր ծերունի Ասգին (Քրուստի տղան՝ պատմաբան), երբ նա բարիք էր ցանկանում անյայտ ազդիներին ու պա-

տանիներին, ծերերին ու փոքրերին, աշխարհի բոլոր ազնիւ աշխատանք մարդկանց:

Ահա թէ ինչքան տարբեր ձևով է արտայայտվում միևնույն ողու գրականագետը Բակուցի մասին 1937 և 1956 թուրքին: Բայց մենք համոզված ենք, որ 1956 թուրքի գրքումը այդ գրականագետի, թեև ոչ լրիւ, անկեղծ կարծիքն է:

Դրանից շատ առաջ խոստովանում է Բակուցը, որ արտայայտվում է միևնույն ողու գրականագետ՝ Կորնելի Զելինսկին: Դրանից Բակուցի հերքի ողուներն հրատարակման առթիւ, 1956 թուրք, Զելինսկին գրում էր:—

«Կան երկեր, որոնց ծանոթանալիս դուք կարծես աստիճանաբար խորանուզում էք ոչ միայն նրանց հերոսների հոգեկան աշխարհը, այլև ձեր ստեղծագործությունում է այն մարդկային հոգին, որտեղ ծնունդ են առել այդ հերոսները, այդ սիւժեերը, այդ քննադատական և վերջապես այդ, չգիտես, հիպոթեզներ, գաղափարներ, սարկազմի, թե քննադատի խոսքերը: Իսկ այդ հոգու յետևելը, կարծես թե նրա միջոցով, մեր առաջ բացառություն է և միևնույն այդ մեզ անյայտ այն աշխարհը իր լեռներով ու գետերով, հաղափներով ու մարդկանցով, որը արտեսարագետի հոգու մեջ ցուցաբերել է իր ցկեղանակալ ամենազայտուն պատկերը, և հեղինակին էլ դարձրել է արտեսարագետ: Այսպիսի զգացմունք են թաղում մեր մեջ Բակուցի նավերները: Սակայն դա չի նշանակում, թե դրանք ինքնակենսագրական են կամ յոխտ սուրբիտի: Իրենց ռոմանտիկ տրամադրություններով: Ակնհի Բակուցի գեղարտեստական արժանիքն ախնայելի է յուրական իր աշխատական արժանախառություններ, իրականությունը հաւատարիմ լինելով, իր մեղքերի ու երանգների ներքին: Բայց այդ արժանի մեջ անտեսանելիորեն, կարծես տողերի արանքում, ներկայ է և հեղինակը, և նրա հետ, որպես իր գրքի ամենամշակա-

կալից հերոսներից մէկի հետ, համդիպելը անջինջ տալուորութիւն է թողնում մեր մէջ: Եւ երբեք չեմ հանդիպել Բակունցին, քէնու մա եղել է Մոսկուայում ու իմ հասակակիցն էր: Եւ ծանօթացայ մրան միայն հիմա, մրա երկերի միջոցով, որոնց էջերից յառնում է մի ցայտում, իմենատիպ տաղանդ, որը մեր մէջ յարուցում է մրա հետ շփուելու եւ մրա մասին մի որեւէ աւելի, մոր քան իմանալու անյագ ցանկութիւն: ...Հայ գրականութեան այս ազգային տրայիցիան՝ «սիրելի դառնութեան միջով», «համարում եւ խարազանել», «ատել սիրելի» եւ «սիրելի ատելով», ինձ՝ ամենից առաջ ռուս գրականութեան տրայիցիաներով դաստիարակուած մարդուս համար, խիստ համահնչիւն է Գոգոլի հետ: Քիմ դառն ծիծաղով կը ծիծաղենք, — ռուս գրողի տալանաբարի վրայ փորագրուած այս խօսքը կարող էին ընդունել ուրիշ շատ հայ հեղինակների այս ու այն կողմ սփռուած եւ յանալ էլ կորած տալանաբարերը: ...Եւ այն մարդիկ, որոնք դեռեւս մանկութիւնից ապշեցրել էին մրա երեւակայութիւնը եւ որոնց սիրել էր մա հայրենասէրի այն անյագ սիրով, որը երբեք չի կարող կշտանալ հայրենիքի հանդէպ տածած սիրով եւ մրա գիտակցութեան մէջ միաձուլուած է աւելի, լեռների, կիրճերի եւ ամենից աւելի հայրենի վայրերի թանկիչների հետ, ահա այդ մարդիկ՝ երկրագործներ, այգեգործներ, որսորդներ, հովիւներ, գանազան մօրաքոյրեր ու երեխաներ, բերրուտներ ու կօշկակարներ, հողի հասարակ մարդիկ մուտ գործեցին Ակսել Բակունցի գործերի մէջ որպէս մրա քարեկամներն ու հերոսները: Բակունցը արուեստագէտ էր եւ ամենից առաջ արուեստագէտ: ...Մենք յառաջ եմք փրմտում այն քանի մոռնող, ինչ կարելի է անուանել ազգային իւրայատկութիւն: Իմ պատկերացմամբ Բակունցը կատարելապէս ազգային գրող է եւ այդ ազգային իւրայատկութիւնը մանաշելու համար աւելի քան է տալիս, քան բազմաթիւ գիտական «տրակտատներ»: ...Բա-

կունցն այն արուեստագէտն էր, որի մէջ թրթռում էր իրականութեան բազմաթիւութեան վառ գագաղութիւնը: Նա չափազանց դիւրնկալ ու բազմապիսի արուեստագէտ էր: Նրա երգիծական էջերը («Կէօքես») յիշատակ անմահն էջեր են: Նրա գաւառական ակնարկները իրենց խայրող սրութեամբ Շչեդրինին են յիշեցնում: Միաժամանակ Բակունցը խիստ քննող, գզալուս գրող է: Եւ կ'ասէի, որ այն լիրիկական մուրը գզալումէք, որ Բակունցի մէջ դրսեւորում է մարդկանց հանդէպ տածած այնքան բնական ու ինքնուրույն սիրով, առանձնակի սրութիւն է տալիս մրա գեղարուեստական գեղեցիկութիւն: «Միւրհաւ» նովելը եւ առանց երկմարտելու կը դասէի Մոսկուայի մամուլական պատմութեան քննարկ շարքը:

Մենք այս ընդարձակ քաղաքական-քննարկ մէջընդմիջ ռուս գրականագէտների յօդուածներից, որովհետեւ զբաղւած վրկայում են, որ Բակունցի ինքնատիպ նուրը արուեստով գրուած երկերը նոյնիսկ թարգմանութեան բովից անցնելով՝ պահում են իրենց թափանցիկ մատչելիութիւնը եւ հրապուրը: Երբ այդպէս գովասանքով են արտայայտուած օտար գրաբանները, ապա հասկանալի կը դառնայ, թէ ինչու խորհրդահայ գրականագէտներից նրանք, ովքեր գրադուած են Բակունցի երկերի վերլուծմամբ, երբեք չեն հեռանում աւանդական գրական կարծիքից՝ Բակունցի վերաբերեալ: Նրանք, որ Բակունցով հետեւողականօրէն գրադուած են համեմատաբար սակաւաթիւ գրականագէտներ, մանաւանդ նրաբանք, ովքեր ունեն նուրը վերլուծութեան փորձ եւ հարուստ զգայական տարերք: Եթէ, օրինակ, Չարենցի մասին շատերն են գրել եւ բաւականացել զանազան ընթացիկ պիտակների գործածութեամբ, առանց խորանալու, ապա ամէն մի յօդուածագիր նոյն թեթեւութեամբ չի կարող մօտենալ Բակունցին: Նրա գործը վերծանելու համար հարկաւոր է բնագրի մարդկութեամբ եւ խորութեամբ: Այդ է պատճառը, որ 1956 թը-

«Ի խանդավառ օրերից այս կողմ խորհրդահայ մամուլում քիչ են երևում Բակունցին վերաբերող նիւթեր: Բայց 1956 թուին արտայայտուած մտքերը իրենց մէջ խտացնում են այն լաւագոյնը, ինչ որ ներկայումս խորհրդահայ գրականագէտը առհասարակ կարող է ասել Բակունցի ստեղծագործութեան մասին: Խորհրդահայ գրականագէտներից Ռուբէն Զարեանը Բակունցի գրականութեան մասին գրում էր.—

«Բակունցի պատմութեամբներում եւ ակնարկներում ցույց այն միտքը, թէ հայ ժողովուրդը ազգային ճնշումներիմ ենթակայ, բազմաչափ ժողովուրդ է, սակայն միաժամանակ տակուն, շինարար ժողովուրդ է, դիմադրող, ստեղծագործող: Բակունցն ասում է, թէ իմքը չի կասկածում, «որ երբեւիցէ մի գրիչ կը պատմի» մեր ժողովրդի պատմութիւնը քեւ այդ գրիչը շատ կը գտնի հերոսութիւններ մեր կեանքում» («Քեռի Դաւան»): Ի՞նչ միայն չի տեսել ժողովուրդը: Մարդիկ ապրել են «միտ տնայի թանգարանի մէջ», անկողին ունենալով եւ ղեկնայ խոտի, ապրել են աղքատ, հալածուած եւ յանձն առնել կեանքն էլ շատ է համարուել նրանց համար: Փանդել եւ տունը, ինչի ալ մի ամի տարածութիւնից, ուրի վրայ հաստատուած պապերը միաժամանակ ունէին կարծելու, թէ խակապետ տեղ եւն մուսնել իրենց թռոնների համար: Բակունցն իրաւացի էր, երբ ասում էր, թէ ազգայն պատմիչը մի անգամ չէ որ զարմանալու է, «թէ ինչպէս է որ բոլոր պատմականների ընթացքում չի անհետացել» մեր ժողովուրդը: Զի անհետացել, որովհետեւ կառուցել է, չի անհետացել, որովհետեւ երբեք չի դադարել ստեղծելուց: ...Բակունցը մարդկայնութիւնը որոնել է ժողովրդի, պարզ ու հասարակ մարդկանց մէջ, եւ համարում էր, թէ չի լինէր այդ մարդկայնիւր, չէր լինի եւ ըմբոստացում, չէր բարձրանալ սպաստամբ ոգին ընդդէմ խաբիւրութեան, ստի եւ շահագործման, ընդդէմ հոգեւոր աշխատման, բռնութիւնների ու կեղեքման: Զինէր այդ

մարդկայնիւր, չէր յաղթանակի եւ այն գիտակցութիւնը, թէ կոռու միայն խաղաղութիւն կը հաստատուէր երկրի վրայ, թէ գէնգով կը բարձրացնէ մարդու կախկընտուած արժանապատուութիւնը, գոհեւր տալով միայն կը վերադարձնէ մարդուն նրանից յափշտակուած երջանկութիւնը: ...Մեծ գրականութիւնը տակաւին հեռանկար էր Բակունցի կեանքում, իրական եւ հմարաւոր մի ապագայ: Բակունցը մի հեղինակ էր, որի հետ մեծ յոյսեր էին կապուած: Բակունցը շեշտուած անհատականութիւն էր, մի կեանք, որ ապագայ խնդրութիւններով էր յագեցած: Բակունցը գործուն գրող էր, որոշակի համագումարի տէր եւ նրանց համար պայքարող»:

Ի շարք այլոց, Բակունցով ամէնից շատ զբաղուած է գրաքննադատ Սուրէն Աղաբաբեանը: Նրա հետեւողական ուսումնասիրութիւնները վկայում են, որ նա Խորհրդային Հայաստանում ամենատաքնակաբար Բակունցագէտն է եւ այդ քննադատում դեռեւս շատ սպասելիքներ կան նրանից: Բայց մենք յարմար ենք համարում մէջբերել մի քանի քաղութանքների 1956 թուին գրուած Աղաբաբեանի մի յօդուածից Բակունցի մասին.—

«Բակունցը հրապարակ եկաւ կեանքի, միջավայրի, բնութեան, մարդկային բնաւորութիւնների ճանաչողութեան հրակայական պաշարով: Նոր գրականութեան ձեւաւորման արշալոյսին՝ 20-ական կամ 30-ականների սկզբին, երբ նրա գրչակիցներից շատերը ժխտողի դիրքում անցնում էին իրենց միջավայրի տուած պատկերների կողքի եւ հայկական իրականութիւնն այնքան հետաքրքրական ու հարուստ չէին համարում, որ արժանի լինէր պատկերման, Բակունցը մագաչափ անգամ չենթարկուեց այդ թիւրիմացութեանը, չէր տուրք տուեց վստիւգալ-սոցիոլոգիական տարածուած սյուեմաներին: Դաստիարակուելով հայ դասական գրականութեան դպրոցում, նա հատկապէս էր նրա բոլոր արժանական տրադիցիաներին, այդ քաւում նաեւ նրա

հոչակած՝ ազգային կեանքն ու կուրքի-
տը, բնաշխարհի պատկերը արտացոլելու
պահանջին: Դերերիկ Դեմիրճեանի եւ
Ստեփան Զօրեանի հետ միասին նա սովե-
տահայ արձակի զարգացումը դրեց հա-
զերաճական ու ճշմարիտ արուեստի հու-
նի մէջ, մի տեսակ կամուրջ հանգիստ-
նալով մեր գրականութեան դասական
անցեալի ու նրա ներկայի միջեւ: Ոչ
միայն երկերի բովանդակութեամբ, այլ-
եւ գեղարուեստական ձեւի առումով նա
պահպանեց ազգային գոյնը, ելնելով
այն ճիշդ սկզբունքից, որ ինտերմացիո-
նալ ձեւը դառնում է ազգային, երբ ընկ-
նում է ամէն մի ժողովրդի հայրենի հո-
գի վրայ ու պատկերներ, երանգներ է
փառում նրանից: Անցան տարիներ, հա-
սունացաւ մեր գրականութիւնը իր փոք-
րով, արուեստի շատ ըմբռնումներ կորց-
րին իրենց ուժը: Եւ պատմութիւնն ա-
պացուցեց, թէ որքան առողջ էին Բա-
կունցի գեղարուեստական սկզբունքները,
որքան արդիւնաւէտ եւ որքան այժմէա-
կան են զորանք: Այսօր, երբ կրկին բն-
քերցում եւ նրա իրերը, գործնական
եւ նրա փայլուն տաղանդի շատ կողմն-
քով, բայց ամէնից առաջ՝ նրա հագեցեալ
աշխարհի մեղրաշնչական քերական
ու հա-
մագումներին այն անսասանութեամբ,
որով նա պաշտպանում էր իր բարոյա-
կան-էթերիկական գաղափարները: Եւ
այդ մեղրաշնչականութիւնը չէ՞ր տրոհ-
ւում պատճառ, որ այնքան խոր կերպով
կապուած լինելով կլասիկայի հետ՝ Բա-
կունց չղաքճաւ իր մեծ նախորդներից
որեւէ մէկի ցոյքը: Հայ գրականութեան
հարստութեան մէջ նա պահպանեց իր
անկրկնելի, բազմազան ինքնատիպու-
թիւնը, հաւասարի իրաւունքով կանգնեց
հայ գրականութեան այն մարտիկների
շարքում, որոնց ամէն մի տղայում, ա-
մէն մի դարձաւածի մէջ բարասում է
սէրը դէպի ժողովուրդը, դէպի նրա նը-
ւիրական անուրջները, նրա ապագան:
...Ակնել Բակունցը հայ գրականութեան
բազմադարեան փորձի ու տրադիցիանե-
րի արժանի ժառանգորդն էր: Նրա ար-
ուեստի ակունքները հասնում են մինչեւ

մեր պատմագիրները, ժողովրդական
բանաստեղծները, հայկական էպիկական
գրոյցները: Եւ մեր ազգային-ժողովրդա-
կան արուեստի ուղիներով Բակունցի ըս-
տեղծագործութիւնը միայնապէս տա-
ցիալիստական ռեալիզմի լայնահուն գե-
տիկ, իրրեւ նրա յաւերժ թաւր, յաւերժ
կարկաշուղ վտակներից մէկը:

*Մենք մէջբերեցինք քաղուածքներ
խորհրդային եւ խորհրդահայ գրակա-
նագիտութեան մէջ զանազան ժամանակ-
ներում արտայայտուած կարծիքներից
Բակունցի մասին: Ինչպէս տեսնում է,
ամէն անգամ շեշտում է Բակունցի ար-
ուեստի ինքնատիպութիւնը, թարմու-
թիւնը, ուժը եւ ներուժիւնը: Այդ կէ-
տում բոլորն էլ այնքան համաձայն են,
որ երբեմն կարող է թուալ, թէ մէկը
միւսից ընդօրինակել է: Սակայն Բա-
կունցի ստեղծագործութիւնն իր բնոյթով
այնպիսին է, որ նրա հետ շփուողները
անխուսափելիօրէն յատնում են միեւ-
նոյն հանելի տպաւորութիւնները, դա-
նում են միեւնոյն իրական, շօշափելի
եւ անուրանալի իրականութեան առջեւ:
Դրա համար էլ տարբեր սերունդների
գրականագէտներ, — եթէ նրանք կոչու-
մով իսկապէս գրականագէտներ են եւ ոչ
թէ անպայման կոմունիստական մշակու-
թային դատախազներ, — մէկը միւսից
անկախ միանում են իրար իրենց կար-
ծիքներով: Նկատելի է նաեւ, որ Բա-
կունցի ստեղծագործութեան գաղափա-
րական բովանդակութեան մասին եւս
արտայայտուած կարծիքներում էական
նմանութիւններ կան: Ամէն տեղ այս կամ
այն շափով շեշտում է Բակունցի ժողո-
վրդայնութիւնը, մարդկայնութիւնը,
ազգային-մշակութային առողջ աւան-
դութիւններին հաւատարիմ մնալու ըս-
կըղընները, խիզախ արարքներով մար-
դու ազատութիւնը նուանելու եւ նրա
յատուղիմութիւնը ապահովելու ձգտու-
մը: Անկախ նրանից, թէ ովքեր եւ ինչու
են այդ յատկանիշները վերագրում Բա-
կունցին, — դրանք ճշմարիտ դիտողու-
թիւններ են եւ համապատասխանում են*

իրականութեանը: Բակունցի աշխարհայեացքից բխող ստեղծագործական այդ, յատկանիշները ինքնաբաւ են եւ չեն մըշակուած Հակոբովորդական ու Հակամարդկային որեւէ դաւանանքի Համար ծածկոյթ ծառայելու նպատակով: Ուստի ոչ միայն խորհրդային դրականագիտութեան մէջ, այլեւ ազատ աշխարհի

Հայ մտաւորականների ուսումնասիրութիւններում ամէն առիթով ընդգծւում է Բակունցի ստեղծագործութեան ձեւի ու բովանդակութեան վերոյիշեալ բնոյթը:

Լ. Մ.

(Վերջը յաջորդով)

ՇԵՅՔՍԻՐԻ ՄԱՍԻՆ

Եթէ ճակատագիրը ուզէ որ օրհնեղծ մը իր աշխերուն մէջ խեղդէ մեր ամբողջ բարոյական փիլիսոփայութիւնը, մեր ուղեղը կազմաւորող պատմութիւնը եւ մարդկութեան ամբողջ դրական արտադրութիւնը... եւ ազատութիւնը միմիայն Շէյքսպիրը, պիտի համարեմ թէ մնացած է բաւական շափով փիլիսոփայութիւն, պատմութիւն, բռնատեղծութիւն. մնացած են մարդկային սրտի նշմարներ, կրքեր, նկարագրումներ: Ամէն ինչի ողնուծունն է Շէյքսպիրը:

ՀԷՐՏԸՐ

Ամէն անգամ որ Շէյքսպիր կարդացած եմ, իննի թուած է թէ ընձառիւծի մը ուղեղը էլը պատուեմ:

ԼՈԹՐԷԱՄՈՆ (1870)

Իսոքս մենք թատրոնի մասին է, այն թատրոնին որ կարելիութիւնը կու տայ գեղասանին իրականացնելու իր ամբողջովին մարմնական ճակատագիրը: Դիտեցէ՛ք Շէյքսպիրը. սկզբնական շարժումի այս թատրոնին մէջ մարմնի կատաղութիւններն են որ կը զեկամարեն պարը զէպքերուն. կը բացատրեն ամէն ինչ ու, առանց անոնց, ամէն ինչ պիտի խորտակուէր:

ԱԼԳԵՐ ՔԱՄԻԻ



ՏՈՄԱՐ ՏԱՐԱԳՐԻ

Հեղինակ՝ Ե. ՊՈՅԱՆՅԱՆ

225 էջ, տպարան Ատլաս, Պեյրուք 1963

Գին՝ 1,5 տոլար

Եղուարդ Պոյանյանի արձակ գործերուն երրորդն է Տոմար Տարագրին, առաջին երկուքը՝ Հայր եւ Թուղթ Ձաւակներու սպասած են արդէն:

Գիրքը բաժնուած է երկու մասի, առաջինը՝ առանց ընդհանուր ու անջատող վերնագրի, կը պարունակէ Սարահարթին Դաշտամուկը, Զօրեղան Գալուստը, Առաջին Գիշեր եւ Օրեր, Դար Դար Տարիներ. Երկրորդը, Սիսակ եւ Միսաք ընդհանուր վերնագրին տակ՝ Ծովերի Թամպուրանին, Լաքաքիոյ Ածիլոյ Հայը, Պատմէշ Գոսամի, Յերեկը որ Ուրախ Ձէր, Օրերը որ Գեշ էին, Պատերազմ-Նամակներ-Ներգաղթ:

Վէպ մը չէ Պոյանյանի գիրքը, ոչ իսկ պատմութեան դիրք մըն է, Եթէ առնենք պատմութեան ընթացիկ բնութեամբ, ընթերցողներու մեծամասնութեան մօտեցումը եւ սպասումը այդ սեռէն. այսինքն չկան այս տոմարին մէջ այս կամ այն ձեւի ակնարկներ գրող, երազատենչութիւններ չոյող, անմեական հեշտայի երեւակայութիւններ խթանող պատմութիւններ, դէպքեր, արկածներ, անակնկալներ. կամ հերոսական դէպքեր, վերիվայրումներ... կայ հերոսական ժողովուրդ մը, ժողովուրդի մը հերոսական կեցութեամբը՝ առօրեայի դժուարութեանց, տիրութեանց, թշուառութեան մէջ, ազնու բաներու դիմաց, տիրու բաներու դիմաց, այդ ժողովուրդին ներքին մեծութեան հետ անհաշտ եւ

դող բաներու դիմաց. կայ մարդը, Հայ մարդը, տառապող Հայը, տառապանքին մէջ նոյն ատեն մտածող, անցեալէն դէպի ապագան կամուրջ նետող Հայ մարդը:

Ի՞նչ կրնայ ըլլալ կարծիքը ընթերցողներուն, երբ կարդան Պոյանյանի Տոմար Տարագրին: Հարցումը դժուար թէ պատասխան մը գտնէ, քանի որ ամէն ինչ կախում ունի ընթերցողի ցանկացածէն, փնտռածէն, ուզածէն: Կի տը Մոփասան կ'ըսէր. «Ընթերցողներէն ամենք կ'ըսեն՝ Միսիսարէ գիս, ուրիշներ՝ գուրնացուր, տիրեցուր մեզ, գուրքս գրգռէ, երագի տուր, խնդացուր, տարտացուր, լացուր, մտածիլ տուր... ընտրանիլն պատկանող ժամի մը իմացականութիւններ են միայն որ կը պահանջեն արուեստագէտին՝ ձեռքէն քան խոսքէն: արուեստագէտը կը փորձէ, կը յաջողի, կամ կը ձախողի»:

Պոյանյան վիպագրող մը չէ, նորավիպագրող մը չէ. վիպագրող մըն է, տոմարագիր մը, իր գաւազներուն ու մարդկութեան թուղթեր գրող իրաւ գրող մը, որ ունի իր խոսքով եւ իր սփռ, իր լեզուն, արտայայտելու համար իր ճշմարտութիւնները, իրեն յատուկ մեւով մը: Երբ կը նկարագրէ Սարահարթին Դաշտամուկը ու կը գրէ՝ «Ստեղծուած էր, պիտի ապրէր: Իր վերայի մորթը կ'ազդէր ատիկա, ասկորննը կ'ազդէր՝ ատիկա: Պիտի ապրէր՝ քնդադէմ հողին վրայ ու երկնքին մէջ գտնուող բոլոր գոյութիւններուն: Բախելով անոնց հետ: Ձուգելով ընկնելի, պարտելի, մեռնելի: Պարզ դաշտամուկ՝ ամենամեծի եւ վտանգաւոր խաղը պիտի խաղար ինք եւս՝ ինչպէս ցանցը, ատիւծը, մարդը, փոքորիկը: Կեանքի վտանգաւոր խաղը... Գրագիտի ներքին վիպարութիւնն է կը բերէ Հայ ժողովուրդի դիմադրականութեան, ուժին, մաքառումներուն մասին: Իր պատմումը անգամ, երբ կը թուի ընթերցողին թէ ահա, դէպք մըն է որ կը նկարագրէ Հեղինակը, իրականին մէջ արժանազուտ մըն

է տոմարի մը մէջ, հեղինակին հողին ժայթքումներուն տոմարը: Արձանազըր-ւածը մտածում մըն է, կամ տառապանք մը, կամ զգայնութիւն մը, զգացում մը: Արձանազըրւածը խորհրդանշական է. այս զբաղին մէջ, ամբողջ գիրքը, վերնագիրը անգամ փոխարեքական են եթէ կ'ուզէք. նկարագրողը Ջորեպան Գալուստն է, ու իր տառապանքը բմբուր-ւած շրջալու, իր գաղափարական, նր-ւիրեալ մարդու հանգամանքին մէջ հաս-կացուած շրջալուն, գնահատուած շրջա-լուն. ծարաւն է՝ անոր մաքուր բաներու պապակը ունեցող հողին, ծարաւը բար-ձրը, արեւոտ տեղերու, բարձր ու պայ-ծառ տեղերու. ծարաւն է նաեւ Հայ ժո-ղովուրդին, հաժան Հայութեան, նոյն լոյսին, նոյն բարձր տեղերու մաքուր օ-ղին, նոյն գաղափարական մօտեցումին: Ու այսպէս, իրար ետեւէ, Պօյաճեանի է-ջերը, պարբերութիւնները, տողերը կը վկայաբերեն մարդու մը, մարդոց, գիւ-ղացիներու, Այնճարցիներու, Մուսա-տաղցիներու ապրումներու մասին. սա-կայն շատ աւելի լայն է շրջանակը իր ապրումին, ու հեղինակին վկայութիւնն է՝ Հայուն մասին, Հայ ժողովուրդի տա-րբերի ապրումներուն, կարօտներուն, ցաւերուն ու ցանկութիւններուն մասին:

Տոմար է տոմար, Պօյաճեանի դը-րածը. ու տարագրի տոմար, տարագիր մարդու, տարագիր Հայ մարդու, տարա-գիր Հայ ժողովուրդի տոմար... Տոմա-րին մէջ կու գան իրար հետ, իրար ե-տեւէ, երբեմն իրար ձեռք տուած, քիչ անգամ իրար հրմշակելով, Գալուստը ջորեպան, որ վրանին առջեւ կանգնած կը պոռայ Հայոց մեռելներուն՝

— Մեծ մեռելներ, լեռներու չափ մեռելներ, ելէ՛ք տեսէ՛ք որչափ պղտիկ անաղ կայ հոս, որչափ խոշոր անաղա-րուքիւմ եւ աղտո՛ւտ արեւ կայ սա մու-հաճիքներեան մէջ: Որմնադիր Մաթոսին կընը ծւա, որ քնն կէտօր չեղած տվո-րութիւն էր քրած Պասիքի մէջ ըսել ա-մուսինին. — Մաթոս, Մաթոս, իմ բարի ամուսինս, ճանճերը գիւ պիտի լմնցնեն, քար մը խորիւ Եւայիդ. համար... Նիկո-

ղոսը՝ որ իր ծերունիի աչքերը սեղմե-լով, կը կարծէ դեռ տեսնել իր տունը, թառած լեռներու կողին, հեռո՛ւն, հե-՛՛ռո՛ւն... Եփրեմ Քեռին՝ խոշոր գլխով միականի Եփրեմ Քեռին, որ Հայրենի տունը վերադառնալէն յուսահատ «Հաստ փորով պառկեցաւ. հրացանին վրայ եւ կրակեց. Տէր Թարութիւնը, որ «վաթսուց տարի միաւրիս, յամառ, սուրբ եւ առողջ եղած էր, եւ երեւ հազար կիրակի, սրբ-բազմասուրբ յամառութեամբ մը մոյմ բանը բարգաճ էր. քարուքիւմ բարգաճ էր»... հողագործ Տրդատ էմմին՝ որ իր փեսատուով Հայաստանը փոխել կը մտա-դէ, ծայրէ ի ծայր, սահմանէ սահման, ու Հայ ցանկ, Հայու քրտինք թափել կը մատուրէ Հայու հողին մէջ... Եւ Պրե-Ղազար, եւ Միսակ եւ Միսաք... եւ ճան-ճերը Այնճարի, եւ մօտեցները, մալա-րիան, մահը, կեանքը, պայքարը կեան-քի համար, տեսելու համար...:

Գրագէտը ճշմարտութիւնները գըտ-նող եւ յայտնաբերողն է. ի՛ր ճշմարտու-թիւնները, լեզի ըլլան անոնք թէ քաղցը. պայման չէ որ հաճելի ըլլան անոնք մե-զի, կը բաւէ որ դեղեցկօրէն արտայայտ-ուին, որպէս իրականութիւն պարտադ-րեն ինքզինքնին մեզի, համոզեն մեզ, վարակեն մեզ նոյն ապրումով: Եւ Պօ-յաճեան զրազտ մըն է, որուն ապրում-ները, մտածումները, դատնութիւնները միշտ ալ ճշմարտին կնիքը կը բերեն ի-րենց հետ, ԻԻՐԱՔԱՆՁԻԻՐ ՀԱՏՈՒՄԻՄԻ ՄԷՋ:

Դիտմամբ. ընդդէնդինք իւրաքան-չիւր հաստուած բառերը, որովհետեւ ի-րար յաջորդող հաստուածները երբեմն ի-րար չեն լրացներ, իրար հետ չեն կապ-ուիր, սակայն իրենք իրենց մէջ առած ԱՄԲՈՋՈՒԹԻՒՆ ՄԸՆ ԵՆ, ԳԵՂԵՑԻԿ ԱՄԲՈՂՁՈՒԹԻՒՆ ՄԸՆ,

Կարելի է Պօյաճեանի Տարագրի Տո-մարը պատուել, կտրտել, էջերը բաժ-նել իրարմէ նոյնիսկ, եւ վերցնել մաս մը, հատուած մը, պարբերութիւն մը նոյնիսկ երբեմն. ու այդ պարբերութիւ-նը իւրաքանչեւ ճշմարտութիւն մը կը պարունակէ, կ'արտայայտէ հարազա-

տուեթեամբ, ու աղուոր ձեւով:

Այս իրողութիւնը սակայն, դրական բաժնի մէջ առած, կը բերէ բացասական արդիւնքը իր հետ, նեղացնող ապրումը: Պոյաճեան դոյներու թանձրութիւն մը կը բերէ, եւ ծայրայեղ շեշտաւորում մը կու տայ, որոնք, կարճ հատուածներու մէջ տանելի՝ երկար ու կըրկնրած ձեւին տակ յոգնեցնող կը դառնան:

Պոյաճեան տաղանդաւոր դրող է, ու անսպաս չանք է մտածումներու, ապրումների, ապրումած զգայնութեանց. տակայն անոնց զտումը, զսպումը, սանձումը կը պակսի իր դրօշն: Կը յորդին իր զգացումները, կ'արտայայտուին շրտուած բառերն ալ, չըսուած ապրումներն ալ, կը կցուին իրարու տնիթիականօրէն, առանց անցումի, երբեմն իրենք իրենց վրայ կը դառնան ու կրկին կ'արտայայտուին: Կը սկսի թուիլ թէ վերջացնելու դժուարութեան ենթակայ է հեղինակը. անվերջ է իր ներաշխարհին պեղումը, որով նաեւ դուրս եկող բաներուն հոսանքը անդադրում է: Գրադէտին արժէքը տակայն միմիայն դուրս բերուածի պարունակած հարստութեան մէջ չէ, այլ նաեւ ինքնԱԶՍՊՈՒՄԻՆ, ինքՁԻՆՔԸ ԿՈՓԵԼՈՒՆ, ՁՏԵԼ ԵՒ ԸՆՏԻՆԵԼ ԿԱՐԵՆԼԻՈՒՆ ՄԷՁ:

Գիրքը, կը կարդացուի հաճոյքով, երբ սպասումը չըլլայ պատմութեան մը, հեքիաթի մը, արկածախնդրութեան մը. երբ ընթերցողը սկսի կարգալ տնտեսապաշար ձեւով մը, առանց դիմագրելու հեղինակին, առանց պահանջելու հեղինակին որ ամէն գնով հաճելի ըլլայ իրեն, պահանջելով միայն որ «Ան աղուոր բան մը տայ, ըստ իր խառնուածքին, եւ իրեն յարմար ձեւին տակ»:

Պոյաճեան կրնայ, պիտի կրնար ըլլալ մեծ դրող մը եթէ... Բայց սահմանելու փոխարէն այս «Եթէ»ն, խօսքը փոխանցենք իրեն, Պոյաճեանին:

«Ակսել Բեկլատեան ձէպէլ Մուսացի է, աղքատ է, ուսուցիչ է: Կրնայ մեծ խորութիւններուն ձայնը բերել մեզի,

քանի որ մենք պէտք ունինք տիեզերական ճշմարտութեան խօսքին, աստուածային թանձրացող իմաստներուն»:

«Ակսել Բեկլատեան չի գիտեր թէ ինք մեծ դրող մը կրնայ ըլլալ, Կը վախնայ այդ համոզումին ու յաւակնութեան մօտենալէ. կ'ընկրկի շարունակ, կը նահանջէ եւ կը սեղմուի պզտիկ նոթագրութիւններու մէջ, մտքերու եղբրական անկանոնութեան մը մէջ: Հասցուցած կը կարծէ ինքզինք շտպուելու աստիճանին, եւ այլեւս հանդարտ կը զգայ ինքզինք եւ թուրքովին սպահով իր անապուծեան մէջ»:

«Կը մնայ Այնճար. որոշած է շունչը փշիւ դիւղացիներու դժուար կեանքին մէջ: Ի՞նչ վնաս՝ եթէ իր կարելիութիւններէն պակաս ապրի. ի՞նչ վնաս՝ եթէ չհասնի իր ամբողջական ստեղծանին եւ մնայ այդպէս կծկուած, ափ մը հայ դիւղացիներու մէջ. Թող ըլլայ իր բախտն ալ այդպէս. ի՞նչ վնաս»:

«Քիչ մը հացի դրամ պիտի ստանայ, փողկապի մը դրամ, մերթ ընդ մերթ կ'ոչիկին դամ զարնելու դրամ: Դասը անշուշտ լաւ պիտի աւանդէ, պիտի ջանայ որ աշակերտները այսօր աւելի լաւ սորվին քան սորվեցան երէկ, բայց եւ այնպէս իր աւագ մտահոգութիւնը պիտի ըլլայ ժողովուրդը դիտել»:

Հեղինակը աւելի լաւ բնորոշած է, քան կրնար բնորոշել քննադատը: Պոյաճեան, իր ընկրկումներով, իր շարունակական անվճռականութեամբ, ճատքերու եղբրական անկանոնութեան մը մէջ յամենալով, նոթագրութիւններու կը վերածէ իր դրականութիւնը, մինչ կրնար, անկասկած որ կրնար մեծ դրող մը ըլլալ, եթէ միայն յանձն առնէր տառապանքը ինքնակոփումին, ժայթքումի աղուոր պահերէն ետք պէտք եղող սըրբագրութեան ուն աշխատանքին, շտապական զտումին: Աւելիի պահանջէն եկող քննադատական այս խօսքերը չեն կրնար նուազեցնել եղածին արժէքը, Պոյաճեանի տաղանդաւոր գրադէտի արժէքը:

Վկայող մըն է ան հայու կեանքին, արտասահմանի մէջ հողմածեծ եղած հա-

յու կենսաբնական վիճակի պիտի դիմեն ապագայի գրադարաններն ու պատմագետները, նոյնքան որքան Շահնուրի վկայության: Ընդհանուր չէ, վիճակ չէ, պատմագետ չէ իր գրածը, սովորական առումով. բայց անճանաչի պատմություն մըն է, պատմությունն է Հայուն, գաղթականի վերածնունդ Հայուն, Հայրենակարոտ Հայուն, ազատատենչ Հայուն: Միսակին ու Միսաքին պատմությունն է, բոլոր Միսակներուն ու Միսաքներուն պատմությունն է: Ոչ թէ տօրեայի արկածախնդրություն, ոչ բնական ու սեռին պատմությունը, ոչ ալ սինեմաներու, ժամադրություններու, արբեցումներու պատմություն մը. այլ Միսակներու ներքին մղկտումին պատմությունը, ներգաղթի օրերուն յոյսի ու յուսահատությունից անցնելու պատմությունը...

«...Պոլսեցիական սարսափելի օրէնք քարակ մաղ մը՝ որ Արտաշատանի բոլոր գաղութներուն մէջ Հայաստանի անունով Հայ կը մաղէր: Ստրուկ ներածելու առեւտրական խոշոր ձեռնարկ մը ըլլար կարծես եղածը, կամ ոչխարի վաճառականություն մը:

«Բայց ոչխար պէտք էր տանէին, թէ մարդ, թէ Հայ: Միթէ ոչխարի կարօտ ունէր Հայրենիքը թէ բարի ու վշտահար ճակատով տարագիր գաւակներու: Հայաստանը սարուկներու ծնունդ տուած մայր էր, թէ ազատութեան մոլորներու: Հայիկ մը ծնած էր զայն, թէ ոչխար մը»:

Այսպէս, կարճ քանի մը տողերու մէջ, այն ինչ որ էջերով պիտի չկարենային տալ ուրիշներ, հրապարակագիրներ. ատիկա է գրադարանի յատկանիշը, իր տեսիլքին սրությունը, պայծառութիւնը, հատուկ ըլլալը:

Պոյաճեանի գիրքը հարուստ է ներքին ապրումով, ցաւով, տառապանքով դրուած էջերով, դէպքերով, պատկերներով: Հարուստ է ան Հայու համեմատ գաւակներու հարստութեամբ, որ անփոխարինելի է, շատ աւելի է քան բոլոր համեմատութեան սահմաններէն անդին անցած Հայերու ձեռք բերած հարստությունը, որովհետեւ ատիկա է Հայուն հարստությունը, իսկ միւսը, միայն ցածը Հայու ձեռք բերած, սակայն Հայու հարստություն չէ, օտարի է, միջազգային է, ամէնունը կրնայ ըլլալ:

Պոյաճեանի գրականությունը եթէ չունի վէպի մը պատմումին հանդիսությունը, ունի իր մէջ, ներքին փնտրողներու ու գիտերու հաճոյքը: Կրկին ու կրկին պէտք է կարդալ իր հատուածները, իր տոմարի գանապան էջերը, պէտք է յամենալ այդ պարբերութեանց մէջ, կարենալ համեմատելու համար աղուոր գրականության մը համեղ պտուղները:

Հարկ է որ Բեկզատեան (Եղ. Պոյաճեան) բերէ պէտք եղած ճիշդ, ինքնագրապատմութիւն ու դուրս զայն օր մը իր «Եթե պարտություններէն, մտքերու եղբայրական անկանոնությունէն»...

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ



Բ Ա Տ Ր Ո Ն

**ՊԱՐՏԱԽՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՈՐՈՆՔ ԳԵՐԱՍԱՆԻՆ ԵՆ**



Ամէն մարդ քիչ թէ շատ զերասան է իր առօրեայ կեանքին մէջ։ Գիտակցաբար կամ ոչ, ամէնքը կը սիրեն նմանցնել ուրիշի շարժումներն ու ըսածները, կամ հանձնքով կը դիտեն ուրիշը ներկայացընողի մը շարժումները։ Թատերական աղբյուրը նոյնքան անհրաժեշտութիւն է մարդուն համար որքան թերեւս շնչառութիւնը։

Թատերական աղբյուրին գոհացում տուող բազմաթիւ ձեւերուն մէջ, իրաւ թատրոնն է որ կը մնայ արուեստի բարձունքներուն տանող լուսադոյն ճամբան։

Արուեստի թատրոնը, արուեստի մը-դումը ունեցող բեմադրիչներու ճիպոտին տակ, արուեստի ծարաւ զերասաններու ստեղծագործութիւններով, կը դառնայ թատերագիր արուեստագէտին ճշմարտութիւնները պրանքի բերող, անոնցմով մեր կեանքը գեղեցկացնող, հարստացնող ներշնչարան։ Շէյքսպիրէն առաջ Համլէթ չկար։ Շէյքսպիր չկայ, սակայն մեղի հետ կ'ապրին, մեր քովէն կը քալեն ու դարեւ պիտի չարունակեն քալել Արքայ Լիրը, Մաքպէթը, Շայլոքը, Օթէլլոն։

Երեւութապէս կը թուի թէ գերասանը երրորդ տեղը կը դրաւէ, թատերագրէն ու բեմադրիչէն հտք, թատերական արուեստի իրականացման մարդին մէջ։ Իրականին մէջ սակայն առաջինն է ինք, քանի որ իրմով, իր կառուցած տիպարով է որ մենք կը դառնանք հաղորդակից հեղինակի ճշմարտութիւններուն։ Ինքն է բեմին միակ տէրը, միակ ներկան։ Փաստորէն իրմով կը լրանայ ստեղծագործութիւնը։ Մաքբէթը որ կը ծնին, կը յորդին սրահին մէջ եւ երբեմն կը դառնան բեմ ու սրահ ողորդող ալիք, կը կազմաւորուին զերասանին մատներուն տակ,

արուեստագէտի իր հարադատ ճշմարտութեան վարակիչ ջերմութեան տակ, արդիւնք՝ իր ստեղծագործական աշխատանքին։

Ինչ որ աւելի կ'արժէ քան արտաքին բոլոր ծափերը, ներքին գոհունակութիւնն է զերասանին, ներքին ծափահարութիւնը, երբ ճիշդն ու աշխատանքէն հտք, արուեստի գործ մը կերպար կ'առնէ, կեանքին կուգայ իր միջոցով, լոյսերով ողորուած բեմին վրայ։

Հասնելու համար սակայն այդտեղ, արժանաւայել համար արտաքին թէ ներքին ծափահարութեան, իրաւ զերասանը պէտք է իրապէս անոնորդաբարժ։ Իւրաքանչիւր զիւրի մէջ պէտք է բերէ իր անհատականութիւնը, իր անձնակրթութիւնը, ներաշխարհի հարստութիւնը, նոյն տակն, պէտք է կարենայ ըլլալ տարբեր՝ զերէն դեր, տիպարէ տիպար։

Ատոր համար նախապայման է անշուշտ շնորհքը. ամէնքը չեն կրնար ըլլալ արուեստագէտ, կայծ մը պէտք է ծնած ըլլայ միասին. պէտք է ըլլայ նաեւ սէրը թատրոնին, բեմին։ Սակայն եթէ այս երկուքը կը բաւեն հանճարներուն, չեն բոււր շնորհալիներուն, անգամ սաղանդատներն են։ Դեռ պէտք է անընկճելի կամք՝ խորանալու, կամք՝ բարձրանալու։ Պէտք է անդադրում ԱՇՈՒՍՏԻՆՔ։

Տաղանդը՝ աշխատանք է ամէն բանէ առաջ, համեմուած շնորհքով ու օգնութով։ Տաղանդը կարիք ունի տեւական հարստացման, ներառման նորանոր տըւեալներու, ծանօթութիւններու, ուրիշներ եղող ճշմարտութիւններու. ատոր համար ալ առաջին պարտաւորութիւնը զերասանին ԶԱՐԳԱՑՈՒՄՆ է։

Զարգացման համար անշուշտ որ նը-

պատճեններ են դպրոցները, համալսարանները, գիշերական դասընթացները, դասախոսությունները եւ այլն. սակայն անհրաժեշտ ու անփոխարինելի պայմաններ չեն. էականը ծախում է: Մարդկային ներկայ քաղաքակրթությունը մամուլը, գիտնալու, աւելի՛ գիտնալու ծարաւին արդիւնքն է: Բեմը սիրող, թատերական արուեստը սիրող դերասանը պէտք է կարգայ, շարունակ պէտք է կարգայ. պէտք է փնտռէ, դռնէ, ծանօթանայ՝ որքան կարելի է լայն սահմաններում էջ, որքան որ կարենայ խորացնելով, թատերական ու բեմական արուեստին վերաբերող հարցերու, եւ ընդհանրապէս մարդուն վերաբերող հարցերու:

Թատերական զբաղանքները ինքը արդէն կը պարունակէ դանդաղ ճիւղեր, որոնց բոլորին ալ աստիճանաբար պէտք է ծանօթանայ դերասանը՝ թատերական գրականութիւն, թատրոնի փիլիսոփայութիւն, թատերական արուեստ, դերասանը եւ իր դերին պատրաստութիւնը, բեմադրական դպրոցներ, հաղուստներ, թատերադիրներու կենսագրականներ, դասական եւ արդի թատերակներ:

Այս, ընդհանուր զարգացման համար, դրականութեան պատմութիւն, արուեստի պատմութիւն, բնկերաբանութիւն, հոգեբանութիւն, փիլիսոփայական մտածողութիւն, անտեսական հարցեր, քաղաքական հարցեր, եւ այլն:

Դերասանը, իր ստեղծագործութեան մէջ, որպէս յարաբերութեան միջոց հանդիսականներուն հետ, ամէնէն առաջ պիտի դորձածէ հեղինակին բառերը, հեղինակին ոճով, հեղինակին արտայայտելու ձեւով, որուն լաւագոյն ըմբռնումը կարենալ ձեռք բերելու համար անհրաժեշտ է որ ունենայ իր զործածելիք լեզուն կարելի եղածին չափ լաւ ծանօթութիւնը: Լեզու մը լաւ խօսիլը, կամ անխալ պրելն ու կարգալը չեն բաւեր, դեռ անհրաժեշտ է հասնիլ բառերու նուր տարբերութեանց ըմբռնողութեան, լեզուի կառուցումի զանազան կարելիութեանց ըմբռնողութեան, չեչտերու, կէ-

տադրութեան լաւագոյն օգտագործման, ինչ որ պիտի բերէ երանգի արտայայտութիւն:

Լեզուն ու բառերը պիտի փոխանցուին որտե՞ղ դերասանին ձայնական ալիքներով, որոնք պիտի երթան բախելու սրահին զանազան անկիւնները, երբեմն խորքը նստած, սուր կամ տկար լսողութիւն ունեցող հանգիստաններու ականջին. որով անհրաժեշտ պիտի ըլլայ մասնաւոր յատկութեամբ արտասանել, մասնաւոր առողանքութիւն մը ունենալ, աւանց անբնականութեան վերկը իյնալու: Ահա տեսական աշխատանքի ուրիշ պարտաւորութիւն մը դերասանին համար:

Դիտեցէ՛ք նկարիչ Փոլ Կիրակոսեանին նկարները, ու պիտի տեսնէք որ հակառակ դէմքի մանրամասնութեանց դրձուած շրջալուծ, հակառակ աչքերու կամ բերնի արտայայտութեանց քաղաքականութեան, նկարիչը կրցած է փոխանցել փոփոխութիւն՝ ԱՊՐՈՒՄԸ որ այդ դէմքին կը ճառագայթէ, եւ այս՝ շնորհիւ զլիսու բըռնուածքին, կամ դէմքի դիրքին: Ապրումները կ'արտայայտուին ոչ միայն բառերով, այլ նաեւ շարժումներով, մարմնին ու անոր զանազան մասերուն կեցողութեամբ, բռնուածքով. որով դերասանը պարտաւոր է ուսումնասիրել նաեւ մարմնական արտայայտութեանց թէքները, ու հետզհետէ տիրապետել անոր:

Դեռ կայ բեմը, անոր չորրորդ պատին բաց ըլլալը, որ դերասանին պարտաւորութիւնը կ'աւելցնէ, քանի որ ան պիտի խաղայ երեք պատերու մէջ, սակայն պէտք է տայ տպաւորութիւնը չորս պատի մէջ խաղալուն, կամ բոլորովին առանց պատի խաղալուն. այսինքն անբնական խաղարկութեամբ մը բնականի տպաւորութիւնը պիտի առաջացնէ սրահին մէջ. ասիկա կը կարօտի տեսնելին ճիշդի, առանձին ուսումնասիրութեան ու թէքներէ:

Յետոյ կուգան հաղուստն ու ծպտումը: Հաղուստները մարմինը ծածկող կերպասի կտորներ չեն, պէտք չէ ըլլան. անձնաւորութեան մաս կազմող, անձնա-

ւորութիւնը արտայայտող բան մըն են, պէտք է ըստ այնմ ալ ըմբռնութիւն եւ ուսումնասիրութիւն դերասանին կողմէ:

Եւ վերջապէս իր դերը խաղալու պարտաւորութիւնը ունի դերասանը. այսինքն իրեն տրամադրուած տիպարը կենդանացնելու պարտաւորութիւնը: Մթանիսլապիէ՝ տիպարին հետ նայնացման մեթոտը ընդգրկէ թէ Պրէթի հետաւորացման մեթոտը, պարտաւորութիւնը նոյնն է՝ իր երեւակայութեամբ եւ իր ըմբռնումով պիտի լրացնէ տիպարը: Թատերադիրը չի կրնար ամէն բան դրած ըլլալ. սահմանափակումներու ենթակայ է ան, ժամանակի, վայրի եւ նիւթի զարգացման սահմանափակումներ: Դերասանը պարտաւոր է խօսքերէն անդին անցնել, ըմբռնել լուսթիւնները, չըսուած բառերը, գտնելու համար ամբողջական մարդը, լրիւ տիպարը: Այդ լրիւ տիպարը արտայայտելը իր պարտականութիւնն է: Ներկայացումը հասարակութեան հըրամցուած բառերու կոյտ մը չէ, ոչ ալ շարժումներու ընկերակցութեամբ լաւ ընթելքուն է թատերակի մը. այլ շարք մըն է մանր գործողութեանց, որոնք կ'արտայայտեն տիպարներու շեշտով, տիպարներու փոխադարձ յարաբերութեանց շեշտերով: Դերասանը պարտաւոր է բառերը իրենց տեղը դնել, դարձնել ազդու, ընել այնպէս՝ որ մեզի թուի թէ այդ բառերը կ'ընեն ԿԱՅՈՒԹՆԵՆ, ԳՐԳԻԹՆԵՐՈՒ ՏՐՈՒԱՄ ՊԱՏԱՆԿՆԵՐ:

Հասնելու համար ասոր, դերասանը պէտք է մանրամասնօրէն ուսումնասիրած ըլլայ իր դերին ամէն մէկ բոլակն, դիմացի դերերուն ամէն մէկ բոլակն. դէտած պէտք է ըլլայ ամէն մէկ մանր պէպքի ներքին գրգռականացումը, գրգռուր, գրգռութիւն հոգեբանական պատասխանը: Այդ պատասխանը պիտի արտայայ-

տեն իր շարժումները, կեցուածքը, ու նաեւ հեղինակին իրեն տրամադրած բառերը: Դերասանը ուրեմն, պէտք է ԽԱՂԱՅ ԻՐ ԴԵՐԸ ԱՄԷՆ ԲՈՒՊԻ, ինչ որ կը պահանջէ իրմէ ամէն բոլակի կեդրոնացում եւ քեֆի:

Լրումին տանող պահանջը դերասանին՝ վերանորոգելն է ու իր խաղը մըլտապէս վերանորոգելը: Այն բոլակն երբ դերասանը կը դադրի իր ստեղծագործած տիպարին մէջ նորութիւններ փնտռել, նորութիւններ բերել, իր խաղը կը դառնայ մեքենական կրկնութիւն մը միայն, որով կը դադրի ըլլալէ արեւմտ: Միշտ կայ շեշտարուած նրբերանգ մը, մանրամասնութիւն մը: Ասոնց փնտռութեան պէտք է ըլլայ դերասանին մշտական մըլտապէսութեամբ, եթէ նիւթին տեսանկիւնէն չմտնենք, այլ դերասանին՝ միշտ կայ նորութիւն մը իր մէջ, քանի որ մարդը ամէնօրեայ փոփոխութեանց ենթակայ է, այդ նորութեանց ազդեցութեան տակ նոր հորիզոններ պիտի բացուին դերասանին առջեւ, ինչ որ պիտի վերանորոգէ իր խաղը: Ու ասիկա կը բերէ մեզ ետ, առաջին պարտաւորութեան, տեսական զարգացումի պարտաւորութեան, ներաշխարհին տեւական հարստացման պարտաւորութեան, որ բոլոր արուեստագէտներուն համար է, եւ անոնց կարգին նաեւ դերասանին:

Այս բոլորը մատնանշումներ էին միայն, պարզ յեշտական մը, գրեթէ վերնադիրներ: Թատերական սթիւտիոյի մը կամ դպրոցի մը մէջ այս բոլորը որպէս նիւթ մանրամասնութեամբ պիտի աւանդուէին: Երբ չկայ դպրոցը, դերասանին կը մնայ ընթերցանութեամբ փոխարինել պակասը:

Բ. Փ.

ԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀ

Պէյրուքի հեռատեսիլի արուեստի երիտասարդ ճննադատը՝ Միշէլ Պոնէ, որ միաժամանակ տէր է ցուցանակարի արժէքաւոր հաւաքածոյի մը՝ այս գրութիւնը յատկապէս պատրաստեց «Բագին»-ին համար, խօստանալով պարբերական իր աշխատակցութիւնը արուեստի մասնագիտական նիւթերու վերաբերեալ:

ՅՈՒՅԱՆԿԱՐԸ ԳԵՂԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Affiche)

Յայնապակիներ, կարասիները, իւզանկարները եւ զանազան արուեստի իրեր իրենց ամբողջութեան մէջ կապուած չեն նորածնութեան, սակայն տարբեր է ցուցանակարին պարագան. ան ազգակի ազդեցութեան ենթակայ է ժամանակի իմաստասիրական եւ քաղաքական գաղափարներուն, արուեստի ըմբռնումին եւ գիտութեան: Քսաներորդ դարու գրծագրական արուեստը կրած է նկարչութեան եւ ճարտարապետութեան խորունկ

դրոշմը: Քասանորի խորանարդապաշտ ցուցանակարները կրնան ապացոյց ծառայել. անոնք կը ցոյացնեն մեր ժամանակներու ըմբռնումները: Լուսանկարչութիւնը և նոր մեքենական հնարքներ օգնած են ընդլայնելու ցուցանակարին կալուածը եւ աւելի ուժեղ դարձուցած են տեսողական հաղորդականութիւնը:

Ցուցանակարը յօրինուած ըլլալով ժողովուրդին ուշադրութիւնը գրաւելու համար, հանրային կազմակերպութիւններու, ձեռնարկներու, առևտրական արտադրութիւններու, ճարտարական ընկերութիւններու, նոյնիսկ արուեստի ցուցահանդէսներու վրայ, պէտք է ամէնէն առաջ դիտողին մէջ յառաջացնէ ըզզայացնում մը:

Ամէն գործ պէտք է արտայայտէ իրականութեան մէկ երեսոյթը, դիմելով տեսանելի կամ անտեսանելի աշխարհին և կամ մեր դէմ պէտք է քանայ նոր մը, քստեղծուած՝ արուեստագէտի երևակայութեամբ. սակայն արուեստագէտը ստիպուած է ենթակայ մնալ պահանջուած նիւթին եւ իր գործով ըլլալ վկան իր ժամանակաշրջանին, անկէ ոչ առաջ եւ ոչ ետ: Հարցը նոյնն է նաեւ ոչ ձեռապաշտ գործի մը պարագային:

Կրնանք սկսիլ ցուցանակարին պատմութիւնը 1880-էն: Իմաստասիրական եւ գեղագիտական մեր ստեղծագործութիւնները նպաստեցին ընդհանրական մտայնութեան մը ստեղծումին, շրջան մը ուշ





խորհրդապաշտ դպրոցը պիտի հասներ փառքի շրջան մը, ուր Պետրելո, Մալարմէ, Փրուստ եւ Վալէրի կը ներկայացընէին զգայական եւ ճնարական վերամարդոգում մը:

Շերէ եղաւ բազմազոյն վիմագրեալ ցուցանկարին ստեղծիչը: Ան նախ աշխատեցաւ վաճառատուններու համար, «Ներկառդ Կայսրութեան» շրջանին՝ Միւզիէ-Էոլիերու համար. 1885-ին ան չափազանց մեծ յաջողութիւն ունեցաւ: Անոր ցուցանկարները կը լուսաւորէին Փարիզի փողոցները եւ քաղաքային թախչով եւ գուարնալի արուեստով մը: Արուեստագէտը նկարագրողած է իր շրջանի Փարիզի այժմէութիւններու պատմութիւնը, ժամանակի դերասանուհիներէն մինչեւ նորաձեւութեան տումները, շարժապատկերի եւ փոխադրական միջոցներու սկզբնաւորութեան: Արուեստագէտին ցուցանկարները գուարք թախչ մը ունին. ան խորապէս օգտագործած է *վայելչասէրը* եւ շնորհիւ իր գրաւիչ հանճարին զայն հանելի շարձուցած է:

1900-ը ուզեց որ վայելչականը մեծարուի: Բընուար, Մանէ, Սէիւբա, Ույնիսկ Բիճասո և Ժիւան Կրի հրապարուեստան անկէ: Թուլուզ Լոգրէֆ ապրեցաւ Փարիզի այս հրապարիւն համար: Գծանկարի մէջ անվիճելիօրէն Լոգրէֆ ամենախմբատիպ արուեստագէտն է, Մանմարդը իր Կէնկէզներով, գիշերային սրահներով եւ պարահանդէսներով անոր զարգացման կեդրոն հանդիսացան: Սկիզբիտագային «Մուլէն սը լա Կալէթը»-ը, բը «Քապարէ Պրիւանդ»ի մթնոլորտը, «Լ'Էլիզէ»-ն, Մոմմարգըրը՝ եւ մանաւանդ

Մուլէն Բուժը պիտի անմահացունին Լոգրէֆի կողմէ: Իր գոյները միշտ մաքուր են, համադրութիւնը կազմուած է յարդրական թեթեւ վրձինի եսուամերով եւ մեծ նկումութիւն մը ունին իր գիծերը: Լոգրէֆի տեսնելու ձեւը կը խրոչեցնէր իր ժամանակակիցները, սակայն այսօր բոլորս ալ կը հասկնանք անոր ճշմարտութիւնը:

Փարիզի հմայքներու շրջանէն կ'անցնինք ընկերայինին: 1900-ը խորապէս պիտի ազդուի Զօլայի, Բրուստի եւ Ժորժի ընկերվարական գաղափարներէն, նոյն մթնոլորտէն պիտի ազդուի նաեւ, իր ցուցանկարներուն մէջ *Մզէլէնի* նման արուեստագէտ մը: Ան Զուիցերիացի մը կարիչ մըն էր ֆրանսական բաղաժանցի դարձած: Իր ամենանշանաւոր ցուցանկարները եղան *Լ'Աստուար* եւ *Լը Գուփալլ*, Տարիայի համար պատրաստուած. ան տասը տարի աշխատեցաւ *Թուլուզ Լոգրէֆի* հետ եւ միասին կը ստորագրէին *Դրէլէ* ծածկանունով: Ան շատ մեծ



գծագրիչ մը եղաւ: Անոր մօտ մեծ սէր մը կը ճկատենք խոնարհներու հանդէպ եւ խոր կարեկցութիւն մը բանաւորներու յանախ դժուարին կեանքին ճկատմամբ: Անաթոլ Ֆրանս անոր հետեւեալ մեծարանքը ըրաւ. «Անցնող կեանքի ճկարիչը, փողոցին տէրը, բնական և ջիւղ հոսանք մը եւ մութ հոսանքը բանաւորներու եւ բանաւորութիւններու»:

Նաեւ ուրիշ ցուցանկարիչներ հետաքրքրուեցան ընկերային դէպքերով, ինչպէս *Ճօրէն*, *Վիլէթ*, *Քարէէք*, որոնք միասին կ'աշխատակցէին «Կարագի Աման»-ին: Իրենց նպատակն էր տալ բնապատկերներ ցուցատախտակներ եւ հարուածել անբարոյ օրէնքներ եւ կարգ մը պետական անձեր:

1905-էն 1910 գեղագիտական յեղաշրջումներ իյարաւ յաջորդեցին արագ կերպով. *Ճողիւղ*ը Ֆրանսայի մէջ, Տի Պրուֆի կազմութիւնը Տրէստի մէջ, Ասպագայապաշու դպրոցը Խոալիճ մէջ: Քանտիսմիսի առաջին վերացական գործերը կախուեցան Պլաու Բէյդրի պատերէն, Պրաք, Բիքասո եւ Բիքապիտ իրենց ամբողջ ստեղծագործ միտքը տըւած էին «խաբանարդապաշտութեան»:

Նանսիի դպրոցը, որ պաշտօնապէս հիմնուեցաւ 1901-ին կը տեւչար վերացըտնել արուեստի միաբանը, տեղական աւանդական արուեստին եւ բնութեան վրայ հիմնուելով: Այս դպրոցը մասնաւորապէս աշխատուած ապակիի մէջ է որ յաջողութիւն տուաւ, ինչպէս «Տում» եւ «Կալլէ»: Սակայն նաեւ ծնունդ տուաւ անուանի ցուցանկարիչի մը, *Փօլ*

Քուլիէ, որուն մօտ գիրերը միակ տեսանելի խորհրդանշն են:

Նոր արուեստը Պելեիֆայի մէջ սրլացք մը տուաւ ցուցանկարին, որ փոխանցում մը եղաւ դասական համադրութենէն արդիականին: Ատուֆ Քրէսքէն, Հանրի Էվանքաէլ եւ Փօլ Հանֆար ըստեղծեցին ուշագրաւ արդիական վաճառատուներ, որոնց զարդական առատութիւնը կարերով եւ հաշակոյթերով կը գրգռէր դասական կառուցումներու կոդմանկիցները:

Ցուցանկարը շատ մեծ անդրադարձ մը ունեցաւ նաեւ Փարիզի մէջ նոր արուեստին վրայ: Պիկ Բիֆանի կառուցել տուաւ ապակեմկար պատուաններ Թուլուզ Լադրէֆի, Պանարի, Կրաւէի եւ Վալդոմի ցուցանկարներու վրայով, ինչ որ անմայրենքաց նորութիւն մըն էր:

Ամերիկեան դպրոցը վերջնականապէս հրապարակ պիտի նետէ *Շոք* Ցուցանկարը եւ պիտի դառնայ այս արուեստին վարպետը. գիծը իշխող պիտի ըլլայ գործին մէջ, այս ձեւով նիւթի մեծ պարգացում մը յառաջ կու գայ, գիտակօրէն թեթեւեցնել նիւթը զարդերէ: Այս երկտասարդ դպրոցը ամենէն աւելի ազդուած է Շիֆակոյի դպրոցէն, որ արդի մարտապետութեան ընդհանուր տեսութիւնը տուաւ:

Պիտի չծածկեմ ցուցանկարի համդէպ ունեցած սէրս: Անոնք ինծի կը բերեն զանազան սերունդներու վկայութիւնները եւ կեանքի դրսմը:

ՄԻՇԵԼ ՊԱՆԵ



ՓՈԼ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ
ՆԿԱՐՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

ԼԻԲԱՆԱՆԻ
ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ
ԱՐՈՒԵՍՏԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Լիբանանի սմէնէն զնահատուած նկարիչը՝ Փօլ Կիրակոսեան, առևտւային տարուան իր ցուցահանդէսը, անդեալ ամիս, Ալէքսո Սաադի ցուցասրահին մէջ: Իրեն համակրողներն ու մանաւանդ արուեստի ճանապարհները հարց կու տային, թէ նոր ոտուամ մը պիտի արձանագրէ՞ր նախանձելի ճամբայ մը կտրած այս արուեստագէտը, որովհետեւ վերիպում մը կրնար ճակատագրական բլլալ իր համբաւին համար:

Փօլ Կիրակոսեան չլլացուց ալլ փրկե՛ց իր վարկը: Եթէ անկենդանորէ մը առջեւ չգրաւ, բայց զոնէ համոզեց աչքելունները, որ արուեստի որոնումը կը շարունակէր, նոր հեռանկարներ նուանելու վճռակամութեամբ: Յոյց տուաւ, որ հետզհետէ կ'ընկալէր վերացական արուեստի խորհրդանշանն ու ներուժիւնները, առանց մոլորուելու տարածութեանց եւ անտեսազուրկեանց մշուշին մէջ: Ձեռագործի, ցանցաւ գիծեր կը պահէին կառուցումներուն ամրութիւնը, միւս կողմէ սակայն հարուստ գոյներու ճարտար համադրումով կեանքի կոչուած գէճերը եւ անոնց ներքին տպումները կը ներառէին փուլէ փուլ պերճաթաւ լուսութեան մը մէջ: Կեցուածքներու, նիւթերու համեմատութիւնը որով միօրինակութիւն կը ստեղծէր սակայն, եւ մտնականող վրէժի փոխառէն զանալով մեղք բերուած խորութիւնները կու տային վրդովել ներառութիւնը, որ դիտարկութեամբ, ներշնչումով եւ խոտալանանջ աշխատանքով ստեղծագործող այս ապրանքաւոր արուեստագէտը կը գիշի երբեմն դիւքին արդիւնք ներուս:

Երանի թէ չքուելի գինը տոնող բարոյական ու նիւթական զնահատանքի հոսանքէն, զիմակուէ փորձութիւնը եւ իրագործէ իրաւ արուեստաւոր գէտի ճակատագրիչը, որուն արժանի է լիովին:

Կազմակերպել Լիբանանի Հայ վարժարաններու մասնակցութեամբ ցուցահանդէս մը՝ զեղեցիկ ծրագիր մըն է ինքին, սակայն յաջող իրագործում մը չեղաւ առաջինը: Խանդավառող ձեռնարկ մը, որ յուսախարիչ դարձաւ սակայն:

Անշուշտ ոչ ոք կը մտածէր տեսնել արուեստի կատարելալ կամ նոյնիսկ յաջող գործեր, եթէն տասնեօթը տարեկան սղոց եւ աղջիկներու կողմէ յորինուած, բայց անսպասելի էր նաեւ ինքզինք դռնել արուեստի ցուցահանդէսէ աւելի վաճառահանդէսի մը մթնոլորտին մէջ, առանց զտումի իրար քով շարուած տնտեսաւոր գործերու գէճ յանգիման, որոնց մեծ մասը գուրկ էր աճէն ինքնատուրբնէ: Ոչ մէկ մանկական վաճառական զգայնութիւն, անմեղութիւն: Այլ՝ պարզ ընդօրինակութիւններ հրապարակներու վրայ քաշի մը գրուելի ծախուող արուեստէ գուրկ նկարներու, կամ լուսանկարներու, երբեմն ալ վարպետներու գործերու շատ գէշ վերաբնորոշումով մը:

Նկարչութեան մէջ այսօր ուրոյն կարեւորութիւն մը ստացած է մանկական նկարչութիւնը: Ինչո՞ւ փոխանակ անոնց մէջ գտնուող զգացումները, աշխարհը տեսնելու ինքնատուր եւ անմեղ կարողութիւնը զարգացնելու՝ չեղելի զանոնք ու գիծն: Յուսադրուած նկարներուն բացարձակ մեծամասնութիւնն մտաւ ոչ մէկ մանկական հողի կը գտնենք: Ձի բաւեր մաքուր գիծ քաշել գիտնալը, ընդօրինակութիւնը ոչ մէկ աստեղ, նոյնիսկ համեմատ ստեղծագործութեան մը շափ իսկ արժէք չէ ունեցած:

Այս բուրբն վերջ գնահատելութիւն մը կը զգանք տեսնելով քննիչ յանձնարումներին բուրբն վրէժ արգար վճիռը: Երկարակիւն է Փալանեան ձեւարարը որ հակառակ իր ներկայացուցած նշանակարներուն սահմանափակ թիւին՝ շահած է մեծ թիւով մրցանակներ:

Ելլ յուսանք յաջորդ տարիներուն կը կրկնուի այս ձեռնարկը եւ ցուցադրուած նկարներու թիւէն աւելի՝ որա՛կն է որ նկատի կ'առնուի:

Յ. Գ.

Մ. Գ.

ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐՈՒ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԸ

ՓԱԼԱՆՃԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՄԷՋ

Քաջալերելի մեռնարկի մը հղաւ՝ ձեմարանի Վասպուրական արահին մէջ կազմակերպուած Հայ Նկարիչներու ցուցանիշէն, որ տեւեց 7 Մայիս 1963-էն 19 Մայիս 1963: Մասնագէտներէ բաղկացած յանձնախումբը եիզ շէք խնայած քով քովի մէկտեղելու հայ արուեստագէտներու գործեր, որոնցմէ շուրջ հրեւոյն հողի, վաստակի տէր թէ նորածնի՝ բերած էին իրենց մասնակցութիւնը:

Ճիշդ է որ իւրաքանչիւր նկարիչ շէք ներկայացուած իր լաւագոյն գործերով: Այսուհանդերձ արուեստի այլազան գործերու հաւաքական ցուցադրումը վկայութիւն մըն էր Հայ ստեղծագործ մտքի երփնեքանդութեան:

Հոն ժամադրուած էին՝ Գառգուն (Գառնիկ Զուլումեան), Ֆրանսական նկարչութեան Շառլ Աղաւազը, որուն ողորադին շնչաւ յետապահեցածն էր գեղարարական աշխարհին մէջ՝ լաւած է համաշխարհային վարկ ու վառք:

Շաքը, տպարարական պատկերներու, որոնց մէջ խոնարհները, մանաւանդ ձկնորսները հազան են աշխարհ շուրջ գոյնի, որ բարձրացած են թաղարներու աստիճանին: Պարզ մարդիկը ամէնէն ազնիւն են:

Ժերմանը, Նեօ-րեալիստ՝ շաքանց պայծառափայլ է արեւելեան գոյնի մէջ:

Պարզիւր, որ կ'երկարացէ իր անձը եւ կու տայ անոց ազնուական կեցուածք մը, բայց ծանրակիւր այս բեռն տակ՝ կը կտին անոնք ու կ'իշխան թուածողութեան մէջ:

Փոլ կիւրախանը, մէկտ յաճախուած թշուառութենէն, որուն մէջ կանայք եւ երեխայք կը պլուրին իրարու՝ քարանձաւու համար սրժանային կեցուածքներու մէջ:

Կիւր, որուն վերսկրեայ աշտարակն է ծովուն ընդդատակեայ աշխարհը, ուր կ'ուզէ մեղի ցոյց տալ ընտրին եւ ժայռերուն պայքարը (մեղի եւ Նեփ), թէ՛ ի վերջոյ Նեփը պիտի չքանայ

եւ միայն միտքը գոյատեւէ:

Կալինցը, Սարեանի՝ Սովետական Հայաստանի վարպետին գորաւոր ազդեցութեան տակ, կը յիշեցնէ մեղի տպարարական գործը:

Կիւրեղը, որուն անձը պայքարի եւ պառտեղի շարժումի մը մէջ կը բարձրանան Գոլգոթա մը ուր ամէն ինչ կը փոշիանայ, դառնալու համար ոչնչութիւն:

Աւետիսեանը, համբերատար աշխատող՝ յիշակեցողական տեսլիստ մը ունի, զոր գիտէ արժէքներէ ստատ լոյսի մը մէջ:

Պերպլերանը: Շատ ցաւալի է որ հաստատուն նկարչութեան այս աստիճանին հասնելէն յետոյ (յորինում, մեւ եւ գոյն) այս շնորհալի նկարիչը լքած է այսօր իր վրձինը:

Խըսթընը, պարզ ալ մէկ ու լուսաւոր (Արձան):

Նոր յայտնութիւններէն յիշենք՝ Պոլիկեանը, գորաւոր եւ աշխատուած գծագրութեամբ աշխատող:

Հրայրը, որուն արտատոմբ անձը կը ճառագայթեն շարունակ,

Մ. Պալլեզեանը, որուն քով ուղարկութիւն կը գրաւէ պարզութիւնը գեղարարական մթնոլորտի մը մէջ:

Գազանեանը: Անմիտութեան մթնոլորտ մը, ու փնտկտումներ սիրտ կը ճշխեն, մեղք որ գորդարուեստի հետքեր կը տկարացնեն այդ մթնոլորտը:

Առաջին տարին է եւ քաղաքաբնոր արուեստի սիրահարներ կըցաւ քաշել այս ցուցանիշէն, քաղաքիս լաւագոյն արուեստագէտներն ու արուեստը գնահատողները հիացմունքով կանդատին կարգ մը գործերու տեղեւ ու մեկնեցան՝ տպարարուած Հայ ստեղծագործ մտքէն:

Արժէ կրկնել ամէն տարի, միշտ նոր փայլ մը տալով այս ձեռնարկին:

« ԿՈՍԻՏԱՍ ԵՐԳՉԱՒՈՒՄԻ » ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԵՐԳԸ

Ձորոտ տարուան աւանդութիւն մը՝ Վերմի-
տաձ երգչախումբը, խմբավարը՝ Անթիլիանի
դպրեմանքին երաժշտութեան երիտասարդ ուսու-
ցիչը՝ Գէորգ Գանասարեան:

Պահանջը մը զոհացում տալու համար հը-
րապարակ էլան այս երգչախումբը զբնաբաց ըն-
դունուեցաւ տակաւին Բ. Կանաչեանի հմայքին
տակ՝ զանուշ երաժշտաւէր հայ հասարակա-
թեան կողմէ, որ յուսադրուեցաւ առաջին ատրին
եւ յուսալիք չէ եղած ցորո: Սակայն՝ երանա-
լնորհ Զարեհ Ա. Կաթողիկոսի յիշատակին նուիր-
ուած այս տարուան համերգը (30 Մայիս, Հինգ-
շաբթի զինչի մամը 21-ին, Ամերիկեան Համալը-
ստրանի Տէփուրին մէջ), որ կը վայելէր բարձր
հովանաւորութիւնը Կիլիկիոյ Նոր Վեհափառին՝
Տ. Տ. Խորէն Ա. Կաթողիկոսի՝ մզնոց մեղ կարգ
մը խորհրդանշանից եւ հաստատումներու:

Ա) Վախճանեալ Վեհափառի յիշատակին նը-
ւիրուած ըլլալու հանգամանքով իսկ՝ համերգը
կ'ենթադրէր կրօնաբայր ու արամահունչ երգեր:
Սակայն անգամ մը եւս համոզուած դարձաւ որ
կրօնական երգերը կը պահեն իրենց միասնական
եւ խորունկ ազդումը՝ լոկ եկեղեցւոյ կամար-
ներուն տակ, երբ երգողներուն եւ ունկնդիրնե-
րուն հոգիները հաղորդակց են սաստաւածային
խորհուրդին: Որով՝ նման համերգներու յայտա-
դրինքին աշուհեանէն պէտք է ըլլան քաջակա-
նայ:

Բ) Քերթնուած մը յաջողութեամբ կը վերած-
ուի երգի ու երաժշտութեան, երբ երգահանը
նոյն թափանցել քերթուածի առանձնայատուկ
խորհուրդին եւ տայ իւրաքանչիւր բառի մայնա-
կան հարազատ խմբաւոր: Այսպէս որքան ալ յա-
ջող յորինում՝ երգ ու խոսք չեն դառնար իրա-
րու միտ ու սկզբ, չեն խանգարուի ունկնդիր
հասարակութիւնը: Նման երգ մըն է Ե. Պէրպէր-
եանի «Լուսաւորչի Կանթիղը» (Ոտք՝ Ե. Թու-
մանեանի), որ իմացական արուեստով եւ եւ-
րոպական թեքիքով չի համապատասխանէր զա-
հալու հայոց բանաստեղծին զերազանցօրէն
հայադրում ուղիին: Որով՝ խմբավարին առջեւ կը
շարունակ յայտագրին երգերը ընտրելու յոյժ կարե-
ւոր ու փափուկ հարցը:

Գ) Յաջող մեկնում մը՝ մեծ չափով կը նը-
պասակ կարճ վաղի մրցողի մը յաջմանակին:
Միեւնոյն է՝ երգի պարագային, վճռական ու
փայլուն մուտք մը անմիջապէս իրեն կը կապէ
ունկնդիրը: Քանի մը երգերու պարագային (Տէր
Ողորմած, Գութաները-Քաղհաները) երգչախումբ-

ըն չկրցաւ օգտուիլ այս դրուականին:

Դ) Երիտասարդ խմբավարը հնարաւոր ար-
դիւնքը քաղեց իրեն արամադրուած ուժերէն, ու-
րոնցմէ ուշադրաւ էին մենեղողները՝ Օր. Յ.
Յովսէփեան եւ Պր. Վ. Գարապետեան: Առա-
ջինին՝ քիչ մը աւելի համարմանութիւն եւ երկ-
րորդին՝ մայրի մշտնութեամբ, եւ երկուքն ալ կը
զառնան զօրաւոր սիւները երգչախումբին: Բայց,
կը թուի թէ խումբը, ընդհանուր կերպով, պէտք
ունի նախ լաւապէս սերտելու եւ ըմբռնելու բա-
սերուն իմաստը, երգին տարողութիւնը, ապա
միայն մեղմարկելու զանոնք երգչախումբին վարժա-
թեան, որպէսզի բառ ու մայր վերածուին տղ-
րումի նախ երգողներու արտին մէջ, հուսկ ետքը
բուն կերպով վարակելու համար ներկաները:

Ե) Գէորգ Գանասարեան կրցած է քաղաքին
երիտասարդ ու արակեալ ուժերը համախմբել իր
շուրջ: Այսպէս է որ՝ յայտագրի երկրորդ մա-
սին մէջ ունկնդրեցինք Տիկ. Ա. Փէշիվանեանը,
Պր. Ա. Կիրակոսեանը, Օր. Մ. Միսաեանը, Պր.
Պ. Ճեղախանը:

Տիկ. Ա. Փէշիվանեան ծանօթ երգչուհի մըն
է այլեւս, կերթ ու հանելի մայրով ու թեթեա-
րին վարակելի զոյով: Բայց Պ. Ճեղախանի ընկե-
րակցութեամբ իր մենակատարումներէն՝ կրցաւ
երգչախումբին ազդեցութեան քակուղ մայրական
հարազատ ու անպանդա արտի թրթռումն ըլլալ:
Բ. Կանաչեանի Օրոքին մէջ:

Պր. Ա. Կիրակոսեան հասաւ իր հարուստ
մայրին ու թեքիքի չափանիւն՝ Կոստասի
կոնցիլին մէջ:

Օր. Մ. Միսաեան մարդուած մայր մըն է,
եւ ընտելանալով երգչախումբին՝ կընայ անոր
լաւագոյն տարրերէն մէկն ըլլալ:

Պր. Պողոտ Ճեղախան, ծանօթ նաեւ որպէս
երաժշտութիւն յորինող (Փոփօքիքիւր) օրէի եւ
դաշնակի վրայ լաւապէս կատարեց մենեղողնե-
րուն ընկերակցի իր դերը:

Բ. Կանաչեան անցաւ այս ափերէն՝ կոնա-
չութիւն մընալ իր հարկ: Իրմէ ետք երաժշտ-
տութիւնը չի մնար երաշտ զեանի, եթէ Վերմի-
տաձ երգչախումբը ցուցարեւի անհրաժեշտ ճի-
ղը, աշխատանքն ու յարատեւութիւնը, որպէսզի
չմնայ տեղայնի մէջ ու արդարացնէ իր վրայ
զրուած յոյսերը:

Յ. Գ.

ՏԻԳՐԱՆ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ ԵՐԳԱՎԱՆԴԵՍԸ

Յուզումն էկու բեմ, երիտասարդ պարիթոնը՝ Տիգրան ժամկույնան, զոր գացած էինք ունկերդերէլու՝ արգալանալի ակնկալութիւններով։ Ժրնհի միջազգային մրցանքին լուսագոյններու կարգին դասուած՝ կու գար Պոլսէն, այնտեղի ունկերդերէն խանդավառ արտայայտութիւններէն երկրով իր հետ։ Իսկ ն. Վսեմութիւնը, իրանանի վարչապետ Ռաշիտ Պէյ Բարամէ՝ չէր զըլացած իր բարձր հովանաւորութիւնը։

Յայտագրի առաջին մասին մէջ, յատկացուած երթուղան երկերու՝ Տիգրան ժամկույնան մենակատարեց Սթրասբուրգէն, Հանսելէն, Գլուսէն, Մասսընէն, Սէսսոյէն, Պոտտինէն, Շուպէն և Վերտինէն, փորձելով տալ երգերուն ներքին տուածը, բառերուն ու խաղերուն հնչական հզորութիւնը, սակայն ոչ մէկ տեղ կըցար խանդավառութիւնը հասցնել լրումի։ Յայտագրի երկրորդ մասին, բոլորն ալ հայերէն երգեր այս անգամ (Կանտիկան, Տիգրանեան, Հ. Պէրպլեան, Կոմիտաս, Պատմագրեան, Սաթեան և Զուհանեան) ասպնցինք աւելի արդուածի և հարազատ արտայայտութեան։ Վերջինին, Հոր-

հորի Արիային մէջ որոշ չափով դասու ինքզինք, բայց յայտագիրը հասած էր արդէն իր վախճանին և ունկերդերը կը մեկնէին երաժշտական վայելքը հողիններէն քաղակալ։

Տիգրան ժամկույնանի չի պակսիր ներշնչումը։ Պայնը խորունկ է ու զօրաւոր, բայց կարճ է շունչը, կարճ նաեւ՝ ժախական միջոցը (էնթիլովու)։ Ունի երգչի յատկութիւններ, բայց անհրաժեշտ է իրեն տակաւին երգերու խոր ուսումնասիրութիւն, շունչի խորացում և մշակում, ու նաեւ՝ դաշնակի վրայ աւելի ճարտար ընկերակից։

Անպարտաւոր մենագոյն թշնամին է երիտասարդ արուեստագէտներուն։ Կը քանդէ յաճախ ճշմարիտ աղանդներ։

Սթրասբուրգի արահին մէջ, Յունիս մէկի գիւլերուն իր առաջին ունկերութիւնը, եղաւ փորձաքար մը, թելադրութիւններով լի, որմէ կընայ օդուելի երիտասարդ երգչի և աշխատանքով գրուել ունկերի հասարակութեան ու շարքութիւնն ու համակրանքը՝ յաշորդի։

Յ. Գ.

Արուեստագէտներու և արուեստի խումբերու գործունէութեան այս քեղում ամսուայ առիթով կը մնար արտայայտուիլ հոս Յուն. Համագգայի-նի «Գնալ» քերի ու պարի խումբին տարեկան ելույթի մասին (տեղի ունեցած Յունիս 13, 14 և 16-ին, Գոլէժ տը լա Սալի մէջ), բայց «Բազին»-ի հրատարակութեան կապակցութեամբ ձեռնարկը ուշ կատարուած ըլլալուն, պիտի անդրադառնանք յաջորդ թիւով։

ԲԱՊԻՆ

Կղճարներ

ՀԱՅԵՐԷՆԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Վերնագիրը թույլ չթուի քերականական կամ լեզուաբանական, շատ գործնական ու անմիջական հարցի մը մասին է, հայերէն լեզուի գործածութիւնը փոստ-հեռագրատան մէջ, հայերէն տառերով:

Մի գարմանաք, արտառոց պաշտօնարներ կամ մտածումներ չէ որ կ'արտայայտենք, եւ մենք չենք որ կ'արտայայտենք. մենք կ'արձագանգենք միայն:

Բաց նաժակի մը կապակցութեամբ էր այս նախաբանը. բանաստեղծ Վաղարշակ Նորենցն է գրողը, սակայն ինք առանձին չէ, երկու ուրիշ բանաստեղծներ կ'ընկերանան իրեն իր պահանջին մէջ՝ Գեղամ Սարեան եւ Համօ Սահեան:

Բաց նաժակը ուղղուած է «Հայկական ՍՍՌ կապի միեմսեր ընկ. թ». Միեմսեանի»: «Կապի միեմսեր»ը հաղորդակցութեան նախաբանն է, կամ աւելի ճիշդ, փոստ-հեռագրական նախաբանը:

Ահա բաց նաժակը, որ լոյս տեսած է «Գրական Թերթ»ի 1963 Փետրուար 15-ի թիւին մէջ, մեր ձեռքը ուշ հասած:

Յարգելի ընկ. Միմսեան

Աւելի քան մէկ տարի առաջ մենք Ձեզ նամակ էինք գրել այն մասին, որ մեր հանրապետութեան սահմաններում հայերէն տպուող հեռագրերը մեքենագրուած են ռուսերէն տառերով եւ աղտաղումներով են յանձնուած հասցէատերերին: Յայտնի է, որ ռուսական այբուբենում չկան հայկական հնչիւններն արտայայտող մի շարք տառեր, հանգամանք, որ շատ է վնասում հեռագրերը ճիշդ հաղորդելուն: Կարելի է քաղաքիւ օրինակներ բերել ցայց տալու քէ ինչ այլանդակութիւններով են տեղ հասնում հայերէն հեռագրերը:

Ելնելով սրանից, մենք առաջարկել էինք, որ մեր փոստ-հեռագրատան բաժանմունքներում, գործածութեան մէջ դրուեն մաշի հայերէն գրամեքենաներ եւ դրանով կանոնաւորուի հանրապետութեան սահմաններում հայերէն տպուող հեռագրերի վայելուչ յանձնումը հասցէատերերին:

Մեր առաջարկը մինչեւ այսօր մնացել է ձայն բարբառոյ յանապատի:

Մենք դժուարանում ենք այդ վերաբերմունքի մէջ տեսնել արեւմտահայ հայաց լեզուի եւ հայերէն հեռագրեր տալու եւ ստացող քաղաքացիների նկատմամբ, սակայն եւ չենք կարողանում բացատրել այդ հարցը կարգաւորելու նկատմամբ ձեր անտարբերութիւնը:

Այս բաց նամակով մենք կրկին հարկ ենք համարում յիշեցնել Ձեզ

մեր առաջարկը, եւ յոյս ունենք, որ շուտափոյթ կերպով միջոցներ ձեռք կ'առնէք եւ մեր հանրապետութեան փաստ-հեռագրատւան բաժանմունքները կ'ապահովէք հայերէն գրամեքենաներով:

ԳԵՂԱՄ ՍԱՐԵԱՆ
ՎԱՂԱՐՇԱԿ ՆՈՐԵՆՑ
ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ

Իրեւելէս որ անբացատրելի երեւոյթ է երեք բանաստեղծներուն մատնանշած երեւոյթը, եւ բազմաթիւ տեսանկիւններէ մօտենալով՝ անբացատրելի, բազմաթիւ անգամներ անբացատրելի:

Անբացատրելի՝ նախ եւ առաջ արհամարհանքը հայերէն լեզուի հանդէպ, ՀԱՅԱՍՏԱՆԻ փոստ-հեռագրական ՆԱԽԱՐԱՐԻՆ ՈՒ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԷ. որքան ալ երեք բանաստեղծները զգուշացան նախարարի վերաբերմունքի մէջ արհամարհանք տեսնել հայոց լեզուի եւ հայերէն հեռագրողներին նկատմամբ», այդ արհամարհանքը այնքան բացայայտ է, որ երեք բանաստեղծները կ'արձանագրեն զայն, իրենց «Հաւատալու զգուշութեամբ»:

Անբացատրելի նաեւ Հայաստանի վարչապետին, կամ նախարարներուն մինչեւ հիմա անդրադարձած չըլլալը այս իրողութեան, եւ սրբազրած չըլլալը զայն:

Անբացատրելի՝ փոստ-հեռագրատան բարձրաստիճան պաշտօնեաներուն մատնանշած չըլլալը ցարդ, այդ աղաղակող անարդարութիւնը:

Անբացատրելի՝ ռուսերէն գրերով, հայերէն լեզուով հեռագիր ըստացողներուն համակերպութիւնը, այսքան տարիներու լռութիւնը (ի դէպ, քանի՞ տարի է որ Հայաստանի մէջ տրուող եւ ստացուող հայերէն հեռագիրները ռուսերէն տառերով կը խմբագրուին...)

Անբացատրելի՝ ձեւով ազգային, խորքով միջազգային տեսակէտը պաշտպանողներուն հետաքրքրուած չըլլալը ցարդ, ԷՍԳԷՍ ՁԵԻԸ ԵՂՈՂ ԼԵՋՈՒԻՆ ՁԳՈՐԾՄԵՐՈՒԵԼՈՎԸ... Եթէ հայերէն այս ու բնէն ալ պիտի չգործածուի Հայաստանի պաշտօնատեղծներուն մէջ, այն ալ հայերէն խմբագրուած հեռագիրները զրկել ու ստանալու համար, հազա ինչպէ՞ս պիտի պահպանուի ՁԵԻԸ գէթ ազգայինին:

Անբացատրելի նաեւ. մեր պատուական բանաստեղծներուն երկարատեւ լռութիւնը այս մասին. երեւի մինչեւ անցեալ տարի, իրենցմէ ոչ մէկը հայերէն խմբագրուած եւ ռուսատառ հեռագիր չէ ստացած:

Անբացատրելի՝ իրենց անցեալ տարուայ դիմումագրին անպատասխան մնալը:

Անբացատրելի մանաւանդ իրենց ամբողջ տարի մը համբերելը, տարի մը ամբողջ պատասխանի կամ կարգադրութեան մը սպասելը:

Այսքան մեծ թուով անբացատրելի բաներուն դոյութիւն ունենալը անբացատրելի՞ է արդեօք...:

Մ. Ջ.

ՆԱՄԱԿՆԵՐ

Ստորև կը հրատարակենք երկու նամակներ, Գ. Պէշկեթիւրեանի «Սրինգսը քերթուածին վերաբերեալ» Առաջին նամակը ճշգրտւածն է, զորում՝ մեր աշխատակից Բ. Քաշեանի կողմէ, ներքորը գրուած է պարոն Լ. Կ. Լիւլէճեանի կողմէ եւ ուղղուած՝ «Բազմեթին եւ Բ. Քաշեանին»:

Յայտենք, որ պարոն Լ. Կ. Լիւլէճեան (եղբայրը բաղձաւորատակ Փրոֆ. Տ. Կ. Լիւլէճեանի) 58 տարի է վեր խմբագրին է Ֆրէզնոյի «Մշակ» թերթին եւ հրկարածեալ աշխատակից մը «Հայրենիք» ամսագրին ուր երեւցած է նորայր-բաղձաւորատու թեմաք:

ՃՇԳՈՒՄ ՄԸ

«Բազմեթ» 1963 Ապրիլի թիւին մէջ հրատարակուած էր իմ «Դրական Մանրութիւն» ի մասին Գարեգին Պէշկեթիւրեանի «Սրինգ» փորձումին: Ըսած էի, թէ «Սրինգ»ը առաջին անգամ *պակասաւոր ձեւով* լոյս տեսած էր Գր. Զօհրապի եւ Հր. Ասատուրի «Մասիս»ին մէջ, 1892 Սեպտեմբեր 19-ին, եւ թէ առաջին ու վեցերորդ ֆառեակներուն տակ, մէկ սօղի վրայ, բազմակետեր դրուած էին, ինչ որ կը նշանակէր յայտնապէս, թէ գեղջուած մասեր կային Պէշկեթիւրեանի միակ ծանօթ փորձումին մէջ: Ատենին, «Եռասար» ամսագրի 1947 Հոկտեմբերի թիւով, գրած էի արդէն այս մասին:

Կը յիշեմ, որ այն ատենները «Դրասէր ոմն» հաստատեց իմ կասկածներս եւ յայտնեց, թէ ամբողջ փորձումը կը բաղկանար ո՛չ թէ ութ ֆառեակէ (32 սող), ինչպէս հրատարակուած էր «Մասիս»ի մէջ, այլ ճշգիւ 24 ֆառեակէ (96 սող): Արդ՝ 32 սողը կար, 64 սողը չկար: Ի վերջոյ եկած էի այն եզրակացութեան, որ այդ 64 սողը պէտք էր ընդմիջոյ կորսուած նկատել:

Վերջերս պատահմամբ ձեռքս անցաւ Արամ Անտոնեանի «Ծաղիկ» կիսամանկ հանդէսը, որուն 1904 Դեկտեմբեր 31-ի թիւով հրատարակուած էր Պէշկեթիւրեանի փորձումը ամբողջութեամբ, Ռուբէն Որբերեանի կենսագրական ծանօթութիւններով: Բայց այս անգամ ալ տեսայ, որ «Սրինգ»ը կը բաղկանար ո՛չ թէ 24 ֆառեակէ (96 սող), այլ ճիշդ ու ճիշդ 28 ֆառեակէ (112 սող): Այս կը նշանակէ ուրեմն, որ

ա. «Մասիս»ի մէջ գեղջուած մասերը պէտք է կորսուած նկատել:

բ. ճիշդ չէ «Դրասէր ոմն»ի այն հաւաստիքը, թէ Պէշկեթիւրեանի փորձումը կը բաղկանար 24 ֆառեակէ կամ 96 սողէ:

Ճիշդը այն է, որ «Սրինգ»ը 112 սողնոց (28 ֆառեակէ) երկար փորձումն էր, որ տեղ-տեղ հատուածներ միայն հրատարակուած են անկէ:

Ներկայ ճշգրտմը կրնայ օգտակար ըլլալ գրականութեամբ եւ գրականութեան պատմութեամբ հետաքրքրուողներուն համար: Կրնայի արտագրել ամբողջ փորձումը, եթէ վստահ ըլլայի, որ այս տեսակ մանր-մունր բաներով շահագրգռուողներ կան գեռ մեր մէջ:

Բ. ԹԱՇԵԱՆ

Գահիրէ:

«Բագին»ի Պատ. Խմբագրութեան
 և Պրն. Բ. Թաշեանի

«Բագին»ի, Բ. տարի, Ապրիլ 4 համարին մէջ կարդացի, Պրն. Բ. Թաշեանի «Գրական Մանրութեան» վերնագրին տակ բանաստեղծ Գաբրիել Պէշ-կէօթիւրեանի «Մըրիս»ի մասին:

1939-ին բացառիկ քիւ մը նաւորեցի բանաստեղծին մահուան յիս-նամակին առթիւ: Այդ քիւն մէջ լոյս տեսած են զանազան նկարներ, բա-նաստեղծութիւններ, նամակներ, տապանագիրք, և *Մըրիս*, լման, բանաս-տեղծին ճեպագիրը: Ձեռագիրք կը մնայ մօտ: Այդ տարի Պրն. Մ. Պարսամեան *Մշակէն* մասեր առնելով իր «Կեանք և Արուեստ» քննարկին մէջ հրատարակեց:

Բանաստեղծը հօրս աշակերտը եղած է և Եփրատ Գալէնի երգի եւ անգլիերէն լեզուի ուսուցիչը:

Մայիս 7, 1963
 Տրեզնօ - Գալիֆօրնիա

Ձերգ՝ Յարգամօֆ
 Լ. Կ. Լիւիլէճեան

ՎՐԻՊԱԿ

Ընթերցողներէն կը խնդրուի սրբագրել Վ. Օշականի «Ներողական եւ Ամերիկեան Արդի Գրականութիւն» յօդուածին («Բագին», Թիւ 6) մէջի հե-տեւեալ վրիպակները:—

1.— էջ 56, Բ. սիւնակ, *Նոթագրութիւն Թիւ 5: «Նոր Վէպ շարժումը գլխաւորեցին» տողին պէտք է կցուի հետեւեալ ցանկը.*

Կը ներկայացնեն ցանկը հեղինակներուն որոնք մինչեւ 1958 Նոր Վէպ շարժումը գլխաւորեցին:— Michel Butor (ծն. 1926) Alain, Robbe-Grillet (ծն. 1922), Nathalie Sarraute, Samuel Beckett (ծն. 1906), Jean Cayrol (ծն. 1911), Marguerite Duras (ծն. 1914), Claude Simon (ծն. 1913), Robert Pinget (ծն. 1920), Kateb Yacine (ծն. 1929), Jean Lagrolet (ծն. 1914), Maurice Blanchot. Այս խումբին միացան *վերջը:—* Philippe Sollers, Claude, Ollier, Claude Mauriac, Jean Thibaudau, Jean Ricardou, Castelain, Henri Thomas, Louis-René des Forêts,

2.— էջ 57, Բ. սիւնակ, տող 27. *երկու բառը կարդալ երկերու*

3.— էջ 59, Ա. սիւնակ, տող 11. *անձնական բառը կարդալ անանձնա-կան*

4.— էջ 61, Բ. սիւնակ, տող 17-ի (14 թիւին կը համապատասխանէ *հետեւեալ Նոթագրութիւնը:—* 14) Նայն տեղը

Հետեւաբար, «Կը սիրեմ սինիման: Կը հաւատամ...» Նոթագրութեան Թիւ 14 չէ՝ այլ 15, որ կը վերաբերի էջ 62-ի. Ա. սիւնակի 37-րդ տողի Թիւ 15-ին:

5.— էջ 62, Ա. սիւնակ, *Նոթագրութիւն Թիւ 15-ը, որ կը սկսի «Յար-գելի Պրն. Լ. Գարմէն» բառերով, պէտք է փոխել Թիւ 16-ի, եւ որ կը վե-րաբերի 64-րդ էջի Բ. սիւնակի 9-րդ տողի օրբիք-ը բառին:*

6.— էջ 64, Ա. սիւնակ, տող 30: *«Ոչ թէ ոգին» գրադէտը կը լքէ իր» բառերը պէտք է վերցուին ու տեղը գրուին «կեանքի սղեղ, աղտոտ ու ըս-տորին» բառերը:*

ՔԱՂԻՆ ԿԸ ՆՈՒՐԵՆ

- Պրն. Ներսէս Տօնիկեան (Հալէպ) Պրն. Յակոբ Քէլէճեանի (Ֆրանսա) :
- Պրն. Հրայր Պօյանեան (Պէյրութ) Ս.Ս.Ն Քհնյ. Յակոբեանի (Ֆիլատել-ֆիա) :

Զ Ե Կ Ո Յ Յ

**«ՀԱՄԱԶԳԱՅԻՆ»Ի ԱՆԱՀԻՏ ՄՐՑԱՆԱԿԻ
ՑԱԶՆԱԽՈՒՄԲԻՆ**

Եւանջիստեանս իր 27 Մայիս 1963-ի ժողովին որոշեց 1962-ին լոյս տեսած լաւագոյն գրական երկի մրցանակը տալ Արամ Հայկադին՝ իր «Ձորոտ Աշխարհ» անունը կրող հատորին համար :

Ձեր տպագրական ամէն տեսակ գործերուն համար դիմեցէ՛ք

ՏՊԱՐԱՆ ԱՏԼԱՍ

որ սարքաւորուած է արդիական մեքենաներով եւ զոյգ տողաշար-ներով :

Մասնաւորաբար կը ստանձնէ գիրքերու տպագրութիւն՝ Լի-րանանի ըէ արտասահմանի համար :

Մագաւր եւ անրեյի տպագրութիւն
Խղնաւիտ գործ

Հասցէ.-

ՏՊԱՐԱՆ ԱՏԼԱՍ
Հեռ. 245402
Նամակատուք՝ 2745
Ռիւ տը Ֆրանս
Պէյրութ - Լիբանան

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵՐԻՆ

**ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՏՈՒԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ 2 Լ. ՈՍԿԻ**



Վարչութեան հասցէ. —

**DIKRAN KOUYOUMDJIAN
P. B. 587, Beyrouth — Liban**